

Արցախի ղետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Գիտական տեղեկագիր

Ученые записки

Scientific Notes

1(5)

2002



Ստեփանակերտ

Степанакерт

Stepanakert

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Գիտական տեղեկագիր

Ученые записки

Scientific Notes

1(5)
2002

Ստեփանակերտ

Степанакерт

Stepanakert

Հրատարակվում է 1998 թ.

Издаётся с 1998 г.

Խմբագրական կոլեգիա

Ադամյան Կ. Ն. (գլխ. խմբագիր), Աբրահամյան Ա. Ն. (գլխ. խմբագրի տեղակալ), Խանյան Ս. Ա. (պատ. քարտուղար), Ադամբեկյան Ա. Գ., Մարտիրոսյան Ռ. Մ., Ավանեսյան Վ. Գ., Ավագյան Ռ. Թ., Գաղապյան Ս. Վ., Հակոբյան Գ. Ա., Աղալովյան Լ. Ա., Միրզոյան Վ. Ս., Արամյան Կ. Ս.:

Редакционная коллегия

Адамян К. Н. (гл. редактор), Абрамян А. Н. (зам. гл. редактора), Ханян С. А. (отв. секретарь), Аганбекян А. Г., Мартиросян Р. М., Аванесян В. Г., Авакян Р. Т., Дадаян С. В., Акопян Г. А., Агаловян Л. А., Мирзоян В. С., Арамян К. С.

Editorial

Adamian K. N. (Editorial-chief), Abramian A. N. (Vice Editorial-chief), Khanian S. A. (Responsible Secretary), Aganbekian A. G., Martirosian R. M., Avanesian V. G., Avakian R. T., Dadaian S. V., Hakobian G. A., Aghalovian L. A., Mirzoian V. S., Aramian K. S.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ հարկային քաղաքականությունը ներդրումային միջավայրում

Հ.Շ. Ղափրամանյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության զարգացման կարևոր նախապայման է հայրենական և օտարերկրյա ներդրումների խթանումը: Որպես հայրենական գործարար միջավայրի առավելություններ՝ կարելի է մշել աշխատուժի արժեքը, աշխատուժի որակավորումը, շահույթի հայրենադարձումը, արտադրության կարգավորումը, սղածի ցածր մակարդակը, սոցիալական միջավայրը, բնական ռեսուրսների բավարար քանակությունը, սպառողական շուկայի թեև փոքր, բայց հագեցվածության կետից հեռու լինելը: Միաժամանակ հնարավոր չէ անտեսել ԼՂՀ-ում ներդրումային ակտիվության վրա բացասաբար ազդող գործոնները՝ հանրապետության քաղաքական անկայունությունը՝ միջազգային համրության կողմից չճանաչված լինելը, հարկային համակարգի անկատարությունը, ֆինանսավորման աղբյուրների անբավարարությունը, վարկերի ստացման դժվարությունները, դրանց գուտ առևտրային ուղղվածությունը, տրանսպորտային, կապի հիմնահարցերը, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման անբավարար մակարդակը:

Հարկային քաղաքականության տեսանկյունից արտադրական ոլորտում ներդրումային գործունեության ակտիվացման բարենպաստ պայմանների ստեղծումը նախ և առաջ ենթադրում է հարկային արտոնությունների կիրառում: Հարկային արտոնությունները կարող են դրսևորվել հարկերի վճարման ժամկետների հետաձգման, հարկային վարկերի, զեղչերի և հարկումից ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթի այն մասի ազատման ձևով, որը ուղղվում է կապիտալ ներդրումների ֆինանսավորմանը, սեփական արտադրական բազայի ընդլայնմանը, բնակարանային շինարարությանը: Մասնավորապես, ԼՂՀ-ում կարելի է կիրառել ներդրումային հարկային վարկը, ինչը նախատեսում է որոշակի ժամանակահատվածում և թույլատրելի սահմաններում շահութահարկի (եկամտահարկի), տեղական հարկերի նվազեցում, հետագայում դրանց՝ վարկի և հաշվարկված տոկոսների ձևով փոխային մարում: Ի տարբերություն այլ արտոնությունների՝ հարկային ներդրումային վարկը համղես է գալիս որպես հարկային պարտավորությունների ուղղակի կրճատում և հաշվի է առնում հարկատուի գույքային կացությունը: Եթե հարկային զեղչերի կիրառումը ձեռնառու է բարձր դրույքաչափերով հարկվող եկամուտ ունեցողների համար, ապա հարկային վարկի կիրառումը՝ ցածր եկամուտներով հարկատուների համար:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ներդրումային ակտիվության վրա ազդում են ոչ այնքան հարկերի բարձր դրույքաչափերը, որքան հարկային համակարգի անկայունությունը,

հետադարձ ուժ ունեցող օրենքների ընդունումը, հարկային հարաբերությունների բարդությունը, հարկային օրենսդրության խախտման համար կիրառվող կոշտ ֆինանսական պատժամիջոցները: Պատերազմական գործողությունների և անցումային վերափոխումների հետևանքով՝ հայրենական և բարձր ռիսկայնության պատճառով՝ օտարերկրյա սահմանափակ ներդրումների խրախուսման համար ԼՂՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ ներդրումային գործունեության օրենսդրական կարգավորմանն ու ազատականացված, հրապտիչ հարկային դաշտի ձևավորմանը: Այսօր օտարերկրյա ներդրումները ԼՂՀ մուտք են գործում առանց որևէ մասնավոր հաստատման կամ որոշակի ցուցանիշով քննություն անցնելու, ԼՂՀ օրենսդրությունը հավասար պայմաններ է սահմանում ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրողների կողմից նոր ձեռնարկատիրական միավոր գրանցելու և լիցենզիա ստանալու համար, ըստ որում, գրանցման ծախսերը բավական ցածր են:

1999թ. կատարվեցին փոփոխություններ ԼՂՀ-ում գործող հարկային օրենսդրությունում՝ շեշտը դնելով ներդրումային քաղաքականությանը վերաբերող դրույթների վերանայմանը: Սահմանվեց ներդրում ունեցող ռեզիդենտների հարկման և արտոնությունների սանդղակ, ըստ որի՝ եթե ռեզիդենտի (բացառությամբ բանկերի) կանոնադրական կապիտալում փաստացի կատարված ներդրման ընդհանուր արժեքը (գնահատված ԼՂՀ կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի կամ անկախ աուդիտի կողմից) 2000 Թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 25 մլն. դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ առաջին մեկ տարում 100 տոկոսով, իսկ հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսով, 50-ից մինչև 100 մլն. փաստացի ներդրում կատարելու դեպքում՝ 1 տարին՝ 100 տոկոսի չափով, իսկ հետագա երեք տարիներին՝ 50 տոկոսով, 100-ից մինչև 200 մլն. դրամի ներդրման դեպքում՝ առաջին երկու տարին՝ 100 տոկոսի չափով, իսկ հետագա երեք տարիների ընթացքում՝ 50 տոկոսով, 300 մլն. դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում՝ առաջին չորս տարիներին՝ 100 տոկոսով, իսկ հետագա երեք տարիների ընթացքում՝ 50 տոկոսով: Միաժամանակ, ճշված արտոնությունը չի կիրառվում այն հարկատուների համար, որոնք սահմանված արտոնության ժամկետում լուծարվում են: Տվյալ դեպքում արտոնության ժամկետում հարկատուի լուծարման ժամանակ շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով՝ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար: Ըստ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի՝ ներդրում է համարվում հարկատուի կանոնադրական կապիտալի ձևավորմանը և համալրմանն ուղղված ակտիվների ներհոսքը կամ պարտավորությունների նվազումը, ինչպես նաև պետական գույքի մասնավերցումը: Պարտադիր պայման է հանդիսանում

գույքային և արտոնությո
Հարև
ձեռնարկութ
ակտերով
խրախուսան
հայեցողութ
րության ին
Ներդրում
տեսանկյուն
դրույթաչափ
1-ից կիրառ
հունվարի
դրույթաչափ
դրույթաչափ
կողմից վճ
հաշվարկվո
չափով՝ նալ
վճարների
նկատմամբ
13տոկոս դր
2000
աշխուժաց
բարեփոխո
ԼՂՀ-ում կ
պետական
միջոցների
դոլար, բնա
26.0 մլն. դ
ԱՄՆ դոլար
6.0 մլն. Ա
հաշվին իր

գույքային ներդրումների պետական գրանցումը կամ նոտարական վավերացումը, ըստ դրում, արտոնությունը չի տարածվում ոչ նյութական ակտիվներով ներդրումների նկատմամբ:

Հարկ է նշել, որ մինչև 1998թ. հունվարի 1-ը օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին և բանկերին շահութահարկի գծով օրենքով կամ այլ իրավական ակտերով արտոնություններ տրված չինելու դեպքում մինչև տվյալ օրենքով կամ այլ իրավական ակտերով դրանց համար սահմանված ժամկետի ավարտը հարկատուն իր հայեցողությամբ հարկային պետական վարչության մարմիններ ներկայացվող հայտարարության հիման վրա կարող է օգտվել վերը նշված արտոնությունից:

Ներդրումների աշխուժացման, ձեռնարկությունների ֆինանսական ներուժի ավելացման տեսանկյունից առավել էական են շահութահարկի և սոցիալական պարտադիր վճարների դրույքաչափերի իջեցումը: Մասնավորապես, ԼՂՀ-ում շահութահարկի գծով 2001թ. հունվարի 1-ից կիրառվում է հարկվող շահույթի նկատմամբ միասնական 10 տոկոս դրույքաչափ, 2002թ. հունվարի 1-ից՝ 5 տոկոս դրույքաչափ՝ նախկինում գործող միջին հաշվով 25 տոկոս դրույքաչափի փոխարեն: Հողի հարկի գծով 2001թ. հունվարի 1-ից կիրառվում է 6 տոկոս դրույքաչափ՝ նախկինում գործող 15 տոկոսի փոխարեն: Գյուղացիական տնտեսությունների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը 2001թ. հունվարի 1-ից հաշվարկվում է սեփականություն համարվող հողատարածքների զուտ եկամտի 5 տոկոսի չափով՝ նախկինում գործող 12 տոկոսի փոխարեն: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների նկատմամբ 2001թ. հունվարի 1-ից կիրառվում է 15 տոկոս դրույքաչափը, 2002թ. հունվարի 1-ից՝ 13տոկոս դրույքաչափ՝ նախկինում գործող 28 տոկոսի փոխարեն:

2000թ. հունվարի 1-ից հետո ներդրումների իրականացման ոլորտում տեղի ունեցավ աշխուժացում, ինչն էլ վկայում է ներդրումային քաղաքականության ոլորտում կատարված բարեփոխումների արդարացիությունը: 1995-2001թթ. ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին ԼՂՀ-ում կատարվել է մոտ 80.0 մլն. ԱՄՆ դոլարի կապիտալ շինարարություն, այդ թվում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ մոտ 30.0 մլն. դոլար, մարդասիրական օգնության միջոցների հաշվին՝ ավելի քան 20.0 մլն դոլար, կազմակերպությունների հաշվին՝ 2.0 մլն. դոլար, բնակչության միջոցների հաշվին՝ մոտ 2.0 մլն. դոլար և այլ միջոցների հաշվին՝ մոտ 26.0 մլն. դոլար: 1995-2001թվականների ընթացքում ԼՂՀ-ում տրամադրվել է մոտ 22.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որից արդյունաբերությանը՝ 4.4 մլն. ԱՄՆ դոլար, գյուղատնտեսությանը՝ 6.0 մլն. ԱՄՆ դոլար: ԼՂՀ պետական բյուջեի և «Արցախիմվեստ» հիմնդրամի միջոցների հաշվին իրականացվել է ավելի քան 3.5 մլն. ԱՄՆ դոլարի չափով վարկավորում: ԼՂՀ-ում

ամհատույց տրամադրման ձևով մասնավորեցված պետական ձեռնարկություններում
 կատարված ներդրումները 2002թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 1257.0 մլն. դրամ: Հարկ
 է ընդգծել, որ տնտեսության բոլոր ոլորտներում կատարված ներդրումների մեջ մեծ
 տեսակարար կշիռ ունեն օտարերկրյա ներդրումները. 1995-2001թթ. ԼՂՀ-ում դրանց
 մեծությունը կազմում է մոտ 20.0 մլն. ԱՄՆ դոլար: Այսօր արդեն բավական ամուր և վստահելի
 կապեր են հաստատվել ամերիկյան, շվեյցարական, իրանական, լիբանանյան, ավստրալիա-
 կան, Մոնտե-Կառլոյի և ռուսական ինստիտուցիոնալ և մասնավոր ներդրողների
 շրջանակներում, որոնց մի մասը նաև ներկայացնում են այդ երկրների հայկական
 համայնքները, և որոնց միջոցով շարունակվում է ներդրման գործընթացը՝ նախօրոք
 ներդրումային գաղափարներով կազմված բիզնես ծրագրերով: Ամերիկյան օգնության
 շրջանակներում ԼՂՀ տարածքում ծրագրերը իրականացվում են Ամերիկյան Միջազգային
 Զարգացման Գործակալության (USAID) միջոցով: Այս առումով ԼՂՀ գործարարների
 միությունը կարող է դառնալ միջազգային տնտեսական համագործակցության դաշտում
 արդեն ստեղծված ցանցի մի մասը: Գործարարների միությունը, օգտվելով ինչպես
 պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական կապերից, կարող է պայմանագրային
 հիմունքներով առաջարկել ծառայություններ «հրապուրիչ» ներդրումային ծրագրերի, բիզնես-
 տեղեկատվության տարածման, շուկայի և ներդրումային միջավայրի
 ուսումնասիրությունների գծով: ԼՂՀ-ում արդեն գործում են խոշոր ներդրումային ծրագրերով
 երկու տասնյակից ավելի ձեռնարկություններ, ինչպիսիք են հեռահաղորդակցությամբ
 զբաղվող «Ղարաբաղ-Տելեկոմ», փայտամշակմամբ զբաղվող «Էյ-Մի-Վանք-Լես»,
 հյուրանոցային տնտեսություն կազմակերպող «Միրկապ Արմենիա», ոսկերչական իրերի
 արտադրությամբ զբաղվող «Հայկ ժամացույց և ոսկերչություն» փակ բաժնետիրական
 ընկերությունները, համապատասխանաբար՝ 15.0; 1.8; 1.5; 1.2 մլն. ԱՄՆ դոլար օտարերկրյա
 ներդրումներով: Ինչ վերաբերում է հայրենական ներդրումների խրախուսմանը, ապա
 «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով 2001թ. հունվարի 1-ից շահութահարկի գծով
 արտոնություն սահմանվել է բոլոր տեսակի ներդրումներով ձեռնարկությունների համար:
 Շահութահարկի դրույքաչափի օպտիմալ մակարդակի սահմանումը բավական բարդ խնդիր է.
 մի կողմից հարկի բարձր դրույքաչափը ծնում է հարկման բազայի այլ երկիր տեղափոխվելու
 վտանգ, մյուս կողմից՝ ներդրումների խթանման նպատակով հարկի դրույքաչափի նվազեցմանը
 համապատասխանող հարկի չափը վճարվում է ներդրման ծագման երկրում: Հարկման
 առումով կարևոր հիմնահարց է նաև կրկնակի հարկման բացառումը, որը բացասաբար է
 անդրադառնում իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ իր երկրի սահմաններից դուրս

գործունեություն իրականացնելու և այլ եկամուտներ ստանալու գործում շահագրգռվածության վրա: Շուկայական բարեփոխումների ուղու վրա կանգնած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որի տնտեսության զարգացման համար այդքան հրատապ են արտասահմանյան առաջատար տեխնոլոգիաները, լիցենզիաները և այլ ներդրումները, պետք է հետևողականորեն մշակի կրկնակի հարկումից խուսափելու մեխանիզմ: Վերջինս ենթադրում է ԼՂՀ-ում ձեռներեցության խրախուսման նպատակով ներքին այնպիսի հարկային օրենսդրության միաստեղծում, որը թույլ կտա հաշվանցել այլ երկրներում վճարված հարկի գումարները, միաժամանակ մշակել, կնքել և ներդնել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու երկկողմ համաձայնագրեր: Համաձայնագրերի միջոցով կիրականացվի հարկման իրավունքի բաշխումը պետությունների միջև, հարկերի վճարումից խուսափման կանխումը, հարկային խտրականության վերացումը: Կարևոր են նաև պասիվ եկամուտների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման կարգավորումը, քանզի վերջիններս ուղղակիորեն առնչվում են ներդրումների խրախուսմանը: Ըստ Ռ.Լ. Դերմբերգի՝ անհրաժեշտ է առաջնորդվել միջազգային հարկման անկողմնակալության հիմնադրույթով, որը բովանդակում է երեք հիմնական կանոններ՝ կապիտալի արտահանման, կապիտալի ներմուծման և ազգային անկողմնակալության: Բաց տնտեսության ձգտող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար միջազգային շուկաների մերձեցման պայմաններում խնդրահարույց կդառնա կապիտալի գործառնությունների հետ կապված եկամուտների հարկումը: Այնուհայտ է, որ կապիտալի գործառնությունների հետ կապված եկամուտների ազատումը հարկումից լրացուցիչ խնդիրներ է ստեղծում այդ եկամուտների հետ կապված ծախսերի նվազեցման հնարավորության ընձեռման առումով: Ծախսերի նվազեցման հնարավորության բացառման դեպքում ԼՂՀ-ում գրանցված ընկերությունները օտարերկրյա ընկերությունների համեմատ ամրացունակ վիճակում կհայտնվեն:

ԼՂՀ ներդրումների գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներդրումներ հիմնականում կատարվում են սեփականաշնորհված ձեռնարկություններում և տարածքներում: Դա էլ պայմանավորում է պետության կողմից ձեռնարկությունների և տարածքների տրամադրումը ներդրողներին ինչպես չնչին արժեքով՝ հաշվի առնելով ներդրումային ծրագրի գինը, այնպես էլ անհատույց՝ կապված ծրագրի գնից և ճյուղի, բնագավառի անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետության կողմից պարտադրվում է նոր աշխատատեղերի բացում, ծրագրային ժամկետների իրականացում, պետական և սոցիալական խնդիրների լուծման ապահովում, և սեփականության իրավունքը

Дермберг Р.Л. Ме дународное налогообложение - М.Юнити, Булавапет, 1997г

ձեռք է բերվում միայն վերոնշյալ պայմանները կատարելուց հետո:

Այսօրվա դրությամբ Արցախում կա ներդրում հայցող սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունների և տարածքների անհրաժեշտ քանակություն: Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման 2002-2003թ.թ. ծրագրի մասին» ԼՂՀ օրենքի՝ ներդրում հայցող մասնավորեցման առաջարկվող ծրագրում ընդգրկված է պետական բաժնեմաս ունեցող՝ թվով 88 ընկերություն (ըստ ճյուղերի՝ էներգետիկա, էլեկտրոտեխնիկա և ռադիոէլեկտրոնիկա, թեթև արդյունաբերություն, սննդի արդյունաբերություն, ավտոմոբիլային տրանսպորտ ճանապարհաշինություն և շահագործում, շինանյութերի արտադրություն, գյուղատնտեսություն, կոմունալ տնտեսություն և այլն), անավարտ շինարարության և կիսավեր՝ թվով 76 օբյեկտ:

Հաշվի առնելով, որ ներդրումները հիմնականում իրականացվում են միայն ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում, ներդրումները ապակենտրոնացնելու նպատակով անհրաժեշտ է հարկային արտոնություններ սահմանել սահմանային շրջաններում ներդրում կատարողների նկատմամբ՝ լրիվությամբ ազատելով շահութահարկից և իջեցնելով ԱԱՀ-ի գործող դրույքաչափը:

Թեև ԼՂՀ հարկային քաղաքականությունը ներդրումների ներգրավման խթանիչ գործոն է, հարկային օրենսդրության ներդրումներին վերաբերող դրույթները համապատասխանում են տնտեսվարող սուբյեկտների շահերին և միտված են տնտեսության զարգացմանը ու նոր աշխատատեղերի ստեղծմանը, այնուամենայնիվ, ներդրումների մակարդակը հեռու է բավարար լինելուց և այս բնագավառում հաջողության հասած երկրների համար ԼՂՀ-ն ուժեղ մրցակից չէ, քանի որ ցանկացած ներդրում, անգամ փոքրագույնը, կապված է բարձր ռիսկի հետ:

Բոլոր տվյալները բերված են ԼՂՀ ՎՊՈՒՎՊ վարչության տեղեկատվական գեկույցներից

Налоговая политика НКР в инвестиционной среде.

А.Ш. Каграманян

Резюме.

В данной работе изложены правила, установленные законом с точки зрения налоговой политики, как для местных, так и для иностранных инвесторов. В статье также предложены направления по созданию благоприятного инвестиционного климата.

NKR Tax Investment Policy.

H.Sh.Khahramanjan.

Summary.

This article is about the fixed from the view point of tax policy rules and the creation of auspicious conditions for the investments in NKR. The author of the article also suggests the ways and directions of creating that conditions for native and foreign investors.

4. Ա. Ներսիսյան

Ակնհայտ է, որ հասարակական հարաբերություններում հարկման դերը պայմանավորված է տվյալ հասարակությունում պետության ունեցած օբյեկտիվ դերով: Հասարակության զարգացմանն ու շերտավորմանը զուգընթաց պետության վրա դրվում են լրացուցիչ խնդիրներ: Կարևոր է հասարակության և նրա անդամների բարեկեցությունն ապահովելու նպատակով: Մասնավորապես, պետությունը պարտավոր է ապահովել իր անդամների կենսամակարդակի նվազագույն չափը, ազատ մրցակցություն և մատուցել որոշակի ծառայություններ:

Կարևորագույն այս խնդրի լուծման գործում պետությունն իրականացնում է բաշխման իր գործառույթը: Իսկ բաշխման հետ կապված որոշակի խնդիրներ հնարավոր է լուծել միայն պետական կարգավորման ճանապարհով, ինչը պահանջում է համապատասխան միջոցների առկայություն: Միջոցների հավաքագրումը հարկման եղանակով իր հերթին առաջացնում է հարկային համակարգ և հարկային հաստատություններ ունենալու անհրաժեշտություն:

Այլ կերպ, հարկային համակարգը դա տվյալ կոնկրետ պետության մեջ տվյալ պահին առկա հարկադրման էական պայմանների համախմբությունն է:

1992 թվականից սկսած ԼՂՀ հարկային քաղաքականության ձևավորումն ու նրա հետագա զարգացումը ընթացել և ընթանում է բարդ ռազմաքաղաքական և տնտեսական պայմաններում կապված քաղաքական անորոշության, պատերազմական գործողությունների, շրջափակման, շուկայական հարաբերությունների անցմանը բնորոշ ընդգծված սոցիալական լարվածության հետ:

Յուրաքանչյուր պետության հարկային համակարգը դա պատմական ազգային զարգացման արգասիք է: Այդ պատճառով հնարավոր չէ առանձնացնել այնպիսի էտալոնային բնութագրիչ, որն ընդհանուր լինի բոլոր երկրների համար: Կարելի է միայն տալ տարբեր երկրների հարկային համակարգի ընդհանուր բնութագրերը:

Անգամ զարգացած արդյունաբերական երկրները անհրաժեշտ հարկերի հավաքագրման նպատակով ձևավորում են տարբեր սկզբունքներն հիմքերի վրա կառուցված հարկային համակարգեր: Եթե ՄԱՆ-ն, Կանադա, Նոր Զելանդիան, Բելգիան հարկային եկամուտները հավաքագրում են եկամտային հարկերի միջոցով, ապա Նորվեգիան, Շվեդիան, Ֆրանսիան, Ավստրիան, նախապատվությունը տալիս են ապրանքների և ծառայությունների իրացման շրջանառությունից գանձվող հարկերին:

Անցումային տնտեսությամբ երկրներում արդյունավետ հարկային համակարգի ձևավորմանը բացասաբար են անդրադառնում
-տնտեսության կառուցվածքը

-հարկային վարչարարության սահմանափակ կարողությունները
-տեղակատվության սակավությունը
-քաղաքական վերնախավի անպատրաստ լինելը:

Հարկային քաղաքականությունը դիտարկելով որպես օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից իրականացվող և իրականացման ենթակա միջոցառումների համալիր, որն ուղղված է հարկման օբյեկտների, սուբյեկտների, հարկերի դրույթաչափերի, հարկման մեխանիզմների և հարկային արտոնությունների հարցերի կարգավորմանը, կարելի է նշել, որ անցած ժամանակաընթացքում դրա իրականացումը պայմանավորված է եղել նորաստեղծ հանրապետության առջև ծառացած պետական շինարարության ռազմավարական խնդիրների լուծմամբ:

Այդ խնդիրների և հատկապես հարկային քաղաքականության ռազմավարական ուղղությունների մշակումն ու իրագործման առանձնահատկությունը ԼՂՀ-ում կայանում է նրանում, որ դրանք ոչ միայն ուղեկցվում են անցումային շրջանին բնորոշ դժվարություններով ու բարդություններով, այլև պատերազմական գործողություններով ու ՀՀ հետ տնտեսական ինտեգրացման խիստ անհրաժեշտությամբ պայմանավորված համաձայնեցված հարկային քաղաքականության վարման սկզբունքով:

Ամփոփելով, հարկային համակարգի ձևավորումը ԼՂՀ-ում, այն կարելի է բաժանել հետևյալ փուլերի

1. Հարկային համակարգի նախնական ձևավորման փուլ, որն ընդգրկեց հիմնականում 1992-94 թվականները: Այդ ժամանակաընթացքում ԼՂՀ Պետագույն խորհրդի 1992 թ. որոշմամբ կիրառության մեջ դրվեցին ՀՀ-ում ընդունված հարկային ոլորտին վերաբերող «Ավելացված արժեքի հարկի մասին», «Ակցիզային հարկի մասին», «Եկամտահարկի մասին» օրենքները, իսկ շահութահարկը հաշվարկվում և գանձվում էր ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ սահմանված կարգով, որով նախատեսվում էր նաև շահութահարկի գանձում կոլտնտեսության աշխատավարձի ֆոնդից: Պատերազմական գործողությունների պատճառով այդ տարիներին զգալի վնաս են կրել հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերը: Իրենց արտադրական կարողությունների 15-20 տոկոսի չափով էին գործում ԼՂՀ պաշտպանության բանակի կարիքների համար վերապրոֆիլավորված մեկ տասնյակի հասնող պետական ձեռնարկությունները, պետական

ԼՂՀ Պետագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի «ԼՂՀ տարածքում այլ պետությունների գործող օրենսդրական ակտերի գործողության մասին» և ԼՂՀ ՊԳԿ-ի 1992թ. օգոստոսի 28-ի «Ձեռնարկությունների և կազմակերպությունների շահութահարկի մասին» որոշումներ:

մեծածախ և մանրածախ առևտրական և սպասարկման միավորումներն ու ձեռնարկությունները, բավականին նվազ թվակազմերով կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսության զործունեությամբ զբաղվող ոչ մեծ թվով անհատներ:

Այս պայմաններում խնդիր էր դրված խիստ կերպով հաշվառել բոլոր տնտեսավարող սուբյեկտներին, ապահովել ՀՀ առանձին օրենքներով սահմանված հարկման հիմնական բազաները/ շահույթը, իրացման շրջանառությունները, ֆիզիկական անձանց եկամուտները, հարկ վճարողները, իրավաբանական անձինք, ոչ իրավաբանական անձինք, առանձին քաղաքացիներ/, հարկերի դրույքաչափերը և այլն: Պետք է նշել, որ ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂՀ-ում հողի հարկը, գույքահարկը ներդրվել են ավելի ուշ, իսկ ֆոնդավճար ընդհանրապես չէր հաշվարկվում ու գանձվում: Գործում էր տրանսպորտային հարկը, որի վճարողներ էին հանդիսանում տրանսպորտային միջոցների տեր ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ամփոփելով այս փուլը, կարելի է ընդհանրացնել, որ պատերազմական դրությամբ պայմանավորված տնտեսության պետական կենտրոնացված դեկավարման ժամանակաընթացքում խնդիր էր դրված ԼՂՀ-ում աստիճանաբար արմատավորել շուկայական տնտեսահարաբերություններին բնորոշ հարկատեսակներ, հաշվի առնելով ՀՀ հետ միևնույն տնտեսական դաշտի ձևավորման հանգամանքը և տեղական առանձնահատկությունների կիրառման կարևորությունը/ սեփականաշնորհման և ապապետականացման տեմպերի ետ մնալը/, կազմակերպել բոլոր հարկատուների խիստ հաշվառումը: Ձևավորման այս փուլում խնդիր չէր դրված բյուջեի սեփական եկամուտների կազմում էականորեն ավելացնելու հարկային մուտքերը: Այսպես՝ 1992-1994 թ.թ. դրանք կազմել են սեփական եկամուտների ընդամենը 73 տոկոսը¹:

Ընդ որում, հարկային օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և հարկերի ու վճարումների գանձումները իրականացնում էին ֆինանսական մարմինների պետեկամուտների բաժինները, բանի որ ստեղծված էին հարկային տեսչությունները:

2. Հարկային համակարգի զարգացման երկրորդ փուլն ընդգրկեց 1995-98 թվականները, որի ընթացքում արդեն ավարտվել էին պատերազմական գործողությունները և ԼՂՀ իշխանությունները հարաբերական խաղաղության պայմաններում ձեռնամուխ էին եղել տնտեսական բարեփոխումների իրականացմանը:

ԼՂՀ վիճակագրության, պետքեզիստրի և վերլուծության պետական վարչություն,
«ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները 1985-1995թ.թ.»,
Ստեփանակերտ, 1996

Այդ գործընթացը ապահովելու համար ԼՂՀ Գերագույն խորհրդի 1995 թ. փետրվարի 14-ի որոշմամբ իրավունք է վերապահվել ԼՂՀ կառավարությանը մինչև ԼՂՀ ԳԽ կողմից համապատասխան օրենքների ընդունումը ԼՂՀ Գերագույն խորհրդի լիազորությունների շրջանակներում գտնվող առանձին հարցեր ժամանակավորապես կարգավորել կառավարության որոշումներով: Չնայած դրան, ԼՂՀ ԳԽ կողմից 1995-98 թ.թ. ընդունվում են սեփականաշնորհման, ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին և այլ կարևոր օրենքներ: Նախկին կոլտնտեսություններն ու սովխոզները վերակազմավորվեցին գյուղացիական կոլեկտիվ /փայտտիրական/ տնտեսությունների, սկսվեց «փոքր» սեփականաշնորհումը:

1995 թ. սկզբներին ստեղծվում է պետական ռեզիստրի վարչությունը և սկսվում է կազմակերպարարական տեսակի բոլոր ձեռնարկությունների գրանցումն ու պարտադիր վերագրանցումը: Վիճակագրական մարմինների կողմից հաշվարկվում են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները /ՀՆԱ, գների ինդեքս և այլն/ հաշվառումը: ԼՂՀ կառավարության 1995 թ. մարտի 14-ի որոշմամբ ԼՂՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կազմում բաժնի կարգավիճակով ստեղծվեց հարկային տեսչություն, որն ուներ սահմանափակ լիազորություններ հարկային վարչարարության կազմակերպման իմաստով:

1995-96 թ.թ. ԼՂՀ-ում ներդրվել են երկու նոր հարկատեսակներ՝ գույքահարկը և հողի հարկը, էական փոփոխություններ են կատարվել ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և եկամտահարկի մինչ այդ գործող օրենքներում: Կառավարության որոշումներով մտցվել են ավտոճանապարհային մասհանումների և բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման համար վճարներ:

Ազատագրված տարածքներից ձեռք բերված ապրանքանյութական արժեքների իրացման դեպքում ձեռնարկությունների համար մտցվեց ստացվող հասույթի 80 տոկոս բյուջե վճարելու պայմանը: Լայն տարածում սկսեց գտնել ձեռնարկատիրական գործունեությունը քաղաքացիների կողմից՝ հատկապես սպասարկման ոլորտում: 1995-ի սկզբներին նրանց թիվն անցնում էր 600-ից¹, որոնց համար, կախված գործունեության տեսակից, մտցվեց եռամսյակային արտոնավճարի նվազագույն չափի համակարգը:

1997 թ. սկզբներին առաջին անգամ առևտրական գործունեություն իրականացնելու համար մտցվեց հաստատագրված վճարների պրակտիկան: Քանի որ հողը չէր սեփականաշնորհվել, ուստի նրա մշտական և ժամանակավոր օգտագործողների համար սկսած 1995 թվականից մտցվեց հողի հարկ, որի դրույթաչափերը բավականին ցածր էին և կախված էին

Այստեղ, և հետագայում բոլոր թվականները բերվում են ԼՂՀ վիճակագրության, պետաբաժնիստրի և վերլուծության պետական վարչության և ԼՂՀ հարկային տեսչության համապատասխան տարիների տեղեկատվական վերլուծական զեկուցագրերից:

հողատեսքերի տեսակից/վարելահող, արոտավայր և այլն/։ Զգալիորեն աշխուժացավ հարակիցն քաղաքականության կարևորագույն մասը կազմող հարկային վարչարարությունը՝ պայմանավորված հարկային օրենսդրությամբ պահանջների կիրառմամբ և հարկային մեքանիզմների աշխատանքով։ Չնայած հարկ վճարողների հերթական համարների համակարգը ԼՂՀ-ում ներդրվեց բավականին ուշ, 1998թ-ին, սակայն հարկային մարմինների կողմից զգալի աշխատանք տարվեց հարկատուների հաշվառման բարելավման, ստուգումների պրակտիկայի կատարելագործման և հարկատուների իրնազեկման ուղղությամբ։

Այդ տարիներին խնդիր էր դրված հարկային «բեռի» աստիճանական ու նշանակալի չափով տեղափոխումը դեպի ոչ պետական հատված և ֆիզիկական անձինք։

Ընդհանրացնելով երկրորդ փուլի հիմնական արդյունքները, կարելի է ընդգծել, որ այդ ընթացքում համակարգի զարգացումն անմիջական կախման մեջ դրվեց բյուջեի եկամտային մասի կատարումից, որն աճում էր դինամիկ կերպով և հիմնականում հարկային մուտքերի ավելացման հաշվին։ Բավական է նշել, որ 1995 թ.-ին պետբյուջե փաստացի հավաքագրված մուտքերը 5 անգամ գերազանցել են 1994 թ. նույն ցուցանիշը, իսկ 1998 թ.-ին մուտքերը 1995 թ. համեմատությամբ ավելացել են գրեթե 1,5 անգամ։

Այդ փուլի վերջում սկսվեց հողի սեփականաշնորհումը, պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացները և օրենքների ձևով ընդունվեցին բոլոր 6 հարկատեսակների մասին օրենքները, ինչպես նաև հարկերի մասին և տեղական տուրքերի և վճարների մասին օրենքները։ Այլ կերպ ասած, այս փուլը կարելի է համարել հարկային համակարգի օրենսդրական կարգավորման, խտակեցման և կայացման փուլ։

Այդ փուլին բնորոշ էր մի կողմից հարկային բազայի ընդլայնումը և հարկային արտոնությունների սահմանումը, մյուս կողմից՝ կոշտ հարկային քաղաքականության իրականացումը։ Այսպես առաջին անգամ գինու-օղու արտադրությամբ զբաղվող ՊԿ/Փ/ Տ-երի համար մտցվեց ակցիզային հարկ, իսկ կառավարության 1997 թ. մարտի 21-ի թիվ 50 որոշմամբ սահմանվեցին էական հարկային արտոնություններ /շահութահարկի և ԱԱՀ-ի գծով/ նոր ստեղծվող ձեռնարկությունների համար։

Օրենքով տնտեսավարող սուբյեկտների համար սահմանվեց ավտոձանապարհային մասհանումներ պետբյուջե, որը հաշվարկվում էր շրջանառության ծավալից /ՀՀ-ում այդ չկար/։

Կառավարության 1996 թ. հունիսի 23-ի թիվ 165 որոշմամբ կանխիկ հասույթի օգտագործման խիստ ռեժիմներ սահմանվեցին հարկային պարտք ունեցող ձեռնարկությունների համար, որով արգելվում էր նման ձեռնարկություններին ինքնուրույնաբար տնօրինելու դրամարկի մուտք գործած գումարները և էականորեն ազդում էր ձեռնարկությունների ինքնուրույնության վրա։ Իսկ 1998 թ. վարչապետի որոշմամբ շինարարական ձեռնարկությունների

կատարողականից զանձվում էր միանգամից 15, 18 տոկոսը որպես հարկային պարտավորություն:

Իհարկե, վերջին երկու ձեռնարկումները կարելի է համարել հարկային վարչարարությունն ուժեղացնելուն ուղղված քայլ, սակայն դրանք հանգեցրին տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության նվազեցման՝ հատկապես սեփական շրջանառու միջոցների տնօրինման հարցում, որի պատճառով դրանք բեկանվեցին 1999թ. սեպտեմբերին:

Պետք է նշել, որ հարկային վարչարարության ուժեղացման առումով նշանակալից քայլ հանդիսացավ 1998թ. հարկային պետական վարչության ստեղծումը, որը իր մեջ ներառեց շրջանների հարկային տեսչությունները: Վարչարարությանը նպաստող քայլ կարելի է համարել նաև առևտրի և ապասարկման ոլորտում հաստատագրված վճարների պրակտիկայի կիրառումը և հաշվիչ դրամարկային մեքենաների ներդրումը սկսած 1999թ.-ից:

Պայմանականորեն 3-րդ փուլը կարելի է համարել 1999-2001 թվականները, երբ, կարելի է ասել, սկիզբ դրվեց հարկային լիբերալ ռեժիմի քաղաքականությանը: Այն արտահայտվեց նախ և առաջ գործող հարկային օրենքներում, սկսած 2000 թ. հունվարի 1-ից էական փոփոխությունների ձևով: Այսպես, շահութահարկի դրույթաչափը սահմանվեց միասնական 15 տոկոս, անկախ հարկվող շահույթի մեծությունից, իսկ 2001թ. հունվարի 1-ից այն կազմել է 10 տոկոս, 2002թ. հունվարի 1-ից 5 տոկոս: Մտցվեց մի արտոնություն ևս կանոնադիր հիմնադրամի համարման /ավելացման/ դեպքում, սկսած 25 մլն. դրամից և ավելի չափերի դեպքում, ձեռնարկություններն ազատվում են շահութահարկի վճարումից առաջին երկու տարում և այլն: ԱԱՀ-ից ազատում սահմանվեց ավարտուն վերամշակման ցիկլ անցնող գյուղատնտեսական մթերքների համար: ԱԱՀ-ով չհաշվարկվող շրջանառության շեմը թողնվեց 4 մլն դրամ, հողի սեփականատերերը 50 տոկոսով ազատվեցին հողի հարկից:

Այցիզային հարկի ավելի նվազ, մինչև 20-30 տոկոս, դրույթաչափեր սահմանվեցին գինու-օղու տեղական արտադրողների համար, 15-ից մինչև 5 տոկոս իջեցվեց եկամտահարկի դրույթաչափը, կանխիկ գնումների դեպքում հաստատող փաստաթղթերի բացակայության համար բյուջե զանձվող վճարները, իսկ եկամտահարկով չհարկվող շեմը 28 հազարից իջեցվեց մինչև 10 հազարը:

Նշանակալից չափով նվազեցվեցին նաև սոցիալական ապահովագրության վճարների դրույթաչափերը գործատուների համար՝ այն 2001թ. հունվարի 1-ից սահմանելով 15 տոկոս, իսկ 2002թ. հունվարի 1-ից՝ 13 տոկոս: Օրենսդրական հերթական փոփոխությունները ԼՂՀ-ում իրականացվեցին 2001թ. հունիսին, որոնք ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ մի կողմից ուղղված են հարկային վարչարարության խստացմանը, մյուս կողմից հարկատուների շահերի պաշտպանությանը: Այսպես, հարկատուները պարտավոր են 2001թ. հուլիսի 1-ից 100 հազար դրամից ավելի գումարների գործարքների մասին տեղեկություններ հայտնել հարկային մարմիններին: Նորություն էր նաև այն, որ հարկային մարմինների ու հարկատուների միջև

տարակարծությունների և տարընթերցումների դեպքում վճիռն ընդունվում է հոգուտ հարկատուի: Եական կարելի է համարել նաև ստուգումների անցկացման հարցերում հարկատուների իրավունքների ու շահերի ընդարձակման հանգամանքը, հատկապես ստուգման մասին նախօրոք / 3 օր առաջ/ նրանց տեղեկացման պարտադիր լինելու պայմանը: Ազատականությանը միտված քայլ կարելի է համարել արդեն 2001թ. հունվարի 1-ից ինկասո-կարգազրերի կիրառման պրակտիկայի վերացումը հարկային մարմինների կողմից և հարկային վեճերի դատական վճռման միտումների ձևավորումը, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստեղծումը ԼՂՀ-ում:

ԼՂՀ հարկային համակարգի դինամիկայի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դրան ևս բնորոշ է եղել անցումային տնտեսությամբ երկրներում հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունների մեծ մասը: Սկսած ձևավորման շրջանից հարկային համակարգն իր մեջ պարունակում էր տնտեսական հարաբերությունները խաթարող և շուկայական մեխանիզմների նկատմամբ ոչ բավարար վստահությունն առտացույող բազմաթիվ դրույթներ, որոնց մեծ մասը, չնայած իրականացվող բարեփոխումներին, շարունակում են գործել մինչև այժմ, դրանով իսկ զալելով հանրապետության տնտեսական ներուժի լիարժեք իրացումը:

Պետք է նշել, որ ժամանակի ցանկացած պահի հարկային քաղաքականության առումով հիմնական խնդիրը ոչ այնքան հարկման լավագույն կառուցվածքի որոշումն է, որքան այդ կառուցվածքով նախատեսվող որևէ փոփոխության նպատակի հատուկ սահմանումը, այդ տնտեսական հետևանքների /ինչպես արդյունավետության, այնպես էլ արդարության տեսանկյունից/ գնահատումն ու միջոցների ձեռնարկումը, երբ այն բացասաբար է անդրադառնում պետության հանդեպ հարկատուի վերաբեմնունքի վրա:

Այս առումով իմաստ ունի նշել հարկատուների դժվար համակերպումը հարկային օրենսդրության շարունակական փոփոխություններին, պարզեցված հաշվառման ու հաշվետվության համակարգի բացակայությունը, առանձին հարկային արտոնությունների տրամադրման հարցերում խտրական մոտեցումները, հարկային վարչարարության կազմակերպման գործում էական թերացումների ու կամայականությունների դրսևորումները և այլն:

Խնդիր չդնելով խորանալու ու հիմնավորելու բերված փաստարկների ճշմարտացիությունը, ուղղակի նշենք, որ հարկային բարեփոխումները դեռևս ցանկալի արդյունքների չեն հանգեցրել ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների ապահովման ու հարկման բազայի ընդլայնման միջոցով դրանց ծավալների հետագա ավելացման առումով:

Դրանում համոզվելու համար կարելի է բերել վերջին երեք տարիների սեփական եկամուտների հետևյալ ցուցանիշները ԼՂՀ-ում /մլն. դրամով/

	1999թ.	2000թ.	2001թ.
Պետական և համայնքային բյուջեներով նախատեսված պլան	3549,0	3177,3	3171,4
Փաստացի մուտքագրվել է	2290,2	2495,4	2382,9
Կատարման տոկոսը	64,5	78,5	75,1
Հարկային եկամուտներ՝ ընդամենը	1825,7	1877,5	1622,8
Հարկային եկամուտների տոկոսը ընդամենը մուտքագրված եկամուտների մեջ	79,7	75,2	68,1

Ակնհայտ է, որ տնտեսական հարաբերությունները խաթարող հիմնական երևույթներից մեկը՝ ստվերային տնտեսությունը, մեծապես պայմանավորված է հարկային առկա համակարգի թերացումներով: Ընդ որում, ստվերայնությունը հատուկ է բոլոր երկրներին և ըստ որոշ հետազոտությունների ստվերային տնտեսությունը ՀՆԱ-ում կազմում է ԱՄՆ-ում 4-33%, Ճապոնիայում 4-15%, Գերմանիայում 2-11% և այլն¹:

Իսկ ԼՂՀ-ում 2000թ. ավելացված արժեքի հարկի զանգվածն արդյունավետության վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ստվերայնության մակարդակը հանրապետությունում գերազանցում է 40 տոկոսը:

Անցումային տնտեսությամբ երկրներին բնորոշ է եկամուտների ծայրահեղ բևեռացում, որը բնութագրվում է Զինի² գործակցի ավելի մեծ արժեքով:

Զնայած ԼՂՀ-ում վիճակագրական մարմինների կողմից մինչև այժմ չի հաշվարկվում այդ ցուցանիշը, այնուամենայնիվ կարելի է ընդունել, որ նրա մեծությունը չի զիջում ՀՀ համանման ցուցանիշի արժեքը:

Վերոշարադրյալից ելնելով կարելի է զալ այն տրամաբանական հետևությունը, որ ԼՂՀ-ում հարկային եկամուտների բավարար մակարդակի հավաքագրումը պահանջում է հատկապես բարձր եկամուտներ ստացող և բարձրարժեք գույք ունեցողներից հարկերի համամասնորեն զանձում, այսինքն եկամտային՝ ու գույքային հարկերում կիրառել պրոգրեսիվ դրույքաչափերի մեթոդը:

Զարգացող և հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որպես կանոն, տնտեսության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում գյու-

¹ "Вопросы экономики" Ежемесячный журнал Российской Федерации N 10, 2001г.

² Զինի գործակիցը ցույց է տալիս տվյալ երկրում եկամուտների անհավասարաչափ բաշխումը: Ըստ վիճակագրական գնահատականների Հայաստանի Հանրապետությունում 2001թ. այն կազմել է 0,593 /տես ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական վերլուծական զեկույցը: Երևան, 2001.:/:

դատնետեսությունը, մանր սուբյեկտները, ստվերային հատվածը, ազգային եկամտի մեջ փոքր մաս է կազմում աշխատավարձը: Այս ամենը նվազեցնում է որոշ ժամանակակից հարկատեսակների/ ինչպես, օրինակ, եկա-մտահարկը, ու որոշ չափով, ավելացված արժեքի հարկը/ վրա հիմնվելու և հարկման բավարար մակարդակ ապահովելու հնարավորությունը:

ԼՂՀ պարագայում նշված գործոններին ավելանում է կրկնակի ռիսկի առկայությունը, որը պայմանավորված է քաղաքական անորոշությամբ, շահունակվող շրջափակումով, բիզնեսի զարգացման ենթակառուցվածք-ների ոչ համարժեք զարգացումով, ինչպես նաև ազգային հնչեղության այնպիսի հիմնահարցերով, ինչպիսիք են ԼՂՀ վերաբնակեցումը և պաշտպանության ապահովումը:

Հարկային եկամուտների ճիշտ մակարդակի որոշումը որևէ երկրի համար նշանակում է պետական ծախսերի ճիշտ մակարդակի որոշում, ինչն իր հերթին ենթադրում է դրանց հետագա բաշխման արդարացիության ապահովումը: Իսկ թե ինչ գործոններ են խանգարում այդ սկզբունքի իրագործմանը, բերենք ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վ. Ներսիսյանցի կողմից նշվող հետևյալ թերությունները տնտեսության մեջ՝

ա/ հարկերի հավաքման շատ նվազ մակարդակը, նոր տնտեսական համակարգից առավել օգտվող ու վայելող խավը շրջանցում է իր պետա-կան պարտականությունը հարկ չվճարելով

բ/ թերաֆիսկալ կորուստները, այսինքն այն վնասները, որոնք վերաբերում են հասարակական ծառայություններին, օրինակ, էլեկտրաէներգիայի, ջրօգտագործման, և տրանսպորտի ոլորտում սպասարկման վարձերի չվճարումը խոշոր սպառողների կողմից

գ/ կոռուպցիան, որը բազմազան ուղղություններով վատնում է պետական ռեսուրսները և կոռումպացնում ու վտանգում մեր պետականությունը:¹

Մեր կարծիքով, դժվար է չհամաձայնել նման փաստարկների հետ նաև ԼՂՀ պարագայում նկատի ունենալով ԼՂՀ և ՀՀ միևնույն տնտեսական տարած-քում գտնվելու հանգամանքը:

1. «Ֆինանսներ և էկոնոմիկա. Հայաստան», հանդես հ.7, 2001թ

О проведенной в 1992-2001 гг. налоговой стратегии в НКР

К.А. Нерсисян

Резюме

В общественных отношениях роль налогов обусловлена объективной ролью государства, в связи с чем государство осуществляет свою распределительную функцию. В НКР, как в самостоятельной республике с переходной экономикой, формирование налоговой системы и ее дальнейшее развитие проходило и проходит в сложной военно-политической и экономической обстановке.

В статье анализируются периоды становления налоговой системы в НКР, подчеркивается важность разработки и принятия стратегической программы экономического развития НКР, подсистемой которой должна составлять налоговая стратегия.

К. А. Нерсисян

Summary

on tax strategy realized in 1992-2001 in the NKR

In social relations the role of tax policy is conditioned by an objective role of the state, in this connection the state is realizing its distributive function.

In the NKR, as in an independent state with the transitional economy, the formation of tax system and its further development has been taking place in complex military-political and economic situation.

The article analyzing the periods of tax system creation in the NKR, underscores all the importance of economic development of the strategic programme in the country under the system of which tax strategy must fall.

ԼՂՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՇՈՒԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ. Վ. Հովհաննիսյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքային բյուջեներից: Այդ համակարգը հիմնվում է ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա, որը տարածվում է Արցախի բոլոր շրջաններում: Շուկայական տնտեսության արդի պայմաններում գործող ԼՂՀ բյուջետային համակարգը օրենսդրորեն հիմնվում է հանրապետության Ազգային ժողովի 1999թ. հունվարի 18-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի վրա, որում մինչ այժմ կատարվել են մի քանի փոփոխություններ*:

Այնչև իՄՎՀ-ի փլուզումը նախկին միութենական հանրապետությունների բյուջետային համակարգը գործել է՝ հիմնվելով 1961 թվականին ընդունված համանուն օրենքի վրա: Սակայն տարիներ շարունակ խախտվել է բյուջեի մասին օրենքը, բյուջետային գործընթացն ունեցել է թերություններ, օրինակ՝ չի պահպանվել բյուջետային տարվա օրացույցային ժամանակահատվածը (հունվարի 1-դեկտեմբերի 31), որի ընթացքում գործել է հաստատված բյուջեն, չի եղել վերահսկողություն պետական բյուջեի կազմման, կատարման գործընթացներում և այլն:

Ֆինանսական քաղաքականությունը պետական միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված երկրի ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, նրանց բաշխմանն ու օգտագործմանը, որը անհրաժեշտ է պետությանը իր ֆունկցիաների իրականացման համար**: Այն իրագործվում է կենտրոնացված և սպակենտրոնացված դրամական միջոցների ֆոնդերի կուտակման և երկրի ֆինանսական օրենսդրության հիման վրա զրանց օգտագործման ուղիով: Ֆինանսական քաղաքականության հիմնական խնդիրն է երկրում ֆինանսական ռեսուրսների սպառնալիքի առկայության և սոցիալական զարգացման պետական ծրագրերը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում ֆինանսական քաղաքականությունը կարող է ուղղված լինել ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, որը անհրաժեշտ է պատերազմի վարման, պետական սպարառի հսկայական ծախսերի ծածկման, պետական պարտքի գծով վճարումների մարման համար: Այլ պատմական պայմաններում պետությունը մեծացնում է ֆինանսական ծախսերը կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության ոլորտներում, որը ուղղված է ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, աշխատանքի և սպառման միջոցառումների վե-

*1999թ. մարտի 15, դեկտեմբերի 31, 2000թ. ապրիլի 15-ի «ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ընդունված օրենքներ

**А. Ф. Шашкин „Экономическое теория“, М. 1996, стр. 548

րահակման ուժեղացմանը և այլն:

1991թ. սեպտեմբերի 2-ին Արցախը ձեռք բերեց անկախություն, և ինքնիշխան հանրապետության տնտեսության առջև կանգնած քարեփոխումների սկզբում կարևորվեց հատկապես ֆինանսական կայունացման քաղաքականությունը: Այն իրականացվեց՝ այդ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծելով ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմիններ, որոնք միաժամանակ հանդիսանում են պետականության ատրիբուտներ:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները բաժանվում են երկու խմբի*։ Առաջին խմբի մեջ են մտնում այն մարմինները, որոնք իրենց մյուս ֆունկցիաներին զուգահեռ իրականացնում են նաև ֆինանսական գործունեություն՝ հանրապետության նախագահ, Ազգային ժողով, կառավարություն, նախարարություններ։ Երկրորդ խմբի մեջ են մտնում այն պետական մարմինները, որոնց համար ֆինանսական գործունեությունը հանդիսանում է հիմնական։ Այդ մարմինները ստեղծվում են հատկապես ֆինանսական գործունեություն իրականացնելու համար և կազմում են պետության ֆինանսավարկային համակարգը՝ ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ:

Լեռնային Ղարաբաղի նորանկախ հանրապետությունում 1992թ. սկզբին ձևավորված էին պետության իշխանության բեկերը՝ օրենսդիր՝ Գերագույն խորհուրդ և գործադիր՝ կառավարություն, մարմինները: Արդեն ստեղծված էին ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները՝ Ֆինանսների նախարարություն, ԼՂՀ Կենտրոնական բանկ, որոնք էլ երկրի ներքո՞ւմ՝ ձևավորվում և զարգացնում են ֆինանսական քաղաքականությունը: Սակայն 1992-1994թթ. ընկած ժամանակահատվածում պատերազմական գործողությունների պատճառով Արցախում ստեղծված արտակարգ իրավիճակը բկադրեց հանրապետությունում ստեղծել կառավարման նոր համակարգ՝ Պաշտպանության պետական կոմիտե, որն իր ձեռքում կենտրոնացրեց ԼՂՀ գործադիր իշխանության լիազորություններն ամբողջությամբ և օրենսդիր մարմնի լիազորությունների մի մասը: Փաստորեն, մինչև 1994թ. հանրապետության ֆինանսական համակարգը, դրա մեջ մտնող բյուջետային քաղաքականությունը իրականացվեց ՊՊԿ-ի կողմից,** որի գործունեությունը, մեր կարծիքով, ամբողջությամբ ռուղվեց պատերազմի վարմանը: Դա օբյեկտիվորեն դանդաղեցրեց ԼՂՀ ֆինանսական դաշտի, այդ հիմքի վրա իրականացվող միասնական պետական ֆինանսական քաղաքականության ձևավորման ու զարգացման գործընթացները:

Հետպատերազմյան ժամանակաշրջանի Արցախի պետության և նրա համապատասխան օղակների մշակած միասնական պետական ֆինանսական քաղաքականությունը դրսևորվեց երկու՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միաժամանակյա իրականացմամբ, որոնք գործնականում պետություններում լինում են սերտորեն փոխկապակցված: Առավել ևս, դրամավարկային քա-

*Ս. Մուրադյան, Գ. Սուքիասյան «ՀՀ ֆինանսական իրավունք», Երևան, 1996թ., էջ 9

**Պատերազմի ժամանակ ՊՊԿ-ի տրամադրության տակ եղած ԼՂՀ բյուջետային համակարգի, դրա հետ կապված բյուջետային քաղաքականության վերաբերյալ չկան համապատասխան տվյալներ

դաքականությունը հակաբյուրեղացիական անցյալ իրականացնելը կարող է անուղղելի հետևանքների հասցնել: 'Դա առանձնապես վտանգավոր է շուկայական տնտեսությանն անցնելիս, երբ ազգային տնտեսության մեջ տնտեսական անկումն ուղեկցվում է գերինֆլյացիայով, գործազրկության աճով, պրտաքին տնտեսական կապերի և ներքին շուկայի անհավասարակշռվածությամբ, պետական բյուջեի մեծ դեֆիցիտով:

'Դրամաշրջանառության և վարկի բնագավառներում պետական միջոցառումների ամբողջությունը կոչվում է դրամավարկային քաղաքականություն*: Այդ քաղաքականության հիմնական նպատակը վարկի և դրամաշրջանառության գործընթացների վրա կերպարված միջոցով տնտեսական իրավիճակների կարգավորումն է: Պետության կողմից դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկի միջոցով, մասնավոր ինստիտուտների վրա ներգործելով, որովհետև դրանք են դրամավարկային համակարգի հիմքը: Այդ կարգավորումը կատարվում է մի շարք ուղղություններով: Դրանցից են.

1. մասնավոր ֆինանսավարկային ինստիտուտների իրացվելիության ամրապնդումը, այսինքն՝ ռապիդ շրջան կարողանալն ժամանակին բավարարել ներդրողների պահանջները,
2. պետական պարտքի կառավարումը, որը հիմնական ուղղություններից մեկն է, հատկապես, երբ պետական բյուջեն վարկային իրավիճակում է: Ներքին պետական պարտքի կտրուկ մեծացման դեպքում աճում է պետական վարկի ազդեցությունը փոխառվական կապիտալի շուկայի վրա: Դրա համար պետական պարտքի կառավարման տարբեր մեթոդներ են կիրառվում կենտրոնական բանկի կողմից. գնում կամ վաճառվում են պետական պարտավորությունները, փոխվում են պարտատոմսերի գները, դրանց իրացման պայմանները և այլն,
3. դրամական նիսիայի և վարկային գործարքների ծավալների կարգավորումը, որը, ամենից առաջ, ուղղված է արժեզրկման դեմ, ևս ուղղություն է, որը սերտորեն կապված է նախորդների հետ: Բանկային իրացվելիության կարգավորումը ազդում է բանկային վարկերի կառուցվածքի դրամի զանգվածի տոկոսի շուկայական նորմայի վրա: Պետական պարտքի կարգավորումը ազդում է մասնավոր և պետական ոլորտների նիսիայի փոխառվական կապիտալի բաշխման տոկոսադրույքների վրա և այլն:

Այսպիսով, պետությունը իր դրամավարկային քաղաքականությունը գործնականում իրականացնում է կենտրոնական բանկի միջոցով: Վերջինս պետության կողմից լիազորված է օրենքով նախատեսված իրավունքներով:

Մինչև 1996 թվականը Արցախի դրամավարկային միասնական պետական քաղաքականությունն իրականացվել է ԼՂՀ կենտրոնական բանկի կողմից: Սակայն նրա գիրքը ինչ-որ առումով կրել է պայմանական, ավելի շուտ քաղաքական և ոչ թե տնտեսական բնույթ, քանի որ ԼՂՀ և ՀՀ գտնվում են միևնույն միասնական և արժույթային (դրամական) համակարգում, որի նկատմամբ վերահսկողություն ամբողջությամբ

* Գ. Կիրակոսյան, Ի. Խլղաթյան «Տնտեսագիտության տեսություն», Երևան, 2000, էջ 402 և ուրիշներ

յամբ իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկը: Բայց միաժամանակ կարելի է նշել, որ ԼՂՀ Կենտրոնական բանկի դերը մեծ է Արցախի բյուջետային համակարգի ձևավորման ու զարգացման գործում, քանի որ բանկի յուրաքանչյուր բյուջետային տարվա ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը ամրագրվել են ԼՂՀ պետական բյուջեի եկամուտների կազմում: Օրինակ՝ 1995թ. ԼՂՀ պետական բյուջեի եկամուտների մեջ այս մուտքերը կազմել են 100. 0 մլն. դրամ* կամ ամբողջ եկամուտների 10 տոկոսը: Բացի այդ, Արցախի պետական բյուջեի դրամավարկային կառավարումը այդ ժամանակահատվածում իրականացրել է ԼՂՀ Կենտրոնական բանկը որի այս ֆունկցիան, սկսած 1996թ. փետրվար ամսից, երբ Կենտրոնական բանկի և ինքնաբանկի հիմքի վրա ստեղծվեց ԼՂՀ ազգային բանկ «Արցախբանկը», փոխանցվեց վերջինիս:

Շուկայական տնտեսության ներկայիս պայմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսական քաղաքականության մեջ մեծ նշանակություն ունի հարկային միասնական պետական քաղաքականության իրագործումը և դրա հետ կապված բյուջետային քաղաքականության զարգացման ապահովումը: Հարկային քաղաքականությունը վճռորոշ նշանակություն ունի բարձր տնտեսական և մակրոտնտեսական հավասարակշռության հարատևության ապահովման գործում: Բյուջետային համակարգում հարկերի դերը մեծ է, քանի որ դրանք կազմում են բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական ֆինանսական աղբյուրը: Տնտեսագիտական առումով հարկերը համարվում են ֆիսկալ քաղաքականության գործիք, և հարկային քաղաքականության բնագավառում պետության դերն այն է, որ կազմակերպվի հարկերի մուտքը պետական բյուջե, դրանով իսկ ապահովվի պետական բյուջեի եկամտային մասը, մյուս կողմից էլ հարկային քաղաքականության միջոցով խթանվի տնտեսության սյա կամ այն ճյուղի զարգացումը:

Յուրաքանչյուր պետություն ինքն է նշակում և կենսագործում հարկային քաղաքականությունը՝ ելնելով երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական և պաշտպանական խնդիրներից: Ղեկավարում կողմից կիրառվող հարկային քաղաքականությունը պետք է խթանի արտադրության զարգացումը, նպաստի դրա արդյունավետության բարձրացմանը, արտադրանքի որակի բարելավմանը, բնակչության սոցիալական դրության լավացմանը:

Ընդհանուր առմամբ մինչև 1997-1998թթ. ԼՂՀ հարկային համակարգին բնորոշ էին հստակ մանրեղ քաղաքական և բարձր դրույթաչափերը, որոնք չէին կարող խթան հանդիսանալ տնտեսության զարգացման, ներդրումների իրականացման և պետական բյուջեի եկամուտների հավաքագրման համար: Դեռ ավելին, չափից ծանր հարկային բեռը հանրապետությունում հանգեցրել էր տնտեսական աճի դանդաղեցմանը և ստվեյային տնտեսության ծավալմանը, որը հեռանկարում կարող էր կազմալուծել ԼՂՀ - պետական կարկաբյուջետային համակարգը: Այդ պատճառներով պայմանավորված, վերը նշված ժամանակներից Արցախում գրեթե բոլոր հարկատեսակների գծով նոր օրենսդրության գործողությունը ազդարարեց տնտեսության զարգացման ուղղված հարկային քաղաքականության նախասկիզբը, որով նպատակ էր դրվում ընդլայնել հարկման բազան, նվազեցնել հարկման դրույթաչափերը, տեղափոխել հարկման ծանրությունը ուղղակի հարկերից անուղղակի հարկերի վրա և այլ հարկային բարեփոխումների իրականացումը: Մասնավորապես՝ 1998թ. օգոստոսի 4-ին ընդունվեց «Ալցիգիային հարկի մասին», օգոստոսի 5-ին՝ «Հարկերի մասին», նոյեմբերի 1-ին՝

* «ԼՂՀ 1995թ. պետական բյուջեի մասին» ԼՂՀ Դերագույն խորհրդի որոշում, փետրվարի 14, 1995թ. ք. Ստեփանակերտ

«Հաստատագրված վճարների մասին», 1999թ. հուլիսի 1-ից ընդունվեցին «Շահառախարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ԼՂՀ հիմնական օրենքները: «Հարկերի մասին» ԼՂՀ նոր օրենքի ընդունումը Արցախում նոր հարկային համակարգի ձևավորման բեկումնային քայլը հանդիսացավ, որը սկզբունքորեն նոր հարթություն տեղափոխեց հարկային համակարգի հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ հարկային մարմինների և հարկատուների հարաբերությունների կարգավորումը, հարկ վճարողի իրավունքներն ու պարտականությունները, հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը, ինչպես նաև հարկային արտոնությունները:

ԼՂՀ Պետական ֆինանսների համակարգում կենտրոնական տեղը և դերը պատկանում է Արցախի բյուջետային համակարգին և մասնավորապես պետական բյուջեին: Շուկայական տնտեսության պայմաններում մեծ է պետական բյուջեի դերը, քանի որ բյուջեում կենտրոնացվող զրամական ռեսուրսների միջոցով ԼՂՀ կառավարությունը կարգավորում է հանրապետության տնտեսական կյանքը՝ ելնելով ժամանակի շուկայական հարաբերությունների պահանջներից: Այն երկրի տնտեսական, սոցիալական կյանքը արտացոլող ֆինանսական ծրագիրն է:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով Արցախի բյուջետային համակարգի զարգացումը շուկայական հարաբերությունների ներկայիս պայմաններում դրվեց նոր հիմքի վրա, որով օրենսդրորեն կանոնագրված է բյուջետային գործընթացը՝ և պետական, և համայնքների բյուջեների համար: Օրենքի հեղված 37-ում սահմանված է բյուջետային դասակարգման կազմը, որի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների եկամուտների ու ծախսերի միասնական դասակարգման*: Բյուջետային դասակարգումը պետական և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է բյուջեների ցուցանիշների համադրելիությունը: Արցախի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ամեն մի հոդված հայելու պես իր մեջ արտացոլում է հանրապետության տնտեսական զարգացման հզորությունը և հնարավորությունները, հասարակության տնտեսական ու սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանը: Ներկայացնենք և վերլուծենք վերջին տարիների ԼՂՀ պետական բյուջեի կառուցվածքը՝ ըստ Եկամուտների և ծախսերի:

1998-2001թթ. պետական բյուջեի եկամուտների դասակարգումը տրված է ստորև ներկայացված աղյուսակում:

*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999թ. ք. Ստեփանակերտ, էջ 20

աղյուսակ 1

Ցուցանիշներ	1998թ.		1999թ.		2000թ.		2001թ.	
	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ, %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %
Ընդամենը եկա- մուտներ և պաշտո- նական տրամս- ֆերտներ, այդ թվում՝	2513.7	100	1613.5	100	2210.6	100	2790.4	100
I. Ընդամենը եկամու- տներ, որից	2513.7	100	1613.5	100	2210.6	100	2790.4	100
Ա. բնթացիկ եկամու- տներ, այդ թվում՝	2417.9	96.2	1576.0	97.7	2150.3	97.3	2770.4	99.3
1. Հարկային եկամու- տներ, այդ թվում՝	2048.6	81.5	1197.9	74.2	1697.0	76.8	1929.4	69.1
ա) ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	1019.2	40.5	724.4	44.9	906.2	41.0	1050.0	37.6
բ) շահութահարկ	142.9	5.7	237.7	14.7	268.4	12.1	230.0	8.2
գ) եկամտահարկ	597.2	23.8	-	0	284.1	12.9	289.4	10.4
դ) լակցիզային հարկ	105.4	4.2	35.8	2.2	42.2	1.9	130.0	4.7
ե) գույքահարկ	29.2	1.2	1.2	0.1	5.2	0.2	5.0	0.2
զ) հողի հարկ	75.0	3.0	5.9	0.4	9.4	0.4	7.0	0.2
է) խաղաատուրք	36.1	1.4	18.6	1.2	-	0	-	0
բ) հաստատագրված վճարներ	-	0	122.3	7.6	139.4	6.3	165.0	5.9
բ) ընդհանուր ընդ- նախապահական վճարներ	7.5	0.3	14.6	0.9	42.0	1.9	53.0	1.9
ժ) ճանապարհային վճար	34.5	1.4	37.5	2.3	-	0	-	0
ի) անտառային եկա- մուտ	1.5	0.06	0	0	0	0	0	0
2. Պետական տուրք	59.9	2.4	107.6	6.7	137.9	6.3	165.0	5.9
3. Ոչ հարկային եկա- մուտներ	309.4	12.3	270.5	16.8	315.5	14.3	676.0	24.2
Բ. Կապիտալի գործառ- նություններից եկա- մուտներ	95.8	3.8	37.4	2.3	60.3	2.7	20.0	0.7
II Պաշտոնական տրանսֆերտներ	-	0	-	0	-	0	-	0

* ԼՂՀ 1998-2000թթ. պետական բյուջեի ցուցանիշները (եկամուտներ և ծախսեր) տրված են փաստացի կատարված, իսկ 2001թ.՝ օրենքով նախատեսված ցուցանիշներով:

Ինչպես երևում է, ԼՂՀ պետական բյուջեի եկամտային մասի հիմնական հոդվածները հարկերն ու տուրքերն են, ոչ հարկային եկամուտները, կապիտալի գործառնությունից մուտքերը, պաշտոնական տրանսֆերտները:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով չնայած բյուջեի եկամտային մասում ամրագրվում է պաշտոնական տրանսֆերտները, սակայն, քանի որ Արցախը մինչև այժմ միջազգայնորեն ճանաչված չէ օտարերկրյա պետությունների կողմից որպես ինքնիշխան պետություն, ուստի օտարերկրյա պետությունները կամ միջազգային կազմակերպությունները առ այսօր ԼՂՀ պետական բյուջեին չեն տրամադրում տրանսֆերտներ:

ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 1999թ.-ին նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազել են (35.8 տոկոսով), իսկ հետագա տարիներին աստիճանաբար աճել:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սկսած 1999 թվականից Արցախում ձևավորվեցին համայնքների բյուջեներ, որը հանդիսացավ տվյալ բյուջետային տարվա նորույթը և տեղի ունեցավ եկամուտների բաշխում ԼՂՀ պետական և տեղական բյուջեների միջև:

Շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես մնացած երկրներում, այնպես էլ Արցախում պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հանդիսանում են հարկերն ու տուրքերը: Վերը նշված օրենքով եկամտահարկը ամրագրվել է համայնքների բյուջեներին, որի պատճառով 1999թ. ընթացքում այս հարկատեսակի գծով մուտքեր չեն ապահովվել ԼՂՀ պետական բյուջե, սակայն 1999թ. դեկտեմբերի 31-ի փոփոխությամբ Եկամտահարկի գծով սահմանվեց, որ եկամտահարկի 85 տոկոսը պետք է մուտքագրվի պետական բյուջե, իսկ 15 տոկոսը՝ համայնքների բյուջեներ: Ընդհանուր առմամբ մեղմ քաղաքականություն է վարվել ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտահարկ) ուղղությամբ, որը բերել է հարկային եկամուտների մեջ դրանց տեսակաբար կշռի նվազմանը՝ համապատասխանաբար կազմելով 2000 թվականին՝ 15.8 և 16.7, 2001 թվականին՝ 11.9 և 15 տոկոս: Դրանց ծանրությունը տեղափոխվել է անուղղակի հարկերի (ԱԱՀ և ակցիզահարկ) վրա, որոնց ուղղությամբ իրականացվել է հարկային արտոնությունների նվազեցման, հարկային վարչարարության և հարկման մեխանիզմների կատարելագործման քաղաքականություն և հանգեցրել դրանց գծով բացարձակ մուտքերի ավելացմանը: Հողի հարկի և գույքահարկի գծով մուտքերը 1999 թվականից նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազել են, որը պայմանավորված է օրենքով դրանց փոքր մասի ամրագրմանը (5 տոկոս) ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ: Մաքսատուրքի գծով եկամուտներ 2000 թվականից սկսած չեն մուտքագրվել պետական բյուջե, որը վկայում է, որ այս հարկատեսակը դադարել է գործնականում հանդես գալ որպես հարկային եկամուտ, չնայած մաքսային գործը իրավական առումով մինչև այժմ շարունակում է ԼՂՀ-ում գոյություն ունենալ: Շահապարհային վճարները «ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով ամրագրվել են պետական բյուջեի ոչ հարկային եկամուտների կազմում, իսկ անտառային եկամուտները, 1998թ. կազմելով 1.5 մլն. դրամ, հետագայում ներառել են բնօգտագործման և բնապահպանական վճարումների մեջ: Պետական տուրքից ստացվող եկամուտները տարեցտարի բացարձակ ցուցանիշներով աճել են:

Ոչ հարկային եկամուտներից մուտքերը բացարձակ գումարով նույնպես աճել են, իսկ կապիտալի գործառնություններից մուտքերը՝ 1999թ. նախորդ տարվա համեմատ նվազել են, 2000 թվականին բացարձակ մեծությամբ և տեսակարար կշռով աճել են, իսկ 2001 թվականին նախատեսված ցուցանիշով նվազել են և կազմել պետական բյուջեի եկամուտների 0.7 տոկոսը:

Պետական բյուջեի ծախսերը ցույց են տալիս բյուջետային վճարումների նպատակները և ուղղություններն ըստ դասակարգման տարբեր տեսակների (գործառնական, տնտեսական, տարածքային և այլն): Խոշորացված խմբերով բյուջեի ծախսային հոդվածները բաժանվում են՝ պետական կառավարման ծախսերի, ռազմական ծախսերի, սոցիալական ծախսերի, պետության տնտեսական գործունեության ծախսերի, արտաքին պարտքի սպասարկման ծախսերի և այլն: 1998-2001թթ. Արցախի պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը կատարենք՝ ներկայացնելով ըստ ֆունկցիոնալ (գործառնական) դասակարգման կտրվածքով:

Պետական բյուջեի ծախսերի ֆունկցիոնալ (գործառնական) դասակարգումը պետական մարմինների հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է*:

ԼՂՀ 1998-2001թթ. պետական բյուջեի ծախսերը (ըստ գործառնական դասակարգման) և դեֆիցիտը*

աղյուսակ 2.

Ցուցանիշներ	1998թ.		1999թ.		2000թ.		2001թ.	
	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ %	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	9247.0	100	11496.1	100	11610.8	100	12353.9	100
01 Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	641.7	6.9	738.2	6.4	866.3	7.5	987.4	8
02 Պաշտպանություն	11.2	0.1	13.7	0.1	15.5	0.1	16.1	0.1
03 Հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն	631.2	6.8	694.4	6.0	838.9	7.2	958.2	7.8
04 Կրթություն և գիտություն	1064.0	11.5	298.1	2.6	1802.7	15.5	1767.7	14.3
05 Սոցիալական ապահովություն	812.6	8.8	448.9	3.9	664.9	5.7	787.7	6.4
06 Սոցիալական ապահովություն և սոցիալական անվտանգություն	1701.9	18.4	1715.3	14.9	3454.0	29.8	4164.6	33.7
07 Օշակոյթ, երիտասարդության հարցեր և սպորտ	295.6	3.2	299.7	2.6	432.6	3.7	451.1	3.6
08 Ընակարանային կոմունալ տնտեսություն	212.9	2.3	-	0	17.0	0.1	40.0	0.3
09 Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն	128.0	1.4	1128.1	9.8	146.3	1.3	131.5	1.1
10 Արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն	25.7	0.3	540.0	4.7	42.9	0.4	44.9	0.4
11 Տրանսպորտ և կապ, ծանալարային տնտեսություն	91.2	1.0	-	0	-	0	-	0
12 Ել տնտեսական ծառայություններ	-	0	-	0	-	0	-	0
13 Հիմնական խմբին չդասվող ծախսեր	3630.9	39.3	5610.9	48.8	3329.7	28.7	3004.8	24.3
Պետական բյուջեի դեֆիցիտ	6733.3	72.8	9882.6	86.0	9400.2	81	9563.5	77.4

*«Լեռնային Ղարաբաղի հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999թ., ք. Ստեփանակերտ, հոդված 39, էջ. 22

ԼՂՀ պետական բյուջեի ծախսերը, ըստ «Բյուջետային համակարգի մասին», օրենքի, բաժանվում է 13 խումբ ծախսերի և տարբերվում է ՀՀ բյուջեների ծախսերի գործառնական դասակարգումից նրանով, որ եթե Հայաստանում պետական բյուջեի ծախսերը 14 խումբ են կազմում, ապա Արցախում օրենքով ծախսերի մեջ առանձին հոդվածով չեն ներառվում վառելիքային և էներգետիկ համալիրի վրա կատարվող ծախսերը: Այլ ամենասական ծառայությունների գծով ծախսերը, չնայած օրենքով առանձին հոդվածով ամրագրված է, սակայն 1998-2001թթ. ժամանակահատվածում Արցախի պետական բյուջեից այդ ուղղությամբ ծախսեր չեն իրականացվել, իսկ տրանսպորտի և կապի, ճանապարհային տնտեսության ուղղությամբ կատարված ծախսերը 1998 թվականից կազմել են 91.2 մլն. դրամ (կամ ամբողջ ծախսերի 1.0%), իսկ 1999 թվականից այդ ուղղությամբ ծախսեր չեն կատարվել:

ԼՂՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 1998-2001թթ. ժամանակահատվածում մեծացել են: 2000 թվականից ԼՂՀ բյուջետային քաղաքականությունը նոր ելիմքերի վրա դրվեց, և կարևորվեց՝ բյուջետային ռազմավարությունը մշակելիս յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հստակ առաջնությունը սահմանումը, պետական բյուջեի բյուջետային գործընթացների կատարելագործումն ու հստակ իրականացումը, պետական ծախսերն իրականացնելիս լիակատար շուկայական մեխանիզմների ներդրումը և այլն: Օրինակ՝ 2000թ. պետական բյուջեն կազմելիս այն համարվեց «սոցիալական կայունացման» բյուջե և իր բնույթով բազային: Ուստի այդ տարվա մեջ մեծ ուշադրություն դարձվեց և ծախսերը հիմնականում ուղղվեցին սոցիալական ապահովության և ապահովագրության, առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի սպորտի բնագավառներ: Փաստորեն, հանրապետության համար կարևորվեց սոցիալական ու կրթական մակարդակի բարձրացումը և դրա հիմքի վրա հետագայում ամենաբարձր գարգացման ապահովումը: 2001թ. սոցիալական ապահովության և ապահովագրության առողջապահության ծախսերն իրենց տեսակարար կշիռով էլ ավելի են մեծացել, իսկ կրթության և գիտությանը հատկացվող ծախսերը ընդհանրապես՝ նվազել են:

Այսպիսով, ուսումնասիրելով ԼՂՀ պետական բյուջեի 1998-2001թթ. եկամուտների և ծախսերի կառուցվածքը, կարող ենք նշել դեռևս դրանցում առկա հետևյալ ֆինանսական հիմնախնդիրները.

1. հանրապետության հարկային համակարգի ուղղահայաց և հորիզոնական արդարության ապահովման, պարզության և հստակության, հարկային վարչարարության ցածր մակարդակը, որոնց լուծմանն են ուղված ներկայումս վարվող հարկային բարեփոխումները,

2. պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում կապիտալի գործառնական տեսակից ստացվող եկամուտների ցածր մակարդակը, որը հետևանք է Արցախում սեփականաշնորհման գործընթացի դանդաղ և ցածր մակարդակով իրականացման,

3. պետական բյուջեի ծախսերի ոչ լրիվ նպատակայնության ապահովումը, դրանց, ըստ ամենաբարձր ճյուղերի, անհամամասնական բաշխումը և վերահսկողության ցածր մակարդակը:

Վերը նշվածի հետ միասին, շուկայական հարաբերությունների զարգացման արդի փուլում ԼՂՀ բյուջետային համակարգի կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բյուջեի դեֆիցիտը, որը այսօր բնորոշ է գրեթե բոլոր զարգացած երկրներին: 1993թ.

պետական բյուջեն ունեցել է 1.9 մլն. դրամ հավելուրդ և սկսած 1994 թվականից ԼՂՀ պետական բյուջեն յուրաքանչյուր տարի դեֆիցիտ է ունեցել և մինչև այսօր դեֆիցիտի ծավալները բացարձակ ցուցանիշներով շարունակում են աճել: Պետական բյուջեի դեֆիցիտը Արցախում օբյեկտիվորեն առաջադրված է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի, ներդրումների իրականացման պահանջով, որը պայմանավորում է հանրապետությունում մեղմ հարկային քաղաքականության, պետական ծախսերի մեծացման իրագործումը և ի վերջո տնտեսության կայունացման ապահովումը: Եվ դրա հետ կապված, դեֆիցիտը ոչ թե արեեստականորեն պետք է կրճատել, այլ դա պետք է տեղի ունենա աստիճանաբար, առաջին հերթին ՀՆԱ նկատմամբ, և որը պետք է գուգորդվի արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրագործմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999
2. «ԼՂՀ 2001թ. պետական բյուջեի մասին» օրենք, 2001թ.
3. А. Ф. Шишкин „Экономическое теория“ М., 1996 г, стр. 547-549
4. Գ. Կիրակոսյան, Ի. Խլիպյան և ուրիշներ «Տնտեսագիտության անստրուկտուր», Ե., 2000թ., էջ 402-409
5. Ս. Մուրադյան, Գ. Սուրիսյան «ՀՀ ֆինանսական իրավունք», Երևան, 1996թ., էջ 9

Составление бюджетной системы и развитие в системе рыночной экономики в НКР

А.В.Ованисян

Р Е З Ю М Е

В статье представлена бюджетная система и процесс развития в рыночной экономики в НКР. Бюджетная система Арцаха, будучи составленная из государственного и местного бюджетов, основывается на совместной государственно-финансовой, денежно-кредитной и налоговой политики, а юридическим аспектом регулируется основным законом “Об бюджетной системы НКР”, который был принят от 18 января 1999г. Изучена структура, разновидность прибыли и расходы (функциональной группы) госбюджета и существующих в них основные задачи на период 1998-2001 гг. Развитие Арцахской бюджетной системы зависит от решения этих задач.

Creation and development budget system of Karabakh in market economic conditions

Summary

In the article is presented the process creation and development budget system of Karabakh in market economic conditions. Consist of state and local budgets the budget system of Artsakh is established on join state financial, monetary-credit and taxes policy. In keeping with the law it established on general law “About budget system of Karabakh” (it has been adopted on January 18 in 1999). It is analyzed in 1998-2001 yy. structure, difference incomes and expenditures (functional classify) of Karabakh state budget and the problems, which they have. In satisfying those problems it will be possible to ensure the normal development of Artsakh budget system.

Ս. Բ. Հարությունյան

Ներդրումները նյութական, աշխատանքային և դրամական ծախսերի ամբողջությունով տնտեսության բոլոր ճյուղերի ընդլայնված վերարտադրությանը: «Ներդրումն» համեմատաբար նոր տերմին է մեր տնտեսության համար: Դա լայն հասկացություն է և ընդգրկում է ինչպես իրական, այնպես էլ ֆինանսական ներդրումները, այսինքն՝ արժեթղթերի, պարտատու մեջ ներդրումներ՝ սեփականությունից եկամուտ ձեռք բերելու իրավունքով:

Ներդրումային ֆինանսավորումը իրականացվում է ներքին և արտաքին աղբյուրների հաշվով: Ներքին աղբյուրը ձեռնարկության սեփական միջոցներն են, բնակչության խնայողությունը, պետական հատկացումները, ինչպես նաև երկարաժամկետ վարկերը և փոխառությունները: Արտաքին աղբյուրներն են օտարերկրյա ուղղակի և պորտֆելային ներդրումները, ինչպես նաև օտարերկրյա վարկերը և փոխառությունները:

Ըստ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների, ԼՂՀ-ում 2001թ. կապիտալ ներդրումն ամենամեծ տեսակարար կշիռը կազմել է պետական բյուջեի և մարդասիրական օգնության միջոցների հաշվին՝ համապատասխանաբար 39.8 և 30.2 տոկոս, իրականացվող ներդրումները մասին է վկայում հետևյալ աղյուսակը:

Ներդրումների կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների, (%)

Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները	1999թ.	2000թ.	2001թ.
1. Պետական բյուջեի միջոցների	48.4	44.9	39.8
2. Արտաբյուջետային միջոցների	4.2	1.1	2.1
3. Համայնքների բյուջեի միջոցների		0.2	0.7
4. Մարդասիրական օգնության միջոցների	28.7	37.2	30.2
5. Օտարերկրյա ներդրումների միջոցներ		2.7	4.4
6. Ձեռնարկությունների միջոցների	2.4	2.5	3.8
7. Բնակչության միջոցների	2.2	2.0	6.2
8. Այլ միջոցների	14.0	9.5	12.8

2001թ-ին 2000թ-ի համեմատ նվազել է միայն պետական բյուջեի միջոցների մարդասիրական օգնության հաշվին՝ համապատասխանաբար 11.4 և 18.8 տոկոսային կետ յուրականացվող ներդրումները:

ԼՂՀ տարածքում ներդրումային գործունեությունը ֆինանսավորվում է ի հաշիվ՝

- սեփական ֆինանսական պաշարների և ներդրողի ներդրման համար ընդգրկվող (շահույթի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից աշխատանքի կատարումներ և խնայողություններ),
- ներդրողի ֆինանսական միջոցների ներգրավման (միջոցներ ստացված բաժնետոմսերի արձեղանի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից աշխատանքի վճարումներ),
- ներդրողի ֆինանսական միջոցներից փոխառության (բանկային ու բյուջետային վարկեր և այլն),
- դրամական միջոցների, որոնք կենտրոնացվում են ձեռնարկության միավորների կողմից հաստատված կարվով,
- պետական, համայնքային բյուջեների և արտաբյուջետային հիմնադրամից ներդրումային հատկացումների,
- օտարերկրյա ներդրումների:

Շահույթը ձեռնարկության գույքի եկամտի հիմնական ձևն է, որն արտացոլում է հավելյալ արտադրանքի արժեքը: Շահույթը ձեռնարկության կոմերցիոն գործունեության արդյունքն է ընդհանրացնող ցուցանիշ է հանդիսանում: Հարկերի վճարումների և շահույթից բյուջեի վճարումների կատարելուց հետո ձեռնարկությանը մնում է գույքի շահույթ: Դրա մի մասը կարելի

ողել սոցիալական և արտադրական նշանակության բնույթ ունեցող կապիտալ ներդրումներին՝ հանության այդ մասը կարող է ուղղվել նաև ներդրումների համար:

ԼՂՀ-ում 1999 և 2000թ.թ. համապատասխանաբար 159 և 233 կազմակերպությունների կողմից առաջարկված հաշվեկշռային շահույթը կազմել է համապատասխանաբար 568.5 և 606.0 մլն. դրամ՝ ընդամենը տնտեսության առանձին ճյուղերի շահույթով աշխատող ամենաշատ կազմակերպությունների խմբի թափին է ընկնում շինարարության համապատասխանաբար՝ 47.8 և 48.9 տոկոս, արտադրության 13.8 և 14.2 տոկոս ճյուղերին:

Ֆեռմարկություններում ներդրումների ֆինանսավորման երկրորդ խոշոր աղբյուրը առևտրային հարկերից և ամօրտոկացիոն հատկացումները: Ֆեռմարկություններում արժեքային մաշվածությունը իրականացվում է պարբերաբար (ամենամսյա), այն դեպքում, երբ արտադրական արժեքի ֆոնդերը վերարտադրության ամեն մի ցիկլից հետո բնափրային ձևով հատուցման չեն ենթարկվում: Արդյունքում գոյանում են մշակող արտադրողներ (ամօրտոկացիոն հատկացումների ընդգրկումն արտադրության ծախսերի մեջ), որոնք կարող են ուղղվել ֆեռմարկության հիմնական կապիտալի արտադրության ընդլայնմանը: ԼՂՀ տնտեսությունում 1999թ. ամօրտոկացիոն հատկացումները կազմել են 1062362.3 հազ. դրամ, ընդ որում, նյութական ոլորտում՝ 403861.4 հազ. դրամ, ոչ նյութական ոլորտում՝ 658501.0 հազ. դրամ, իսկ 2000թ.՝ 1333206.9 հազ. դրամ, նյութական ոլորտում՝ 403085.7 հազ. դրամ, ոչ նյութական ոլորտում՝ 930121.2 հազ. դրամ: Ներդրումների ակտիվացման համար անհրաժեշտ է ներդրումային ծրագրերի բյուջետային ֆինանսավորում: Այդ տեսակետից պետական ներդրումները պետք է իրականացնել այն ճյուղերում, որն արտադրային ոլորտից ունեն տնտեսության զարգացման համար, հատկապես տարբեր ֆինանսական ձևերի զարգացման համար ներդրումային ընթացքի հաջորդաբար պահանջարկներ: Սակայն այդ ուղղությամբ դրական տեղաշարժեր չեն նկատվում: Բերենք հետևյալ օրինակը. ԼՂՀ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը զարգացնելու համար ունեն կարևորագույն ծրագիր: Սակայն, եթե ներկայացնենք այդ ծրագրի դինամիկան, ապա կատարվում է հետևյալ միտումը. 2000թ.-ին 1999թ.-ի համեմատ գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի վերականգնմանն ուղղված վարկերը նվազել են 9.8 տոկոսով, իսկ 2000թ.-ին 2000թ.-ի համեմատ՝ 77.9 տոկոսով: Նույն պատկերն է նկատվում նաև ԼՂՀ «Արդյունաբերության» հիմնադրամի շրջանակներում ընդունված վարկային ծրագրում: Սինչ տվյալների ֆինանսական տեղեկությունները, ասենք որ, 1997թ. ապրիլի 22-ին հաստատվել է ԼՂՀ «Արդյունաբերության» հիմնադրամի կողմից վարկերի տրամադրման կարգը, որտեղ ասվում է. «ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման արևոտագույն խնդիրների լուծման նպատակով ԼՂՀ «Արդյունաբերության» հիմնադրամը տրամադրում է արժանապատիվ և երկարաժամկետ արտադրող վարկեր՝ տնտեսական գործունեության հետևյալ ոլորտներում՝

- ա. արդյունաբերական ապրանքների արտադրություն,
 - բ. գյուղատնտեսական մթերքների արտադրություն և վերամշակում,
 - գ. սպասարկման ոլորտի ծառայություններ:
- Վարկային միջոցները տրամադրվում է այն իրավաբանական անձանց, որոնք՝
- ա. հարկային վճարումների գծով պետական բյուջեին պարտքեր չունեն,
 - բ. ժամանակին մարել են վարկերը և չունեն ժամկետանց պարտքեր:
- Վարկերի տրամադրման նախապատվությունը տրվում է այն իրավաբանական անձանց, ովքեր
- ա. ստեղծում են նոր աշխատատեղեր,
 - բ. օգտագործում են տեղական հումք,
 - գ. աշխատողի հաշվով նախատեսում են տրամադրվող վարկի ավելի քիչ գումար
- Վարկերի տրամադրումը իրականացվում է բիզնես-ծրագրերի ներկայացման հիման վրա: 1997թ. «Արդյունաբերության» հիմնադրամի կողմից իրականացվել է 192455.0 հազ. դրամի վարկային ներդրումներ, 1998թ.՝ 8394.0 հազ. դրամ, 1999թ.՝ չի եղել, 2000թ.՝ 138742.0 հազ. դրամ, իսկ 2001թ.՝ 22332.4 հազ. դրամ: Ընդ որում ներդրումների 19.0 տոկոսն ուղղվել է արդյունաբերության

Հիշվածով գետնոված բյուր տվյալները վերցված են ԼՂՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական կոմիտեից: Պայմանավորված 2001թ. տարեկան ֆինանսական հաշվառությունների բացակայությամբ՝ 2001թ. ֆինանսական տվյալները չեն արտադրվում:

ճյուղերի զարգացմանը. 26.0 տոկոսը՝ գյուղատնտեսությանը, 26.0 տոկոսը՝ անտառապահությանը, 29.0 տոկոսը ծառայության ոլորտներին:

Ներկա դրությամբ, երբ ԼՂՀ տնտեսությունը գտնվում է անցումային փուլում, զարգացող փոքր ձեռնարկությունները, նրանց դիրքերի ամրապնդումը կարևոր նշանակություն ունի պետական կայուն զարգացման գործընթացում, բանի որ փոքր ձեռնարկությունները ոչ միայն ինքնուրույն հասնող հատման հետագայում խառնող ձեռնարկությունների ձևավորման և զարգացման համար, այլև կայուն երաշխիք են ստեղծում շուկայական զարգացման ուղիով ընթացող տնտեսական կայունացման գործում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարևորվում է փոքր բիզնեսի կայացման զարգացման ուղղությամբ պետության կողմից անհրաժեշտ մախաղայանների ստեղծումը: Վիճակավարչության կողմից անցկացվել է փոքր բիզնեսի ձևավորման և ընդլայնման հետ կապված հարցերի քննարկումները և քննարկումները: Ըստ որի, փոքր բիզնեսի ընդլայնման առավել գրավիչ է սննդի արդյունաբերության ճյուղը, որտեղ կենսալուծակալի մասով ձևավորվում են ձեռնարկությունների 56.5 տոկոսը, որոնց գերակշռող մասը գործունեություն են ծավալել արտադրության ոլորտում: Տվյալ հանգամանքին կարելի է տալ երկու բացատրություններ.

- տվյալ ճյուղը հանդիսանում է համեմատաբար քիչ կապիտալատար, որտեղ
- տվյալ ճյուղի գործունեությունը կողմնորոշված է սպառողների լայն շրջանակների վրա:

Ձեռնարկությունների հիմնական մասն ստեղծվում են այն ճյուղերում, որոնք բավարարում են սպառողական շուկայի արդեն իսկ ձևավորված պահանջները՝ փորձելով փակել չբավարարված պահանջները: Իսկ այնպիսի ճյուղերը, որոնք շուկայում կարող են ձևավորվել միայն ժամանակակից պահանջներով և դրանով իսկ բարձրացնել առկա պահանջարկի որակական և քանակական մակարդակը՝ բացակայում են: Այստեղ հարկ է ընդգծել պետության կողմից իրականացվող քաղաքականությունը, որը պետք է մոպատի և գործող ձեռնարկությունների արտադրության և արդյունավետ գործունեությանը, և տրամադրի ներդրումներ նոր ձեռնարկությունների ստեղծման համար:

Շատ կարևոր հարց է ներդրումային ոլորտում բնակչության միջոցների ներգրավումը: Այդպիսի ներգրավումն իրականացվում է ձեռնարկությունների սեփականաշնորհման միջոցով կարող է դիտարկվել ոչ միայն որպես կապիտալ ներդրումների աղբյուր, այլ նաև որպես սոցիալական անձնակազմի խնայողությունների պաշտպանման ուղղություններից մեկը: 2001 թ. հունվարի 1-ի դրությամբ սեփականաշնորհվել է 681 օբյեկտ, ընդ որում՝ 661 «փոքր», կիսավաճառական շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ, 11 ձեռնարկություն ձեռնարկությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: Նշված օբյեկտները սեփականաշնորհումից մուտքեղ կազմել են 317.2 մլն. դրամ, որից 73.7 մլն. դրամը 2001 թվականի Ընդ որում 2001թ. ընթացքում պետական բյուջեին վերադարձվել է 44.3 մլն. դրամ:

ԼՂՀ-ում օբյեկտների սեփականաշնորհումն իրականացնելն ունեյ նաև մեկ նպատակ՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությունը հայրենական սեփականատերերի միջոցով բացակայության հետևանքով: Այդ դեպքում անհրաժեշտ է իրականացնել միասնական իրավունքներ օտարերկրյա և հայրենական ներդրողների համար: Ներկա փուլում օտարերկրյա ներդրողներին շատ հետաքրքրում է հողի սեփականաշնորհումը և դրա հետ կապված բնորոշատիկային ակտերը: Հիմնական պայդեմներն օրենսդրական բազան է: Ազգային օրենսդրությունը հիմնում օտարերկրյա ներդրողների վերաբերյալ կազմում են իրավական երաշխիքներ: Երաշխիքների նպատակն ընդունող երկրի և օտարերկրյա ներդրողների միջև շահերի ապահովումն է: Այսինքն, իրավական տեսանկյունից օտարերկրյա մասնավոր սեփականությունը հավասարեցվում է հայրենական մասնավոր սեփականությանը:

ԼՂՀ կառավարությունը մեծ կարևորություն է տալիս օտարերկրյա ներդրումներ գրավել քաղաքականության մշակման և իրագործման մեթոդներին, բացի այդ, այստեղ առկա են բազմաֆինանսական և ոչ ֆինանսական խթաններ, ինչպիսիք են, օրինակ, անշարժ գույքի ցածր գները, Էժան աշխատուժի առկայությունը, ոչ ֆինանսական խթաններից կարելի է առանձնացնել շուկայական մակարդակը, բարձր որակավորմամբ աշխատուժի առկայությունը, դարաբաղում գործարար օրին:

Օտարերկրյա ներդրողների համար բարենպաստ ներդրումային կլիմայի ստեղծումն էրդունային միջավայրի ակտիվացման եղանակներից մեկն է:

ԼՂՀ-ում 2001թ. մախող տարվա համեմատությամբ օտարերկրյա ներդրումներ ձեռնարկությունների թիվն աճել է 14-ով՝ կազմելով 39:

Բնակչության ներդրումային ակտիվության խթանումը կարելի է իրականացնել նաև խմելու անձնական ավանդներից բարձր բանկային տոկոսադրույթների հաստատման միջոցով՝ երբն տարիներին քնակչությունն սկսել է ավելի վատահել բանկային համակարգին, որպես չնդական միջոցների ապահովման աղբյուր, որի մասին է վկայում այն փաստը, որ բանկերու նակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2002թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 925.4 մլն.դրամ և նախորդ տարվա հունվարի 1-ի համեմատ աճել է 495.0 մլն.դրամով կամ 34. տոկոսով:

Բնակչության խնայողությունների ներխոսը կապիտալի շուկա ապահովելու համա ւնիլածելու է ներդրումային բանկերի և հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների և նսարոշակային հիմնադրամների, շինարարական ընկերությունների և այլ միջնորդային րմանական կազմակերպությունների լայն ցանց:

Վարկերի տրամադրման քաղաքականությունը ևս մեծ կարևորություն ունի ներդրումներ արկացման և արդիականացման գործում: Մասնավոր հատվածում անհրաժեշտ կապիտալ ազակալությունը զրկում է արտադրությանը կապիտալ ներդրումների իրականացման արավորությունից, որը մեկ անգամ ևս շեշտում է պետության կողմից տնտեսության զարկացման րծծում ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը:

Վարկերի տրամադրումը իրականացվում է բիզնես-ծրագրերի հիման վրա, որոնց քննարկման ամար ստեղծվում է փորձագիտական աշխատանքային հանձնաժողով: Տվյալ կարգը նպաստում է լրիվի կողմից տրամադրվող միջոցների արդյունավետ տեղաբաշխմանը և տնտեսության ճյուղերի տավել արդյունավետ վարկավորմանը:

Առևտրային բանկերի վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) 2002թ. հունվարի 1 դրությամբ կազմել են 3633.0 մլն.դրամ և 2001թ. ընթացքում աճել են՝ 2072.8 մլն. դրամով կամ 2. րկամ:

Վարկային ներդրումների ընդհանուր ծավալում կարճաժամկետ վարկերի տեսակարալ շիղ կազմել է 46.4 տոկոս, իսկ երկարաժամկետինը՝ 53.6 տոկոս:

2002թ. հունվարի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել ե ատապատասխանաբար՝ 1540.6 և 160.5 մլն.դրամ: 2001թ. երկարաձգված վարկերն աճել են 1190.6 մլն. դրամով (3.4 անգամ), իսկ ժամկետանցը՝ 124.5 մլն. դրամով (3.5 անգամ):

Մակրոմակալոդական ներդրումների կառավարման գլխավոր ռազմավարական խնդիրը ամց համար նպատավոր միջավայրի ստեղծումն է, մասնավորապես ներդրումային ղգվածության հարկային, դրամավարկային, ամորտիզացիոն քաղաքականության իրագործումը. ղատ տնտեսավարման ու տնտեսական կապերին նպաստող իրավական դաշտի ձևավորումը: ատկապես էական է հարկային քաղաքականության ազատականացումը, հարկերի (շահութահարկ, լատահարկ, ավելացված արժեքի հարկ և այլն) այնպիսի դրույթաավերի սահմանումը, որն ոլյունավետորեն է զուգակցում դրանց ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները: Այդ իսկ ատմառով, մեր տնտեսության պայմաններում ուշադրություն պետք է կենտրոնացնել հարկային աղաքականության խթանիչ ֆունկցիաների վրա, որը հնարավորություն կտա ներդրումային ջոցների ավելի լայն ու արդյունավետ օգտագործմանը: Այս ուղղությամբ իբրև առաջին քայլ կարելի համարել 2000թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված հարկային օրենսդրության արիիխումներին ուղղված մի շարք հարկատեսակների գծով փոփոխությունների և րակումների արերը: Նշվածում հիմնական շեշտը դրվում է հարկային արտոնությունների դաշտի հիմնավորված տլայմանը և մի շարք հարկատեսակների գծով դրույթաափերի իջեցմանը: Խոսելով հարկային ւնսդրությունում կատարված բարեփոխումների մասին, կարելի է տարբերակել երկու հիմնական դրույթումներ՝ օտարերկրյա ներդրումների ներգրավում և տեղական ապրանք-ալտադրողի բանում:

Ներքին պահանջարկի կողմնորոշումը ներմուծվող ապրանքների նկատմամբ լուրջ խոչընդոտ արուցում տեղական արտադրության զարգացման ճանապարհին: Այդ իսկ պատճառով պետության րարագույն խնդիր է հանդիսանում հայրենական ապրանքների մրցունակության բարձրացման րաիվումը (տեղեկության համար նշենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին արալաջջանառության ծավալը 2001թ. հունվար-դեկտեմբերին, փաստացի գնելով, կազմել է 297.5 մլն. դրամ կամ 41851.9 հազար ԱՄՆ դոլար, այդ բվում ապրանքների արտաւանումը՝ 30571

լն. դրամ (5479.1 հազ. դոլար), իսկ ներմուծումը՝ 20240.4 մլն. դրամ (36380.0 հազ. դոլար): Առևտրա-
աշխատանքային բացասական է 17183.3 մլն. դրամով (30900.9 հազ. դոլարով):

Այդ խնդրի լուծմանն է ուղղված հարկային բարեփոխումներում տեղ գտած կա-
նախարարության կողմից դրույքաչափերի իջեցումը տեղական արտադրության մի շարք ոլորտներ
Ֆինույն ժամանակ հարկի է ընդունել արտաքին ներդրումների առումով մեր տնտեսության
հիսկայնությունը, որի չեզոքացման կարևորագույն նախապայման է հանդիսանում ճկուն և գր-
հարկային համակարգի առկայությունը:

Ելնելով վերոհիշյալից կարելի է ասել, որ ԼՂՀ-ում դրական փոփոխություններ են նկատ-
հարկային վարչարարության, հարկային օրենսդրության և ընդհանրապես հարկա-
քաղաքականության իրականացման բնագավառում: Սակայն այն դեռևս անբավարար
ներդրումների ակտիվության և օտարերկրյա ու ներքին ներդրումների հոսքի ներգրավման համարչե-
քանի որ ներդրումների և դրանց հատուցման միջև ընկած է որոշակի ժամանակահատված:

Ներդրումների գործընթացի հիմնական առանձնահատկություններից է հանդիսանում դեռ-
քանի որ ներդրումների և դրանց հատուցման միջև ընկած է որոշակի ժամանակահատված:
ԼՂՀ-ում իրականացվող բարեփոխումների ներկայիս փուլում արդիական է դարձել ներդրում-
միջավայրի բարելավման ու ներդրումային ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակումը
իրականացումը, քանի որ մեր հանրապետությունում առկա ինստիտուցիոնալ թերի դաշտ-
ոլորտայնության բարձր մակարդակը ետ են մղում թե՛ ազգային, և թե՛ օտարերկրյա ներդրողները:

Այդ իսկ պատճառով ինչ է անհրաժեշտ կատարել, որպեսզի ներդրումային ընթացքը լայն-
ապրի: Սկզբնական շրջանում ամենակարևորը երկրում հստակ իրավական բազայի ստեղծում-
պետական պարզ քաղաքականության և ինֆլյացիայի կարգավորման մեջ: Կարևոր դեր են խա-
նաև առևտրային թանկերը, որոնք կենտրոնացնում են բնակչության մոտ ժամանակավոր ապ-
դրամական միջոցները և ուղղում են ներդրումային ոլորտ: Սակայն ներկա տնտեսա-
պայմաններում առևտրային թանկերի մասնակցությունը ներդրումային գործունեության մեջ
շահավետ է: Բացի դրանից, առևտրային թանկերը մինչև երկրում ֆինանսական և քաղաքա-
կայունացում չլինի շահագրգռված չեն լինի ներդրումային վարկավորման մեջ: Այս իրավիճակ
օտարերկրյա ներդրողների դերն է բարձրանում, չնայած, որ նրանք չեն վստահում ստեղծված ներ-
վիճակին, ուստի անհրաժեշտ է հստակ ռազմավարություն:

Իսկաև նվազեցման գործում կարևորվում է պետական երաշխիքների համակարգի զարգաց-
դրական երաշխիքներ կտրամադրվեն միայն այնպիսի տարածքային և քաղաքական ռիսկա-
համար, որոնց թվում են.

- պայմանագրի դադարեցումը պետության կողմից,
- օրենսդրության փոփոխությունը,
- պետության կողմից տրամադրված որոշ իրավունքների վերացումը,
- պետական քաղաքական ռեժիմի փոփոխությունը,
- պատերազմը:

Պետական երաշխիքներ կտրամադրվեն միայն հաշվի առնելով.

- ներդրվող միջոցների ծավալը,
- ներդրվող միջոցների ժամկետը,
- ներդրումների համապատասխանությունը ներդրումային քաղաքականությու-
նազմավարությանը:

Երաշխիքների ստանդարտն գործընթացը ենթադրում է երկու կողմերի առկայությունը և կառավարություն և պոտենցիալ ներդրող:

Ռիսկերը լինում են տարբեր ձևերի և քաղաքական, և բնական, և ներդրումային, գույքային ա-
այն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ռիսկի աստիճանի կրճատմանն ուղղված նպատակա-
միջոցառումների իրականացում, որը նվազագույնի կհասցնի հնարավոր կորուստն
մասշտաբներն ամուրջ տնտեսական իրավիճակի պայմաններում: Մովորաբար կիրառվում են ռի-
վերացման և կրճատման զանազան մեթոդներ: Այդ մեթոդների մեջ են մտնում ռիսկից խուսափու-
ռիկալ ամբողջությամբ ներդրողին թողնելը, ռիսկի փոխանցումը և կրճատումը:

РЕЗЮМЕ

Темы, структура и эффективность инвестиций в НКР.

Инвестиция совокупность затрат материальных, трудовых и денежных ресурсов, направленных на расширенное воспроизводство, основных фондов всех отраслей хозяйства. Инвестиции относительно новый для нашей экономики термин. Инвестиции более широкое понятие, оно охватывает как реальные, так финансовые инвестиции.

Финансирование инвестиций осуществляется за счет внутренних и внешних источников. Внутренними источниками являются собственные ресурсы предприятий, сбережения граждан, ассигнований из государственных бюджетов, а также долгосрочные кредиты и заимствования. Внешними источниками являются прямые и портфельные иностранные инвестиции, а также иностранные кредиты и заимствования.

Инвестиционная деятельность на территории НКР может финансировать за счет:

- ⇒ собственных финансовых ресурсов и внутрихозяйственных резервов инвестора (прибыль, амортизационные отчисления, денежные накопления и сбережения граждан и юридических лиц и др. средства);
- ⇒ заемных финансовых средств инвестора (банковские и бюджетные кредиты и др. средства);
- ⇒ привлеченных финансовых средств инвестора (средства полученные от продажи акций паевые и иные взносы членов трудовых коллективов, граждан юридических лиц);
- ⇒ денежных средств, централизуемых объединениями предприятий в установленном порядке;
- ⇒ инвестиционных ассигнований из государственных бюджетов, местных бюджетов и внебюджетных фондов;
- ⇒ иностранных инвестиций .

Очень важным моментом является рассмотрение инвестиционного риска в республике. оценить его современное состояние, предложить решения для уменьшения риска в целях улучшения инвестиционной среды.

В статье даны статистические показатели социально-экономического состояния, которые более точно дают представление об инвестиционной деятельности в НКР.

Structure, tempo and efficiency of invests in NKR

Investments exhibit the aggregate of material, working and cash expenditures directed to expanded reproduction of all national branches.

«Investments» comparatively is a new term in economy. It is of broader meaning that includes real and financial invests as well, that is the securities and invested bonds with the right of having some income from ownership.

Investment financing is realized on base of domestic and external sources. The domestic source is represented as own funds of an enterprise and savings of the population, state subsidies, as well long-term credits and loans. And the external sources are foreign direct and portfolio investments, foreign credits and loans too.

It is important to regard the share of investment risk in the republic, to estimate its state in nowadays and have any decision proposal in order to make the risk minimal and the investment sphere improved.

The main indexes of investment activity by the sources of their use are given in the thesis following the examples of Nagorno Karabakh Republic.

ԼՂՀ-ում հարկային բարենպաստ պայմանների ստեղծումը

Տ.Ս. Հակոբյան

Հարկային քաղաքականության ներգործությունը տնտեսական գործընթացների վրա դրսևորվում է ազդեցության երկու հիմնական ձևերով.

- տնտեսական գործընթացներին ուղղակի ներգործություն.
- տնտեսական գործընթացներին անուղղակի ներգործություն՝ այդ գործընթացների վրա ազդող այլ լծակների ներգործությանը միջամտելու միջոցով:

Ունեությունների օգտագործման սահմանափակության և առաջնային պահանջմունքների ոչ լրիվ բավարարման պայմաններում, անցումային շրջանում գտնվող պետության բարեփոխումների իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակից: Ուստի ԼՂՀ հարկային համակարգը պետք է կարգավորի ներպետական տնտեսական այն պայմանները, որոնք օժանդակում են օտարերկրյա կապիտալի հոսքին՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ արտադրական ձեռնարկությունների համար տարբեր հարկատեսակների գծով արտոնությունների սահմանման (կախված օտարերկրյա կապիտալի կշիռից՝ ամբողջ կապիտալի նկատմամբ) և այլ գործիքների միջոցով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ անցումային ժամանակաշրջանն ապրող ԼՂՀ հարկային համակարգը նպատակահարմար չէ ծանրաբեռնել արտոնությունների բազմաթիվ տեսակներով, որը կարող է ոչ այնքան նպաստավոր, որքան «խառնաշփոթ» գործոն հանդիսանալ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ կապիտալի ոչ բավարար մակարդակի պայմաններում բարեփոխումների իրագործումը և կայուն տնտեսական աճի ապահովումը բավականին դանդաղ են ընթանում, և այլ երկրների եետ մրցակցության աստիճանը դեռ երկար ժամանակ ցածր է մնում: Ժամանակակից զարգացած պետությունները, ինչպիսին ԱՄՆ է, իրենց արմատական տնտեսական վերափոխումների շրջանում ուղղակիորեն կախված են եղել արտաքին կապիտալի ներգրավումից:

Այսպիսով, անցումային շրջանի տնտեսական վերափոխումների արդյունավետությունը մեծ չափով կախված է արտաքին ներդրումների ծավալներից: Ուստի ԼՂՀ առաջնային քայլերից մեկը պետք է լինի օտարերկրյա կապիտալի գործունեության օրենսդրա-իրավական բազայի ստեղծումը: Օտարերկրյա կապիտալի իրական հոսքն ապահովելու համար բարենպաստ պայմանների ստեղծման գործընթացը ենթադրում է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների գործունեության համար հատուկ արտոնյալ տնտեսական մեխանիզմների մշակում: Այդ մեխանիզմներն ընդգրկում են արտասահմանյան ներդրումների ներգրավմանը նպատակաուղղված հարկային և ֆինանսավարկային արտոնությունների կիրառումը: Միևնույն ժամանակ, այս միջոցառումները պետք է համադրել դրանց տնտեսական նպատակահարմարության և երկրի հեռանկարային զարգացման հետ: Արտոնությունների տրամադրման գործընթացը պետք է իր մեջ ներառի օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ տնտեսական գործունեության իրականացնող ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից ստացած շահույթի նկատմամբ համեմատաբար ցածր հարկադրույթների կիրառում, նորաստեղծ արտասահմանյան և համատեղ ձեռնարկությունների հարկերից ազատման ժամանակի երկարաձգումը, ներմուծման գործարքները մաքսատուրքերից ազատելու և այլ օրենսդրա-իրավական ու տնտեսական բարենպաստ պայմաններ ստեղծող միջոցառումների իրականացումը: Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեության

ապահովումը օրենսդրա-իրավական և տնտեսական նորմերով, պետք է ուղղված լինի ձեռնարկության գույքային իրավունքների, ներդրումային գործունեության ապահովմանը:

Ինչպես հայտնի է պետական գնումների ավելացման քաղաքականությունը առավել ճկուն միջոց է տնտեսական ակտիվության խթանման համար, քան հարկային ճնշման թուլացումը: Սակայն, ԼՂՀ-ում այս ռազմավարության ընտրությունը աննպատակահարմար է պետական բյուջեի միջոցների սակավության պատճառով:

Տնտեսության զարգացման նախապայմաններից է նաև արտադրության խթանումը: Արտադրական գործունեության համար անհրաժեշտ նախապայման է ֆինանսական միջոցների առկայությունը: Այդ միջոցների աղբյուրներ կարող են լինել վարկային միջոցները կամ արտադրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների սեփական ռեսուրսները: Անցումային շրջանը բնութագրվում է խնայողությունների և ներդրումների չափազանց անհավասարակշռությամբ, որը մեծ խոչընդոտ է նկամանների և ռեսուրսների վերաբաշխման գործընթացների համար: Հետևաբար, ԼՂՀ-ն պետք է որդեգրի ձեռնարկությունների վարկավորման ռազմավարությունը կամ բարենպաստ պայմաններ ստեղծի տնտեսվարող սուբյեկտների ինքնաֆինանսավորման համար:

Անցումային շրջանում, որևէ տնտեսական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ կամ կապիտալ, որոնց բազմակայության փառսը հետադարձության գերակշռող հատվածում պայմանավորված է ռեսուրսների ծայրահեղ անհավասարաչափ բաշխման հանգամանքով: Դիտարկելով տնտեսությունը, որպես ամբողջական համակարգ, բնական է այն պնդումը, որ տնտեսության զարգացման հիմքը արտադրությունն է: Տնտեսական կառուցվածքների միջև բնականոն հարաբերությունների ապահովումը նրկրի բնական ռեսուրսների ներմուծումների հաշվին ու թե շուտ սպառում է իր արդյունավետությունը և խորը ճգնաժամին հաջորդող աշխուժացման միտումները, այս պարագայում, կարող են միայն թվագող առաջխաղացման տպավորություն ներշնչել: ԼՂՀ-ում ներկայումս տիրող տնտեսության տարբեր ճյուղերի մոնոպոլացման գործընթացի կանխմանը ուղղված արմատական միջոցառումները ենթադրում են հաշվառման աշխարհային լծակների կիրառումը: Հարկային քաղաքականության դերը այս ուղղությամբ արտացոլվում է նոր ձևավորվող տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար հարկային բարենպաստ պայմանների ստեղծումով:

ԼՂՀ ներկա տնտեսական վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության, շինարարության, արդյունաբերության բնագավառներում զարգացման մեծ պոտենցիալ գոյություն ունի: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար գյուղացին հարկատեսակներից վճարում է միայն հողի հարկը, սակայն եթե ավելացնենք հողի մշակման, ջրելու և այլ բազմաթիվ ծախսեր (որոնք տնտեսվարող սուբյեկտի տնտանկյունից կարելի է դիտարկել որպես հարկեր), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի ծանր վիճակում է գյուղացին այսօր: Նախկին տարիների փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում արտադրական մեծ պոտենցիալի օգտագործումը լուրջ խոչընդոտների է հանդիպում՝ կապված տնտեսվարող սուբյեկտների անվճարունակության, արտադրության ժամանակակից միջոցների բացակայության հանգամանքներով և, դրանով պայմանավորված՝ տնտեսական ակտիվության կասեցմամբ: Գյուղատնտեսության ոլորտում զրազվածների չնչին տեղոսն է միայն, որ կարողանում է իր ստացած շահույթի հաշվին արտադրություն ընդլայնելու նպատակով ձեռք բերել արտադրության լրացուցիչ միջոցներ: Իսկ եթե պետությունը ստանձնի այն գործառնությունը, որը ենթադրում է

տեխնիկայի, վաճառքի, լրացուցիչ հողատարածքների արտոնյալ պայմաններով տրամադրում՝ բերքահավաքից հետո միայն փոխհատուցում ստանալու ակնկալիքով, ապա գյուղատնտեսության զարգացման բնական ընթացքը միանգամից մի քանի տարով առաջ կրկնվի: Ամենապարզ հաշվարկներն անգամ ցույց են տալիս, որ եթե արտոնյալ պայմանների ստեղծման շնորհիվ արտադրության ծավալներն աճեն 10 անգամ, ապա հարկի դրույքաչափը 2 անգամ փոքրացնելու դեպքում այդ հարկատեսակից ստացվող մուտքերը կաճեն 5 անգամ: ԸՀՀ կողմից ստացված բազմաթիվ ոչ նպատակային վարկերը կարելի է օգտագործել գյուղատնտեսության բնագավառում: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ: Այդ բարենպաստ պայմանները ենթադրում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրության բնագավառում արտադրության համար անհրաժեշտ միջոցների՝ տեխնիկայի, սարքավորումների, արտոնյալ երկարաժամկետ վարկերի տրամադրում, ինչը կնպաստի լրացուցիչ հողատարածքների օգտագործմանը, արտադրության ծավալների աճին և այլն: Պետության կողմից գյուղատնտեսությունում այսպիսի արտոնյալ պայմանների ստեղծումը հնարավորություն կտա հետագայում ունենալ հարկման սուբյեկտներ, որոնք կանոնադր կերպով հարկեր են վճարում պետությանը և միաժամանակ փոխհատուցում են իրենց տրամադրված արտոնյալ պայմանների հետ կապված պետության կողմից կատարված ծախսերը: Փաստորեն, պետությունը այնպիսի պայմաններ է ստեղծում, որոնք տնտեսվարող սուբյեկտներին խթանում են զբաղվել տվյալ գործունեությամբ, իսկ հետագայում ապահովում են այդ գործունեությունն իրականացվելուց հրաժարվելու աննպատակահարմարությունը: Կարևոր հանգամանք է այն, որ տնտեսվարող սուբյեկտի հեռանալու դեպքում, տվյալ գործունեությամբ զբաղվելու համար բազմաթիվ հավակնորդներ գոյություն կունենան, որոնք կստանան նախկին սուբյեկտի բոլոր արտադրությունները: Պետության կողմից իրականացվող այս քաղաքականությունը կիրառելի է տնտեսական գործունեության ցանկացած բնագավառում, սակայն ոչ բոլոր բնագավառներում միաժամանակ: Պետության տնտեսական քաղաքականության իրականացման այս ուղղությունը, մեր կարծիքով, կհանգեցնի բազմաթիվ խնդիրների լուծմանը, այն է.

- լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ գործազրկության մակարդակի կտրուկ անկմանը,
- տնտեսական գործունեության ծավալելու համար բարենպաստ դաշտի ձևավորման միջոցով արտադրության տեմպերի գզալի աճին,
- տնտեսական զարգացման տեմպերին զուգահեռ՝ արտաքին շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանը,
- արտաքին շուկայում մրցակցելու հանգամանքով պայմանավորված՝ ԸՀՀ-ում համառոտ ձևերով կազմակերպելու տնտեսական, արտասահմանյան ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների ներգրավմանը, գիտական փորձի փոխանակմանը,
- քաղաքականության «բեռ» նկատմամբ փոխանցելու ռազմավարությունը ստանձնելով արդեն իսկ ձևավորված արտադրական գործընթացի արագացման և սոցիալական անհավասարակշռվածության ստեղծմանի նվազեցման:

Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում, վերոհիշյալ միջոցառումների իրականացման անհրաժեշտ պայման է հանդիսանում պետության կողմից իր տնտեսության տակ որոշակի միջոցներ ունենալու հանգամանքը: Այս պայմանի բավարարումը սրբանշանավորված է տնտեսական քաղաքականության տարբեր

բնագավառների փոխակալվածությունը և դրանց մեկը մյուսին օժանդակելու ինտրավերությունը՝ արտահայտված սովերային տնտեսության ծավալների կրճատմանը, պետական փողերի յուրացման բացառմանը, պետական բյուջեից ֆինանսավերվող սուբյեկտների կողմից պետական միջոցների ըստ նպատակի օգտագործմանը, ինչպես նաև նոր հարկաւորների ստեղծմանը ուղղված միջոցառումների համակարգով: Սովերային տնտեսական գործունեությամբ զբաղվողների նկատմամբ պատժամիջոցների ուժեղացումը և զուգահեռաբար իրականացվող հարկային բեռի թեթևացումը արտադրության բնագավառում նիւնգնցի հարկման սուբյեկտների բազմության ընդլայնմանը՝ պետության հարկային մուտքերի հանրագումարը չխախտելով: Այսպիսով, մեր կարծիքով, իր զարգացման հեռանկարային ռազմավարության ուղին ընտրելով, կառավարությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որոնք կապահովեն հարկման սուբյեկտների կողմից եկամուտների մի մասը թաքցնելու անհատականարարությունը: Սովերային տնտեսությունը իր էությամբ պոտենցիալ հարկային մուտքերի հանրագումարի մասն է: Մեր կարծիքով, սովերային տնտեսության ղեկ ուղղված կարևորագույն միջոցառումներից է անկանխիկ հաշիվների կիրառման ընդլայնման քաղաքականությունը:

Ժամանակակից զարգացած պետություններում սովերային տնտեսության ծավալների փոքր լինելու հանգամանքը պայմանավորված է հիմնականում տնտեսական գործադրություն կանխիկ գործառնությունների գրեթե բացակայության փաստով: Մեր հանրապետությունում անկանխիկ շրջանառության կիրառելիության ցածր աստիճանը, մեր կարծիքով, պայմանավորված է ոչ պետական բանկերի նկատմամբ հասարակության կողմից իրականացվող գործառնությունների ճկունության բացակայության, բանկային համակարգի թերզարգացած լինելու հանգամանքով: Մեր կարծիքով, բանկային համակարգում պետական մրցակցության մեծացման և արևակալան երաշխիքների ստման միջոցով հնարավոր կլինի ինչպես ընդլայնել բանկային համակարգի վրա պետության ազդեցության շրջանակները, այնպես էլ երաշխավորել վճարման գործառնությունը բանկային համակարգի միջոցով իրականացնելու հուսալիությունը: Բանկային համակարգի զարգացմանը զուգընթաց՝ հետազայում հնարավոր կլինի առտիճանաբար հրաժարվել պետության կողմից բանկային համակարգի վրա արհեստական միջամտություն ցուցաբերելու քաղաքականությունից՝ ապահովելով այդ գործընթացի անընդհատությունը՝ սահմանված որոշակի պայմաններին բավարարող ոչ պետական բանկերի գործունեությունը պետական երաշխիքներով ապահովելու և այլ միջոցառումների կիրառման շնորհիվ: Մեր հանրապետությունում տնտեսական ակտիվության ցածր մակարդակի հիմնական պատճառներից մեկը օլիգոպոլիստական շուկաների գերակշռության փաստն է, որի գոյությունը անխաւսուդիելի է անցումային շրջանում՝ պայմանավորված եկամուտների վերաբաշխման խիստ դիֆերենցված լինելու հանգամանքով: Պետության կողմից տնտեսական համակարգում բարենպաստ պայմանների ստեղծումը ներկա ժամանակաշրջանում պետք է ուղղված լինի տնտեսության ճեղքվածքների «վերանորոգմանը», մրցակցության համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Այս ուղղությամբ, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է ուղղակի հարկերին գերակայություն շնորհելու ռազմավարությունը:

Չսայած այն հանգամանքին, որ հարկային բարենպաստ պայմանների ստեղծումը և հարկային արտոնությունների սահմանում ծառայում են նայն նպատակին՝ հարկային ճնշման թուլացմանը, այնուամենայնիվ, այս միջոցառումների կիրառման ուղղությունները խիստ տարբերվում են միմյանցից: Բարենպաստ դաշտի

Սահմանադրության նորացման հիմքում ընկած են երևույթներ, որոնք կապված են հասարակության մեջ սոցիալական ուժերի փոխհարաբերությունների և շուկայական հարաբերությունների ձևավորման հետ:

Ռուսաստանի Նոր Սահմանադրությունը փաստաթուղթ է, որը արտացոլում է ժամանակի բնութագրական գծերը և պայմանները, որոնք ստեղծված են երկրում. ռուսական հասարակության կյանքում, նրա քաղաքականության մեջ, մշակութային ոլորտում կատարած արմատական փոփոխությունները՝ 1978 ՌՍՖՍՀ Սահմանադրության կիրառելուց հետո:

Elaboration, adopted of the Coustitution of Russia, 1993, and its
maintenance

R.S. Arustamyan

Summary

At present acting Russians Coustitution was adopted December 12, 1993. The question about its preparation had already put up in the second past of 1980-th.

Begining mith the second past of 1980-th. When a course of renewed of all sides of state and social life was taken, arises the necessity of decisive renewed and the whole system of legislation including the coustitution.

In formation of renewed the Coustitution were such processes which connected with changes of correlation of the social forces in the society and the formation of a new market relations. The new Russian Coustitution is a document, which reflects the typical frait of time and conditions turned out in the country. The essential changes which took place in the life of Russian society in its politics, economics, spiritual sphere when the Coustitution of R, S, F, S, R, 1978, was adopted.

При внимательном изучении истории карабахского конфликта становится очевидным, что он не является религиозным. В своём выступлении в Москве в октябре 2001 года (Москва, 26.10.01.СНА—Каспийское новостное агентство) президент НКР Аркадий Гукасян однозначно заявил о том, что "карабахская проблема—это результат конфликта между населением НК и правительством Азербайджана". Иными словами, конфликт имеет государственно—правовую природу. Справедливо замечает по этому поводу профессор Александр Манасян: "Государственно—правовой спор между областью и республикой превратился в этнополитический конфликт двух основных народов Азербайджана..." (1)

С другой стороны, с самого начала карабахского конфликта заметно желание определённых сил придать ему религиозную окраску. Уже 5 апреля 1921 года Пленум Кавбюро ЦК РКП (б) решает "оставить" НК в пределах Азербайджана, "исходя из необходимости национального мира между мусульманами и армянами". Во—первых, прав Г.Геворкян в том, что неверным является само противопоставление армян и мусульман. Очень многие народы и этнические группы, объединённые понятием "мусульмане", относятся к армянам с симпатией (2). Во—вторых, мусульмане не составляют единой нации и, следовательно, утверждение о "необходимости национального мира между мусульманами и армянами" является, мягко говоря, дилетантским.

Большинство трагических и экстремистских страниц истории карабахской проблемы связаны именно с активизацией пропаганды религиозной вражды и нетолерантности. Именно религиозный фанатизм мог привести к антигуманным (антиармянским) погромам в Сумгаите, а затем и в других районах Азербайджана. Один из организаторов сумгаитской резни Ахмед Ахмадов, приговорённый в ноябре 1988 года к смертной казни Верховным судом СССР, кричал в мегафон: "Азербайджанцы! Если вы хотите считать себя истинными мусульманами, то укажите, где живут армяне". (3) И не случайно, на сентябрьском (1989г.) Пленуме ЦК КПСС по национальному вопросу Генеральный секретарь ЦК КПСС Михаил Горбачёв констатировал, что "в прошлом крупные столкновения, враждебность и распри между людьми различных наций во многом были следствием религиозной нетерпимости", и что "этот фактор и сейчас даёт нередко о себе знать".

Итак, с одной стороны, казалось бы, если бы армяне не были христианами, то не было бы проявленной к ним со стороны турок и азербайджанцев жестокости. С

другой стороны, "турки держат под тяжелейшим прессом и своих курдов — мусульман (им запрещено говорить в этой стране на своём родном языке) (4).

Армянский мыслитель 19 века Микаэл Налбандян квалифицировал религию как одну из составляющих нации. Народы по-разному воспринимают цели, интересы, духовные ценности, обладают отличными друг от друга традициями, воспитанием, оценкой исторического прошлого. Но это не означает оправдания религиозной вражды. Именно противопоставлением и непримиримостью экстремистские силы в Азербайджане сумели разжечь в своём народе вражду к армянскому народу и придали конфликту бескомпромиссный характер. Но есть ли доля правды в утверждениях о враждебности ислама и христианства? Быть может, прав А.Карсеци, "азербайджанские мусульмане.... придерживаются той же враждебной интерпретации Корана в отношении христианских народов, что и турецкие мусульмане...(5). Ведь, на самом деле, Коран объявляет священную войну "джихат" не христианам, а многобожниками — язычникам. Другое дело, что Турция (а с её лёгкой руки и Азербайджан) используют воинственные идеи ислама против христианских народов. А как быть с тем обстоятельством, что 4 из пяти исламских пророков заимствованы из христианства?

Видимо, именно "турецкую интерпретацию" ислама критиковали азербайджанские ученые последних двух веков. К примеру, доктор юридических наук Агабаба Рзаев, констатируя, что "среди всех мировых религий исламская религия подвергалась наименьшему влиянию науки и мировой цивилизации" вплоть до середины 19 века, убежден, что "в этом свою пагубную роль сыграла реакционная идея о - превосходстве мусульман над немусульманами и попытка отчуждения восточных мусульманских народов от... немусульманских народов" (6). Ученый приводит и мнение К.Маркса по этому поводу: "Коран и основанное на нём законодательство сводят географию и этнографию различных народов к простой и удобной формуле деления их на две группы: правоверных и неверных... Ислам ставит неверных вне закона и создаёт состояние непрерывной вражды между мусульманами и неверными" (6). Так что, мусульмане во все времена были более привержены к религиозному фанатизму, нежели христиане. В ходе карабахского движения если и упоминалась религия армянской стороной, то подразумевались политические требования. Положим, в своей книге "Предыстория карабахского движения" историк Ваан Арутюнян пишет о закрытии в Карабахе в годы советщины христианских церквей при одновременном функционировании мусульманских мечетей. Безусловно, учёный использует вышеуказанный факт лишь в качестве доказательства попирания прав армян НК, а не с религиозным подтекстом.

Попытки противопоставить армян и азербайджанцев с учётом их религиозной принадлежности делались лишь отдельными лицами (кстати, в основном представителями интеллигенции) и небольшими группами людей. К христианству и

исламу обращались и в том случае, когда необходимо было доказать происхождение и характер имеющихся на территории НК религиозно — культурных памятников. Армянские учёные успешно доказали, что основная масса исторических памятников Нагорного Карабаха принадлежит к христианской культуре, в то время как "нет на всей территории Карабаха ни одного памятника исламской или специфически тюркской культуры, датированного ранее второй половины 18 века" (7) Если во втором случае всё объяснялось научно — исторической необходимостью, то чисто пропагандистские лозунги с целью углубления конфликта играли однозначно отрицательную роль. Президент фонда защиты гласности России Алексей Симонов отмечает, что "статья Эмиля Золя "Я обвиняю" по поводу дела Дрейфуса предотвратила антисемитскую истерию во Франции". (8) К сожалению, некоторые деятели культуры своими высказываниями в период обострения карабахского противостояния приблизили его вооружённый этап.

Ещё в 1988 году доктор экономических наук А.Заргаров безосновательно, но с прицелом утверждал, что именно "армянская церковь возглавила движение армянского народа и стала требовать включения НКАО в состав Армении", Дальше — больше: "Армянское духовенство заявило, что если Михаил Горбачёв не решит этот вопрос для армян положительно, то они предпримут более решительные меры". (9) К счастью, примерно в то же время нашлись в среде азербайджанской интеллигенции и трезвомыслящие люди. Депутат Верховного Совета Азербайджанской ССР, писатель Максуд Ибрагимбеков в своём выступлении на заседании Совета по межнациональным отношениям журнала "Дружба народов" в Москве начисто отверг, что причиной межнациональных столкновений является религиозная нетерпимость. В этой связи он приводит пример событий в Фергане, "где ферганские узбеки — потомки мусульман — суннитов устроили кровавую бойню для своих единоверцев, таких же суннитов — турок — месхетинцев" (9).

В ходе встречи с автором этих строк профессор Гамлет Геворкян (Институт философии и права НАН РА) заметил, что рядом живущие народы всегда жестоки по отношению друг к другу. Более того, война есть составляющая цивилизации. Однако есть социальный предел, который переходят лишь менее цивилизованные народы. Стоит подумать над словами ученого и признать, что армяне, если в редких случаях и отвечали жестокостью на жестокость азербайджанцев, то это был действительно ответ, который, тем не менее, не выходил за рамки "геворкяновского" социального предела. В своём выступлении на международной конференции "Журналисты против терроризма и насилия" президент Армении Роберт Кочарян заявил: "Нечеловеческая жестокость не может быть ничем оправдана. Не может быть объяснена идеологическими или, что более кощунственно, религиозными мотивами" (8).

Нам кажется, что пройдёт этап физической жестокости карабахского конфликта. Настало время, когда религиозная нетерпимость "устарела" и ослабела

настолько, что решить карабахскую проблему можно совершенно цивилизованным путём — путём переговоров по всем спорным вопросам на правовой основе.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Манасян А.С. Карабахский конфликт. Ракурсы правового подхода. — Ереван, 1998.
2. Геворкян Г.А. Нация, национальное государство, национальная культура. — Ереван, 1997.
3. Геворкян П.С. Дневник судебного процесса по уголовному делу о преступлениях, совершённых против армянского населения в городе Сумгаите с 27 по 29 февраля 1988г. — Степанакерт, 1988.
4. В. Агаджанян. — Турки в XXI веке. — Степанакерт, 2000.
5. Карсеци А. Конфликты между народами и пути их преождения: (К проблеме Нагорного Карабаха). — Ереван, 1990.
6. Рзаев А.К. Этюды из истории политико — правовых учений. — Баку, 1986.
7. НКР: путь к вершине. — Степанакерт, 2001.
8. Журналисты против терроризма и насилия. Материалы международной конференции. Ереван, 25 — 26 октября 2000г. — Ереван, 2000.
9. Конфликт в Нагорном Карабахе: Сборник статей. — Баку, 1990.

Ս.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պարաբայան հակամարտության կրոնական երանգավորման հարցի մասին

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հերքվում են Պարաբայան հակամարտությանը կրոնական երանգավորումներ տալու փորձերը:

Ուղեգծվում է հակամարտության պետաիրավական բնույթի գիտակցման անհրաժեշտությունը, ինչը դրականորեն կանդրադառնա նրա կարգավորման գործընթացին:

Տ.Տ. KARAPETIAN

About the religious colour of the karabakhian conflict

SUMMARY

The article regects the attempts of giving the religious colour to the karabakhian conflict.

There is marked the necessity of understanding of the state-legal nature of the conflict, wich will positively affect the process of its settlement.

Նորաբանություններն արցախյան պոեզիայում

Հ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Նորաբանությունները հասարակական կյանքի, գիտության, տեխնիկայի զարգացման հետևանքով կամ անհատական-ոճական նկատառումներով առաջացած բառեր են, ինքնուրույն լեզվական և անհատական¹, որոնք Ս. Ա. Էլյայանը բնորոշում է հետևյալ կերպ. «Լեզվական նորաբանությունները ստեղծվում են արտալեզվական գործոնների ազդեցությամբ, հասարակական կյանքում առաջացած նոր առարկաների, երևույթների, հասկացությունների անվանման պահանջով և ունեն անվանողական նպատակադրում»:

Անհատական նորաբանությունները մեկուսացած նորաբանություններ են, ստեղծվում են հիմնականում ոչ թե լեզվի բառապաշարը հարստացնելու, այլ ոճական նպատակադրումով և իրենց անվանողական գործառնությամբ էլ առավելապես անհատական վերաբերմունքի դրսևորման արտահայտություններ են²:

Արցախյան պոեզիայում կան և՛ լեզվական, և՛ անհատական նորաբանություններ: Հետաքրքրություն են ներկայացնում առանձնապես անհատական-ոճական նորաբանությունները, որոնց դերը ասելիքը բանաստեղծական մտածողության յուրահատկությամբ, վառ պատկերավորությամբ, հուզական և զգայական հագեցվածությամբ արտահայտելու մեջ է: Անհատական նորաբանությունները շատ են հատկապես 90-ական թվականներին գրված ստեղծագործություններում: Հայրենասիրական ջերմ զգացումով, գեղարվեստական մեծ ներշնչանքով գրված երգերում նոր բառերի կերտումն ու գործածումը ամենևին էլ պատահական չպիտի համարել: Դրանք տեղին ու մեծ լիցքով հանդես եկած բառեր են՝ միանգամայն հասկանալի ու ընդունելի հայոց լեզվի բառապաշարի համար:

Արցախի բանաստեղծները, հմտորեն օգտվելով հայերենի բառակազմական հարուստ հնարավորություններից, հիմնականում ստեղծել են բանաստեղծության բառապաշարին համահունչ բարդ և ածանցավոր բառեր՝ կազմված ժամանակակից հայոց լեզվում շատ կենսունակ հիմնական կաղապարներով: Նշենք այդ կաղապարներից մի քանիսը.

ա) Շատ է տարածված այն կաղապարը, որի մեջ գոյականը զուգորդվում է գոյականի հետ: Օրինակ՝ *լացերոց, արևաբիր, ծոցածաղիկ, ծաղկահավ, ծաղկահույս հանդահուտ, ձեռքացողուն* (Վ. Հ.), *աճյունափողի, փետրաբույլ, աստղատարափ, աստղացող, պողպատառիկ, լուսակոհակ, քարանձավաշունչ* (Ռ. Ե.), *հանձարաշուրթ* (Ս. Խ.), *երախտահուր* (Գ. Գ.) և այլն:

բ) Հանդիպում է ածականի բաղադրություն ածականի կամ գոյականի հետ՝ *արագնաթեծ, թանձրաթով, առատաքաջ, առատափշտ, նրբալույս, թարմերամ* (Վ. Հ.) և այլն: գ) Առանձին կաղապար է կազմում գոյականի բաղադրությունը բայարմատի կամ բայարևի հետ: Օրինակ՝ *բերդախոս, արցախաղարծ, թերթաթափ, ամառասուն, երկնքախոս* (Վ. Հ.), *որդեհմա, երկնաողող* (Ս. Խ.), *թախծապարուր, հուսազեն* (Ռ. Ե.) և այլն:

Բառաբարդմամբ կազմված նորաբանությունների մեջ անհատական դրոշմով և ուժեղ արտահայտչականությամբ աչքի են ընկնում բարդության բաղադրիչների որևէ եզրի համաբանությամբ կազմված և նույն բանաստեղծության մեջ գործածվող նորաբանությունները: Այս եղանակով նոր բառեր են կերտել Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Ռ. Եսայանը: Այսպես՝ *արցախաբույր, արցախաթուր, արցախամուլ* (Գ. Գ.),

¹ Ունենք նորաբանությունների նրբու տեսակներն այսպես նաև տեղիքնավորում՝ ընդհանրացող և մեկուսացած (Է. Աղաջան, Հնդկաստանը ինչպե՞ս պատկերել, էջ 170) կամ բուն անվանողական և անվանողական-աճական (Տն. Գալչոյան-Փեդրոս Ե. Մ., Գորիշկովա Կ. Ե., Մալախյան Խ. Մ., *Современный русский язык*, 1957, стр. 77)

² Ս. Ա. Էլյայան, Ժամանակակից ինչպե՞ս պատկերել, ռեալիզմի ճանաչողություն, Եր., 1989, էջ 182/83:

մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնաշողիկ, ծաղկատաճար, ծաղկաբերդիկ, ծաղկատոսիկ, թոնրաշուրթիկ, թոնրաթեժ, թոնրապսակ, թոնրապղդիկ (Վ. Հ.), ցավահարույց, ցավանոռաց, հանքառե, գալիքառե, արշալուսառե, արեգակնառե, լուսավոհակ, քարակոհակ (Ռ. Ե.) և այլն:

Նշված կաղապրներով կերտված բարդ բառերը արտացոլում են բանաստեղծների ներաշխարհը, արտաքին աշխարհի, իրականության և մարդկային հարաբերությունների նրանց ընկալումը, գեղարվեստական խոսքը դարձնում ավելի յուրահատուկ և տպավորիչ: Բարդ բառերը լիովին արտահայտում են հայոց լեզվի բառակազմական միջոցների ճիշտ և կանոնավոր գործադրումը:

Արցախյան պոեզիայում անհատական նորակազմությունների մեջ ածանցումն այնքան էլ ակտիվ բառակազմական եղանակ չէ: Եղած ածանցավոր նորակազմությունները հիմնականում բայեր են կամ բայափոխով կազմված այլ խոսքի մասերի պատկանող բառեր: Օրինակ *անհունամալ, թռչնամալ, երգանալ, աստղանալ, ժայռանալ, մենակվել, փետուրվել, աստղոտվել, մորոտվել, սաղմոսվել, վրեժվել, ծիլվորվել, երկնքվել, երկրորդվել, խարույկվել, մատաղվել, ամարասվել հանդավորվել, սրտավորվել, տղավորվել, հավքավորվել, երգավորվել (Վ. Հ.), դարաբաղվել, արցախվել, արմատվել ցորենվել, վարդանվել, ավոյանալ (Ս. Խ.), գաղտնիքվել, արցունքվել, անահիտվել (Ա. Ք.) և այլն:*

Գոյական+վ+ել, գոյական+ան+ալ(ել), գոյական +ավաոր+վել կաղապարով բառեր կազմելը համարվում է Արցախի բանաստեղծների նախասիրած բառակազմական հնարաններից մեկը: Նշված կաղապարով կազմված բառերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ հատուկ են իրենց մեջ պարունակող գոյականական բաղադրիչին: Արանց իմաստն ուղղակիորեն անցնում է բային, որով և առարկային մի տեսակ տրվում է գործողության կամ շարժման բնույթ:

Արցախյան պոեզիայում կան նաև քիչ թվով ածանցավոր նորակազմություններ՝ կազմված *ոտ, իկ, ավուն, ավոր, որեն, ենի, երեն* ածանցներով: Այսպես՝ *երզոտ, երկնոտ, վարդոտ, անցյալոտ, խաղաղիկ, թանձրիկ, երանիկ, թախտիկ, քնարավուն, պարվոր, երգավոր վերքավոր (Վ. Հ.), հուսավոր (Գ. Գ.), առվորեն (Վ. Հ.), արևորեն (Ա. Ք.) հոտաղորեն (Գ. Գ.), երգենի, հրենի, շարենցենի, լեռներեն (Վ. Հ.) և այլն:*

Գորդի բառապաշարի նորաբանություններն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն նոր բառերի կազմության ճշտությունն ու կանոնավորությունը, դրանց համապատասխանությունը լեզվի տվյալ բառակազմական օրենքներին ու սկզբունքներին, այլև այդ բառերի տեղն ու դերը գրական լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ, ինչպես նաև դրանց գեղարվեստական ոճական կոնկրետ գործառնությունը, գեղարվեստական տվյալ խոսքի մեջ ունեցած ոճական արժեքը:

Այս չափանիշներով ուսումնասիրելով արցախյան պոեզիայի բառապաշարի նորաբանությունները՝ եկել ենք այն եզրակացության, որ նորակերտ բառերի գործածությունը բնագրում խորապես հիմանավորված է ու պատճառաբանված, որ նման բառերն ունեն իմաստային որոշակի նրբություն, հանդես են եկել ոճավորման բնորոշ գծերով ու երանգներով, արտահայտել բանաստեղծների ապրումները, բարձրացրել խոսքի գեղագիտական արժեքը: Ասվածի լավագույն արտահայտությունն են Վ. Հակոբյանի «Սեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում արցախյան տառապած, բզկտված, բայց քաջերով հայտնի հողը միանգամայն դիպուկ ձևով որակող *առատավիշտ* ու *առատաքաց* բառերը:

-Առատաբուր է այս հողն, իսկապես,
առատաբերք է այս հողն, իսկապես,
բայց ավելի շատ
առատավիշտ է ու առատա...քաց:

Համառոտագրություններ

Գ.Գ.- Գուրգեն Գաբրիելյան

Ս. Ն.- Սոկրատ Նանյան

Վ. Հ.- Վարդան Հակոբյան

Ռ. Ե. – Ռոբերտ Եսայան

Ա. Ք. - Անահիտ Քոչարյան

ГАЗАРЯН АСМИК

НЕОЛОГИЗМЫ В АРЦАХСКОЙ ПОЭЗИИ

Резюме

В данной статье подвергаются анализу известные в арцахской поэзии индивидуально-авторские неологизмы, которые образованы по традиционным в современном армянском языке моделям. Подчёркивается их особая роль в формировании поэтического мышления, яркого воображения и в выражении эмоциональной насыщенности.

HASMIK KHAZARYAN

NEOLOGISMS OF ARTSAKH POETRY

Summary

This article analyses the known individual – authorical neologisms of Artsakh poetry, which are made according to the traditional models. First of all are stressed their special role in forming of poetical thought, impressive imagination and in expression of emotional richness.

Գեղագիտական հետաքրքրությունը պատմական անցյալի նկատմամբ հատկապես բորբոքվում է պատմության շրջադարձային պահերին, այսինքն, երբ մի արտասովոր ուժով է դրսևորվում ազգային ինքնագիտակցությունը, երբ ժողովուրդը, հետադարձ հայացք նետելով անցյալին, փորձում է նրանից քաղել իր պատմական իմաստությունը, որի արդյունքում «ապագայի սերունդը կրթվում է զգուշանալով յուր նախորդների սխալներից և հետևում նրանց լավ գործերի օրինակին»¹:

Ի տարբերություն նման պատմավեպերի Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ»-ը բնավ պատերազմի ծնունդ չէր. այն գրվեց 70-ականներին, այսինքն գրական նոր սերնդի զարթոնքի տարիներին և, հիրավի, ապացույցն էր այն բանի, որ արդեն հաղթահարվել են 30-ականների մտավախությունները, թերահավատ պատկերացումները մեր պատմական բացառիկ անցյալի և ազգային արժեքների ու նշխարների մասին: Անդրադառնալով «Արշակ Երկրորդ» պատմավեպին ակադեմիկոս Սևակ Արզումանյանը գրում է «Գրական ճշմարիտ գործը ծնվում է ազնիվ ներշնչանքով: Այդ ներշնչանքը հատուկ է տաղանդավոր գրողներին: «Արշակ Երկրորդ» պատմավեպը ազնիվ ներշնչանքի պտուղ է»²:

Սակայն ինչպես պատմավեպերի մեծամասնության, այնպես էլ «Արշակ Երկրորդ»-ի երևան գալուց անմիջապես հետո մամուլը հեղեղվեց բազմաթիվ ընդդիմախոսների քննադատական հոդվածներով, որոնցում հիմնականում արժարժվում էր այն միտքը, թե իբր հեղինակը շատ է մարդկայնացրել Արշակ թագավորին և, հեռացնելով նրան պատմականությունից ինքն էլ հեռացել է բուն պատմությունից: Այս առումով կարելի է մեջբերել բանասիրական գիտությունների ղեկավար Արտաշես Մարտիրոսյանի մեկնաբանությունը պատմավեպի վերաբերյալ. «Հեղինակը չափազանց ազատ է վարվում պատմության հետ: Իրադարձությունների ամբողջ ամառոճը սխալ է հանգուցված: Դա ինքնին թույլատրելի չէ...»³: Նրա կարծիքով «վեպի բոլոր հերոսները հակառակ են ավանդույթին և հանդես են գալիս իբր նեց պատմական նախատիպերի հակոտնյան»: Եվ ուշագրավ է, որ Ա. Մարտիրոսյանի այս մոտեցման հետ համամիտ էին շատերը: Սակայն, ըստ էության, հարցին միակողմանի մոտեցումը նույնպես սխալ կլիներ, քանզի Զեյթունցյանն այստեղ ոչ միայն չի հերքել ու դեմ գնացել ավանդականին, այլև լրացրել ու զարգացրել է այն ժամանակաշրջանի պատմագրության իրողություններն ու գեղարվեստական գրականության նախորդ փորձերը: Իսկ դրանք շատ էին և բնականաբար ամեն մեկն էլ յուրովի էր նկարել Արշակին, բայց գրեթե բոլոր ստեղծագործություններում էլ, լինի դա դրամա կամ պատմավեպ, ողբերգություն կամ չափածո, Արշակը՝ զոհ գնալով ավանդական պատմագրության հանիրավի կոտորածներին, ներկայացված է որպես դաժան, սաստկաբարո, արնածարավ, սեփական կրքերին և քմայքներին գերի տիպար, որն էլ հետևաբար հանգեցրել էր քաղաքական բացառիկ գործչի իսկական դեմքի աղավաղմանը:

Պ. Ջեթյունցյանը ժամանակի պարտադրանքով փորձեց վերագնահատել անցյալը, գտնել այնտեղ նոր օրերի համար պիտանի գանձեր և հոգեհարազատ գծեր: Նա դիմեց IV դարի 60-70-ական թթ անցքերին, դարաշրջան, որն, ըստ ամենայնի, շատ նշանավոր էր, թերևս այնքանով, որ վճռվում էր հայ պետականության հարցը:

Արշակի գահակալության շրջանի անցքերը բավական լայն արտացոլում էին գտել դեռևս հայ կլասիցիզմի և ռոմանտիզմի դրամատուրգիայում: Տեղին է հիշել Արմենակ Հայկունու «Ողորմախաղա», Սարգիս Վանանդեցու «Մեծն Ներսես կան Հայաստանի բարերարը», Սեպուհ Մինասյանի, Մկրտիչ Պեշկեպաշյանի, Խորեն Գալֆայանի, Թովմաս Թերզյանի «Արշակ Երկրորդ» նույնանուն դրամաներն ու ողբերգությունները: Այս ժամանակաշրջանին էին դիմել նաև Րաֆֆին «Սամվել», Ստ. Զորյանը «Պապ թագավոր», «Հայոց բերդը» և ուրիշներ, ժամանակաշրջան ,երբ Հայաստանը կրկին դարձել էր թատերաբեմ և կռվախնձոր Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև:

Արդեն ձևավորված և կայացած պարսկասեր ու հունասեր անմիաբան նախարարների, հարստացած և իշխանության դեկին ծգտող կղերականության, արտաքին և ներքին թշնամիների անընդհատական հարձակումներից և միջնախարարական անվերջ կռիվներից բզկտված ու

քայքայված երկիր-ահա Հայաստանի ամբողջական պատկերը, երբ գահին նստեց Արշակ Երկրորդ արքան, վերջապես ժամանակաշրջան, որին վիճակված էր լինել մեր բազմադարյա պատմության ամենաողբերգական և ամենադաժան շրջաններից մեկը:

Ինչպես նշեցինք, այս դարաշրջանին արդեն անդրադարձել էր Ստ. Զորյանը «Հայոց բերդը» պատմավեպում, սակայն այստեղ Զորյանին, ի տարբերություն «Պապ թագավորի», չի հաջողվել գեղագիտորեն լիարժեք մարմնավորել նյութը, հատկապես զխավոր հերոսների, մասնավորապես Արշակ Երկրորդի կերպարի պատկերումը, որի պատճառով էլ «Հայոց բերդը» բազմիցս ենթարկվել է սուր քննադատությունների: Արշակի արարքները և պատմական հայտնի դաժանությունը դժբախտաբար վեպում չեն գտել բաղաբալան և հոգեբանական արդարացում, որի պատճառով 4-րդ դարի նշանավոր արքան զրկվել է մարդկային բարեմասնություններից: «Օրինակ պատմությունից հայտնի է, որ Արշակը բնաջնջում է Կամսարականների տոհմը, սակայն վեպում այն ներկայացվում է որպես սովորական, հերթական մի չարագործություն: Միաժամանակ նույնը կարելի է ասել Գնելի սպանության պատկերի մասին: Զորյանը փորձել է կյանքը վերցնել իր բարդության մեջ, պատմական մեծ անհատի գործն ու վարքը ներկայացնել պատմական հանգամանքների լույսի տակ, հայտնի արարքները և դաժանությունները բացատրել արտաքին գործոնների ազդեցությամբ: Այսպես է, բայց կատարումը նկատելիորեն թույլ է, հերոսների անողոքությունները երբեմն հակակրանք են առաջացնում մարդու մեջ, քանի որ գեղեցիկի սկզբունքը չի պահպանվում դաժան արարքներին նվիրված հատվածներում», - գրում է ակադեմիկոս Հ. Թամրազյանը⁴:

Այո, հիրավի, ինչպես «Հայոց բերդում», այնպես էլ «Սամվելում», հեղինակները զգալիորեն պակաս ուշադրության են արժանացրել հերոսի ներքին մարդկային կյանքի ներաշխարհի պատկերմանը և, ընդհանրապես, այդ շրջանի մեր պատմությունը ժանրային այլևայլ ձևերով արտացոլող հեղինակները հիմնականում ուշադրություն են դարձրել իրական-պատմական հերոսների թաղաքական-հայրենասիրական վարքագ-

ծին, այլև նրանց արտաքին հարաբերություններին և գրեթե բոլոր հեղինակների մոտ էլ նպատակը մեկն է եղել՝ պատմական փաստերի գեղարվեստական վերակենդանացման ճանապարհով արծարծել հայրենիքի պատմական ճակատագրի հետ կապված հարցերը, ժամանակակից սերնդի մեջ բորբոքել հետաքրքրություն հայ անցյալի դրվագների նկատմամբ, նախահայրերի հերոսական արարքների օրինակով ժամանակակիցների մեջ դաստիարակել հայրենասիրություն, քաղաքացիական պարտքի գիտակցություն և այդ ճանապարհով նպաստել ժողովրդի ազգային ինքնաձանաչողության մշակմանը, որ այնքան կարևորություն ուներ 19-րդ դարի հայ իրականության համար :

Պերճ Ջեթունցյանը բոլորովին նոր սկզբունքներով մեկնաբանեց անցյալի իրողություններն ու նրանց գեղարվեստական ընկալումը: Հաղթահարելով գրականության մեջ, հատկապես հայ կլասիցիստական ու ռոմանտիկական դրամատուրգիայի ակնառու թերություններն ու սահմանափակությունները Ջեթունցյանին հաջողվեց մի բացառիկ հաղորդելով՝ վերակենդանացնել անցյալի մշուշում կորած իրականությունն ու նրա հերոսներին : Իրականում հեղինակի նպատակն այստեղ պատմական դեմքերի ու դեպքերի վերականգնումը չէ, այլ գեղարվեստական տարբեր հնարներով դրանց գաղափարական - գեղագիտական նորոթյա մեկնաբանությունը :

Հեղինակի ըմբռնմամբ կարևորը ոչ թե արտաքին ճշմարտացիությունն է, այլ ներքին ճշմարտությունը, - գրում է Հակոբ Մարգարյանը⁵: «Հեղինակը, - հավաստում է Պ.Ջեթունցյանը, - սկզբում այնքան հավատարիմ մնաց փաստին, որ վավերականությունը դադարեց հավատ ներշնչելուց և դարձավ հեքիաթ: Այդ ժամանակ հեղինակը դիմեց հակառակ քայլին, գրեց ժամանակակից հեքիաթ»:

«Արշակ»-ի նվաճումներից մեկն էլ այն է, որ Ջեթունցյանն այստեղ առանձնահատուկ ուշադրության է արժանացրել կենտրոնացած պետականության հակոտնյա գլխավոր ուժի՝ կենտրոնախույս նախարարների առանձին ներկայացուցիչների տիպականացման վրա՝ պատմավեպի գրեթե բոլոր հատվածներում կերտելով ուժեղ, շեշտված ու կենդանի անհատականություններ: Եվ, ըստ ամենայնի, մասամբ նման կերպարների միջոցով է փառասանին հաջողվել ներկայացնել դարաշրջանի իրականության էական գծերը, այս ճանապարհով միաժամանակ կարևորելով Արշակունի թագավորի պետականության կայացման կենսական առաքելության իրականացման աննկարագրելի խոչընդոտները, նրա

հասարակական - քաղաքական առաջադիմական ընթացքի նշանակությունը հայոց աշխարհի պատմական ճակատագրի համատեքստում: Միով բանիվ, Արշակի կերպարը անտարակույս չէր ունենա արտահայտչական այն ուժը, եթե նրա հակառակորդ թևի հերոսները հանդես գային որպես ճղճիմ և կամազուրկ ամենավորություններ: Այս առումով պատմավեպում հաճախ կարող ենք հանդիպել նախարարների հաջողված կերպարների, որոնցից յուրաքանչյուրը յուրովի վերակենդանացում է իր դարին ու դասակարգին հատուկ գծերը, մարդկային փոխհարաբերությունները, բնավորության ու հոգեբանության տիպական հատկությունների վերածնունդ: Առավել հաջողված կերպարներից են օրինակ՝ Մերուժան Արծրունին, Ներսես Կամսարականը, Կենան Ամատունին, Վարձա Ապահունին, Վահե Վահունին, Մանեճը, Սուրակը և ուրիշներ: Սակայն հարկ է ընդգծել հատկապես Մերուժան Արծրունու կերպարի կերտումը :

Վերջինիս կերպարը իրոք գեղարվեստական խոր ընդհանրացում է, Ջեյթունցյանի արվեստի առիավատչյան :

Իր դարի ու դասակարգի ծնունդն է Մերուժանը, Արշակունյաց կենտրոնածիղ պետականության երդվյալ ախոյանը, նախարարական կենտրոնախույս ձգտումների և ինքնազվխության կենդանի մարմնացումը: Ինչպես վիպական գործողությունների մեծատաղանդ պատկերումով ու մեկնաբանությամբ ընդհանրապես, այնպես էլ մասնավորապես Մերուժանի կերպարի միջոցով հեղինակը փայլուն կերպով տվել է ընդդեմ Արշակունյաց դինաստիայի նախարարական բախումների ճշմարտացի պատկեր՝ ու պատմական պատճառները, ընդգծելով և գեղարվեստորեն մեկնաբանելով այդ անգիջում պայքարի հասարակական – քաղաքական շարժառիթները, միաժամանակ չանտեսելով թերևս անձնական գործոնը : Կասկած չկա , որ հատկապես այստեղ Ջեյթունցյանն իրավամբ մի քայլ առաջ է անցել հայ գրականության մեջ իր նախորդներից, որոնք նման դեպքերում հիմնականում պատկերում էին սուբյեկտիվ համգամանքն և հուզական պահը :

Սակայն , այնուամենայնիվ , Ջեյթունցյանի ստեղծագործական ինքնատիպ տաղանդի արգասիքը , առաջին հերթին , Արշակի կերպարի կերտումն է: Ջեյթունցյանի Արշակը առաջին հերթին մարդ է, սովորական մահկանացուն բնորոշ թերություններով և առավելություններով. մերթ դաժան և անզուսպ , մերթ չնչին ուրախությունից մանկան պես հրձիղ, մերթ էլ թագավորական տիտղոսով զոռոզացող, ակամա իր սպասավորին և հպատակին նախանձող... :

Նրան նստեցրել է զահին պարսից արքան , որը և ենթադրում է, որ նա խոցելի է բյուզանդացիների կողմից , և , ընդհակառակը, խոցելի կլիներ պարսիկների կողմից , եթե թագն ընդուներ Բյուզանդիայից: Այսինքն, այսպես թե այնպես Արշակը միևնույն է խոցելի է, որը և գեղագիտական հանճարեղ նրբագեղությամբ պատկերել է Ջեյթունցյանը Արշակի մենախոսության մեջ. «Հայոց արքան միշտ է խոցելի: Մոր արգանդից, իր ծնունդից, իր առաջին ճիչից, իր առաջին ինքնուրույն քայլից, երբ բոլորին թվում է, թե նա այն չի կառչում շրջապատի իրերից: Եվ հիմա արքան պետք է կայսրի սիրտն առնի՝ հոգևոր իշխանությունը տալով բյուզանդական կողմնորոշում ունեցող Լուսավորչի տոհմին , պետք է ինչ որ չափով թոթափի իր մեղքը կայսրի առաջ: Նորից այդ հավասարակշռությունը: Երկիրը վխտում է լարախաղացներով , որոնց դրամ և ուտելիք են բաշխում ապրուստի համար , իսկ գլխավոր լարախաղացին փոխարենը տալիս են այ այս թագը , տես ինչ գեղեցիկ է»⁷:

«Արվեստի գործ է «Արշակ Երկրորդը», - գրում է Ս. Արզումանյանը , - որի մեջ երևում է կյանքի, պատմության, մարդկային հասարակական երևույթների խոր ճանաչողությունը, իրական – պատմական փաստի մեջ գեղարվեստական փաստը հայտնաբերելու հմտությունը, ընդհանրացման վարպետությունը և այլն: Կարելի է շեշտել նաև գեղարվեստական հնարանների բազմազանությունը, զուտ տեխնիկայի կառուցվածքի մանրամասնի և ընդհանուր համաչափություն, պատումի տարբեր ձևերի կիրառում, պոետիկայի ժամանակակից գինանոցի պաշարների օգտագործում և այլն»⁸:

1. Րաֆֆի, Խամսայի մեյիքությունները, Երևան, 1964թ, էջ161
2. Ս. Արզումանյան, Խորհրդահայ վեպը, Երևան, 1990թ, էջ 564
3. Ս. Մարտիրոսյան, Խորհրդահայ արվեստ, 1978թ, թիվ 7, էջ48
4. Հ. Թամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, 1975թ, էջ71
5. Հ. Մարգարյան, Ժամանակակից վեպը, Երևան, 1981թ, էջ 30
6. Պ. Ջեյթունցյան, Կատակերգություն առանց մասնակիցների, Երևան, 1975թ, էջ 5
7. Պ. Ջեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977թ, էջ17-18.
8. Ս.Արզումանյան, Խորհրդահայ վեպը, Երևան, 1990թ, էջ 531

THE HISTORICAL NOVEL OF PERCH ZEITUNTSIAN „ ARSHAK THE SECONDS “

A.K. Ghouljian

Summary

The given article presents an analysis of Perch Zeituntsian's historical novel „ Arshak II “.

The writer managed to justify and reconstruct the figure of Arshak II, who had been misrepresented in the armenian annalistic literature. The revealed his true identity and the activity of a unique politician on the basis of documentary facts.

ИСТОРИЧЕСКИЙ РОМАН ПЕРЧА ЗЕЙТУНЦЯНА „ АРШАК ВТОРОЙ “

А.К.Гулян

Резюме

Проанализирован известный исторический роман Перча Зейтунцяна „ Аршак Второй, “ в котором писателю удалось на основе документальных фактов оправдать и воссоздать образ царя Аршака Второго, искаженно истолкованного армянской летописной литературе, раскрыв реальное лицо и деятельность уникального политика.

Կ.Ա.ՀԱԿՈՅԹԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ-գրականագետ Ա.Խանյանի ստեղծագործությունը արդի հայ պոեզիայի արցախյան հատվածի ինքնատիպ էջերից է: Ընթերցող հասարակությանը նա հայտնի է մեկ ու կես տասնյակ բանաստեղծական ժողովածուներով, որ պարբերաբար լույս են տեսել «Կարկաչ», «Սիրտս ձեզ հետ է», «Լեռների երգը», «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանքներ», «Իմ ծիածանը» և այլ խորագրերով: Բանաստեղծի համար արտակարգ բեղուն ու ընդգրկուն են եղել 20-րդ դարի վերջին երկու տասնամյակները: Նա երգել է իր ժողովրդի հերոսական անցյալը և այդ անցյալից ճամփորդություն կատարել դեպի մարտնչող ներկան ու լուսավոր ապագան: Արցախի ազգային ազատագրական պայքարի տարիներին նա հավատ ու հույս է ներշնչել «հազար ու մի դավ և փորձանք» տեսած հայրենակիցներին, ոգևորվել նրանց ձեռքբերումներով ու վերելքներով: Նա 1988-ին տառապել է ու դառնացել բնության կողմից մատուցված արհավիրքի համար, դրան հակադրել մայր ժողովրդի ապրելու և արարելու կամքը, հիացել փորձություններին դիմակայելու նրա անսպառ ուժով, հոգեկան կորովով, անընկճելի ոգով: Արցունքի միջից հավատով տրոփող սրտով բանաստեղծը դիմել է.

Իմ մայր ժողովուրդ,

Քո կամքի ուժով ապրել ես դարեր,

Կապրես և հիմա:

Ա.Խանյանը տարիների ընթացքում անընդհատ խորացրել է ստեղծագործական իր նախասիրությունները, հարստացրել ասելիքն ու կատարելագործել բանաստեղծական արվեստը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի արտահայտչական հնարավորություններից՝ խոսքին հաղորդելով մաքուր ու լուսավոր երանգներ: Այդ երևույթը ժամանակին նկատել է արձակագիր Մկրտիչ Արմենը: Գրախոսելով Ա.Խանյանի «Սիրտս ձեզ հետ է» գրքույկը, ականավոր գրողը ընդգծել է. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը... Հանելի է կարդալ Սոկրատին, որի մոտ այնքան արև կա և լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ և ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մոռալ է ընդհանուր

տրամադրությունը, այլև, դրա հետ սերտորեն կապված համեմատություններն ու բառային մատերիալը” (“Գրական Աղբյուրացան” ամսագիր, 1966թ. N 5):

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում լայնորեն օգտագործվում են կրկնությունները, որոնցով արտահայտվում են հատկանիշի սաստկություն, բազմակիություն, հուզականություն, մտքերի իմաստային խորություն: Կրկնությունները ստեղծվում են տարբեր մակարդակներում ու տարբեր չափերով: Նրա բանաստեղծական խոսքին բնորոշ են բառերի, բառակապակցությունների կրկնությունները.

Երեք գլխարկ տեսանք այնտեղ,

Երեք սև թուղթ - երեք ցավ,

Երեք որդու կորուստն ահեղ

Մեր սրտերին ծանրացավ:

(“Այրող հուշ”)

Այս բանաստեղծությունը ձոնված է մեր բարի տատիկների հիշատակին, որոնք տեսել են Հայրենական Մեծ պատերազմի սարսափները, խորապես տառապել իրենց որդիների կորստի ցավից: Հեղինակը երեք հատկանշական թվականի կրկնությամբ րնդծել է երևույթի ծանրությունը և ստեղծել հոգեկան ապրումների, անսփուփ կսկիծների ու վշտահար տրամադրությունների ցնցող պատկեր:

Խանյանի բանաստեղծությունները հարուստ են տարբեր ձևի ու կառուցվածքի կրկնություններով: Գործածության հաճախականությամբ գերազանցում են վերջակրկնությունները (անաֆորներ) ու սկզբնակրկնությունները (էպիֆորներ).

Աշխարհը լավ,

Աստղերը լավ,

Երգը լավ,

Ծիծաղը լավ,

Երթը լավ,

Լավի տենչով, լավի սիրով քեզ գտա,

Լավին փարված, կյանքի գիրկը ես մտա:

Բանաստեղծը կապակցությունը նույնությամբ չի կրկնում, փոփոխում է լավ բառի առարկայական հատկանիշները՝ ուժեղացնելով բանաստեղծական խոհաիմաստային երանգները, այն դարձնում լավ/պատկերավորման ամբողջական հիմք:

Հեղինակային ոճի անհատականացման խոսում չափանիշներից են կրկնավոր բառերի մի այլ փունջ, որոնք կազմում են կրկնավոր բարդություններ: Կրկնավորները վաղուց ի վեր հատուկ են բանավոր խոսակցական լեզվին, ուստի նման միջոցները առատությունը հավաստում է Խանյանի խորը կապվածությունը ժողովրդական մտածողությամբ:

Նրա պոեզիան հարուստ է կրկնավոր բարդությունների ամենաբազմազան ձևերով: Դրանք արտահայտված են տարբեր խոսքի մասերով և ունեն տարբեր շարահյուսական կիրառություններ: Թվարկենք որոշ կրկնավորներ՝ *մասունք – մասունք, կուտակ-կուտակ, կամաց-կամաց, կաթիլ-կաթիլ, երամ-երամ, շերտ-շերտ, երանգ-երանգ, փունջ-փունջ, պես-պես, ուրախ-ուրախ* և այլն:

Բանաստեղծը արտահայտչականությունը ուժեղացնելու նպատակով օգտագործում է բավականին հարադրություններ՝ անվանական և բայական, հակադրություններ, որոնք ավելի են ամբողջացնում երևույթների իրական արտահայտությունը տեսնելու, զգալու, վերլուծելու գաղափարը: Նախադասության մեջ կատարում են միևնույն պաշտոնները՝ դառնում բազմակի անդամներ: Ահա մի քանի օրինակներ. *երազ-սեր, աստղ-մարդ, մարդ-աստված, արև-հրաշք, ցուրտ ու տապ, կոպիտ ու նուրբ, սեր-արև, ծառան ու զավակը* և այլն:

Ս. Խանյանի պոեզիայի պատկերավորման համակարգում քարմ ու դիպուկ մակդիրները, գեղեցիկ, հյութեղ փոխաբերություններն ու համեմատությունները միաձույլ ու անվերջ շղթա են կազմում, որոնք գործածության բազմազանությամբ արտացոլում են հեղինակի բանաստեղծական բառապաշարի ճոխությունն ու շքեղությունը: Նրա օգտագործած մակդիրները բանաստեղծական խոսքը դարձնում են պատկերավոր, ներգործում, գեղեցիկ ու տարողունակ, մտքերին հաղորդում են նոր լիցք, ստիպում ընթերցողին հրճվել ու հիանալ, խորհել ու մտածել: Այսպես՝ *աստղոտ տանիք, կապույտ երազ, ոսկեկամար երկինք, արևային փառք, ժայռեղեն կուրծք, ճերմակ կանչեր, հավերժ բաբախում խարույկներ, ոսկե ալիք* և այլն:

Ս. Խանյանի պոեզիայում ուրույն տեղ ունեն համեմատությունները, որոնք իրենց հերթին հարստացնում են հեղինակի արտահայտման բանաստեղծական միջոցները, նոր լույսով բացահայտում նրա ինքնատիպությունը:

Քիրսա սարը հավերժական զանգի նման,
Դողանջում էր պապիս հոգում...

(“Պապս”)

կամ

Ջրերիդ նման անվերջ հոսեցի
Քո սրտի միջով...

(“Ջրույց Հայաստանի հետ”)

կամ

Թող ցորենվե՛մ՝ միայն ոսկե հաշանի տակ
Թե՛ն մոլորվե՛մ՝ ինչպես տարում արևն անմար:

(“Իմ սուրբ օջախ”)

կամ

Արևն ահա մայր է մտնում,
Ինքն իրենից գոհ է այնպես.
Փայփայել է հողագունդը
Օջախ ու տուն պահող մոր պես:

(“Արևն ահա...”)

Ս. Խանյանի պոեզիան աչքի է ընկնում անձնավորում - փոխաբերություններով:
Առարկաներին վերագրվում են այնպիսի գործողություններ, որոնք իրականում նրանց
հատուկ չեն: Նման դեպքերում բայ- ստորոգյալները գործածվում են ոչ թե սովորական,
ուղղակի իմաստով, այլ փոխաբերաբար:

Ամպերը հալչում են,
Ջրերը կանչում են,
Լեռները ժպտում են,
Վազերը լացում են:

Հեղինակը ստեղծել է զարման անզուգական պատկեր՝ զարմանալի շնչով ու
բույրերով լի:

Բանաստեղծի լեզվամտածողության մախասիրած միջոց է համարվում երևույթների,
առարկաների բնութագրությունը բառակապակցություններով արտահայտելը: Դրանք
խոսքը դարձնում են դիպուկ, պատկերավոր և ավելի ներգործուն: “Իմ օրորոց”
բանաստեղծությունը մի սրտառուչ երգ է՝ ձոնված մայրիկին, որի էության ու գաղափարի

բացահայտման առաջնքը օրորոցն է: Վերջին քառատողը բանաստեղծի կողմից կարծես հարցադրում- բողոք է օրորոցին, որը չի կարող չրջել կյանքի անիվը, հետ բերել բանաստեղծի մանկությունն ու մայր մտած մահացած մայրիկին:

Դու չես կարող, օրորոց իմ,

Մանուկ դարձնել ինձ կրկին,

Այն, չես կարող դու ետ բերել

Իմ մայր մտած մայրիկին...

(“Օրորոց իմ”)

Ս. Խանյանի բանաստեղծություններից շատերն ավարտվում են ասացվածքային ընդհանրացումներով: Ս. Կորյունը այդ կապակցությամբ դեռևս 1963-ին գրել է. “Ս. Խանյանը բանաստեղծական մի լավ սովորության է հետևում. աշխատում է իր բանաստեղծությունն ավարտել աֆորիստիկ տողերով, հակիրճ ու ավարտուն մտքով” (“Գրական Աղբյուր” ամսագիր, 1963, N 6):

Դրա հետաքրքիր վկայություններից են.

Ժող ծովերը հար ծփան,

Մեր Սևանն էլ նրանց մեջ:

(“Սևան”)

կամ

Ով չի հասկացել, թող որ իմանա,

Որ գեղեցկուհի մայր ունեցողը

Միշտ էլ հերոսի պատիվ կունենա...

(“Արցախ”)

կամ

Ավյունս կարող է քնել,

Արյունս չի քնում երբեք:

(“Կրծքիս տակ”)

Ես իմ աչքերի լույսը տվել եմ

Աշխարհի խղճին,

Աշխարհի խիղճը էլ չի կուրանա.

(“Աշխարհի խիղճը”)

կամ

Քանի դու կաս իմ կրծքի տակ,

Կյանքն ինձ համար աստղոտ գետ է:

(“Դու...”)

Ս.Խանյանը, օժտված լինելով ժողովրդական մտածողությամբ, ուշադրություն է դարձրել ժողովրդական շեշտ ունեցող բառերի առատ գործածությանը: Դրանք նոր շուր ու բարնություն են տալիս հեղինակի բանաստեղծական մտածողությանն ու երևակայությանը: Ահա մի քանի արտահայտություններ՝ *հանդ ու չղեր, օճորք, կճախաշ, խաշամ, պատառ, տուտ, ճաք, օջախ, շամանդադ, կանուխ, շափաղ, ջրատված* և այլն:

Ս. Խանյանի բանաստեղծությունները գերծ են պաճուճանքներից, գունագեղությունից, բայց բխում են սրտից, ջերմ ու քնքուշ են, շաղախված բարու, կարոտի, սիրո ու լույսի քրքիռներով: Տեղին է հիշել մեծամուն երգիծաբան Հ. Պարոնյանի դիպուկ խոսքը. “Ամենեն գեղեցիկ զարդը անզարդությունն է”:

Ս. Խանյանի գեղագիական կողմնորոշումը խոսքի սեփական բույրը, համը, գույնը պահելու մեջ է: Հեղինակը համոզված է, որ արարումներով անցած ճանապարհին գտել է ինքն իրեն:

Ես հաստատ գիտեմ, անվանն իմ բարի

Մոռացման փոշին երբեք չի չորի,

Երգիս տվեցի շունչը իմ դարի,

Հայրենի հողին՝ իմ սիրտն ու հոգին:

Красота языкового свособразия

К.А.Акопян

Резюме

Статья посвящена изучению языковых средств произведений поэта —литературоведа С.Ханяна — автора 15 сборников стихотворений и поэм. В своих произведениях поэт умело использовал выразительные возможности армянского языка, обогащая свою речь чистыми и светлыми оттенками. Это явление в поэзии С.Ханяна в своё время заметил знаменитый писатель Мкртич Армен. В поэзии С.Ханяна использованы эпитеты, повторы, сопоставления, метафоры, сравнения, которые показывают его лексическое богатство. Поэтическое мышление С.Ханяна близко к народному, поэтому в его стихах встречаются выражения, звучащие как пословицы.

The Fineness of the Linguistic Originality

K. A. Hacopian
Summary

The article is dedicated to the study of the linguistic means, used in the works of the poet and literary critic Socrat Khanian. He is the author of 15 collections of poems and verses. In his poems he used expressive means of the Armenian language, which enriched his poetry with pure and light nuances. His verses are full of epithets, repetitions, similes, metaphors. This phenomenon was noted by the famous writer Mkrteech Armen. Khanian's poetical thinking is close to the Armenian folklore in his poems we find many expressions sounding like proverbs.

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՆԵՐՈՒՄ**

Ն. Գ. Խաչատրյան

Հակոբ Պարոնյանի խոսքի ինքնատիպ ոճը պայմանավորված է նաև նրա համեմատականության հարթությանով: Համեմատությունը նրկու տարբեր առարկաների, նրկույթյաների անուններ գոգորդումն է, որը կատարվում է համապատասխան առարկաների որևէ հատկանիշի նմանության կա նույնացման հիմքի վրա: Համեմատությունը անձների, առարկաների և նրկույթյաների հատկանիշներ հետևանքով, ճանաչելի դարձնելու կարևոր միջոց է: Համեմատության միջոցով համեմատվող առարկան նրկույթյան տեսանելի են դառնում: Ըստ հաճախ համեմատության հիմքում դրվում է առարկաների, նրկույթյան ոչ թե առարկայական հատկանիշը, այլ դրա սուբյեկտիվ, անհատական ընկալումը:

Հակոբ Պարոնյանը մեծ վարպետ է համեմատությունների ստեղծման բնագավառում, որոնցով նա խառնազանում է ժամանակի հասարակական, կենցաղային բացասական նրկույթյանը, ապագային ազգային ներկայացնելու, դիմացինին մոլորեցնելու համար ջանքերը: Դրանք ավելի հաճախ արտահայտում են հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող նրկույթի նկատմամբ, որը կարող է լինել դրական կամ բացասական: Հեղինակն, ծաղրական գույները խտացնելու նպատակով հեղինակը գործածում է ստեղծագործության բովանդակությունից բխող, նրա տրամադրություններին համապատասխան համեմատություններ: Համեմատություններով պատկերում է իր կերպարների հոգեբանությունը, գործողությունները: Նրբեմն նրկույթները ներկայացնում է նոր կողմերով, նոր կապակցությունների մեջ և օգնում իրականությունը խոր և բազմակողմանի ճանաչելուն:

Համեմատության կազմում առկա են համեմատվող, համեմատելի առարկաներ իրենց այն հատկանիշներով, որոնք դրվում են համեմատության հիմքում: «Մոխրաբար համեմատության հիմքը նրկու նրկույթների միջև եղած որևէ նմանությունն է կամ նրանց նկատմամբ հեղինակի մոտեցումը, որի շնորհիվ կապ է ստեղծվում նրանց միջև, մեկի օգնությամբ բացատրվում է բնութագրվում է մյուսը...»¹:

Բերենք օրինակներ: Հ. Պարոնյանը «Ազգային ցոլեր» աշխատության մեջ ծաղրում է հասարակական գործիչ, բախտախնդիր Մկրտիչ Նապանին, դատապարտում նրա հասարակական գործունեությունը շահամոլությունն ու ստորաբարձությունը. «Պարագանք կան, հորում *սոխակին շափ* քաղցրախոս կը կտրի...» (2, 241): «Ատանմաբայժն արևելյան» կատակերգության մեջ ատանմաբայժի ազդիկը Երանյակ Լևոնի նկատմամբ ունեցած իր սերն արտահայտում է այսպես. «Քու շունչը *գնդուղի պես* քաղցր է...» (1, 203): «Երկու տներով ծառա մը» կատակերգության մեջ տներինք մեկը՝ վաճառական Անտոնը, իր ծառային հեղինակն բնութագրում է այսպիսի հատկանիշներով. «*Սրբյունի պես* օրաչան, *ճագարի մը պես* մաքուր և շունն ավելի հավատարիմ» (1, 19): *Պես* կապը կապվող բառերի հետ գույց է տալիս, որ գործողությունը կատարվում է այն առարկայի հատկանիշի նման, որի անվան հետ գործածվում է: Իբրև կապի խնդիր գործածվել են *սոխակ, գնդուղի, մրցուն, ճագար, շուն* բառերը:

Կան համեմատություններ, որոնք բաղկացած են նրկու ներքինի. այս դեպքում չի նշվում համեմատության հիմքը: Որպես համեմատելի նոր հանդես են գալիս այնպիսի առարկաներ, որոնց մեջ իրական հատկանիշը որոշակիորեն է դրսևորված: Սրանք առարկայական իրականությունը խորհրդանշող ներկայացնող համեմատություններ են: Այսպիսի համեմատություններում համեմատվում են իրականում ընդհանրություն ունեցող առարկաներ ու նրկույթներ: Օրինակ. «Այս նախնաց խոսքերուն մեջ շատ աղվոր խոսքեր կան, *մարգրիտի պես* խոսքեր կան, բայց մենք չենք ճանաչար» (3, 307): «Մարգրիտ» բառն

1. Լ. Պ. Պարոնյան, Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 228:

արտահայտում է *արծնրավոր, թանկագին* հատկանիշներ: Հնդինակը տրված համեմատությամբ, հաշվի առնելով մարզերի արժեքը, գնահատում, կարենություն է նախկյաց խոսքերի, արտահայտությունների արժեքը:

Նման համեմատություններ շատ են գործածվում հերոսների խոսքում, որով վեր է հանվում կերպարի լիզված տաճորությունը, կրթական և դաստիարակչական ամակարգակը: Այսպես, «Պոռուս մը Պոլսո թաղերու մեջ» նրկում Թոր Բաբուի թաղականների միմեմանության մեջ գործածած պաշտոնական լեզուն հետևյալն է. «*Ամանակի պես* կը վարվի իրարու հետ, *արջու պես* կը խոսի»» (3, 165): «Երկու տներով ծառա մը» կատակերգության մեջ տիրոջ աղջիկը, նկատի ունենալով արջի փնթփնթալու, էշի գալու հատկանիշները, ծառային բնորոշում, ծաղրում է այսպես. «Երբեմն ալ անանկ պարտախաններ կը տա, որ կը վախցնեն զիս, *արջու պես* կը խոսի, *իշու պես* կը պոսա» (1, 34): Լլամ «Ձեր աջենը *ռշապի մը պես* է. բայց երբ դուք կ'երթաք, գայլի կնրպարանք կ'առնու» (1, 35): Այս համեմատությունը կատարվել է ոչխարի անճարակ, գայլի զիշտառի լինելու հատկանիշների հիման վրա, որոնցով ծաղրում է, թե սնիփական դեմք չունեցող գործիչն ինչպես կարող է կնրպարանափոխվել ռոտ տարբեր հանգամանքների:

«Ատամնայույժն արնեմյան» կատակերգությունում առտմնաբայով Թափառնիկոսը դավաճանում է իր «ծերով կնոջը»։ Իր սիրելեանի՝ Սոֆիին բնորոշում է այսպես. «*Սոխակի պես* կը խոսի թշվառականը, *տաղրակի պես* կը նայի գաղչելին, *սիրամարգի նման* ալ պնասներ է ստատան»» (1, 123): Այս համեմատությունները կատարվել են քաղցր ծայր ունենալու, թախծոտ ու մղով նայելու, զննցիկ ներնալու արտաքին հատկանիշների հիման վրա: Բերված համեմատությունների մեջ միաժամանակ առկա է հակադրություն. սոխակի պես քաղցրախոս է, բայց թշվառական է, թախծոտ ու մղով է նայում, բայց գաղչելի է, սիրամարգի նման է, բայց ստատան է: Այս հակադրության շնորհիվ համեմատությունը ձեռք է բերում նրգիծական, բացասական, ժխտողական իմաստ:

Վերևում բերված օրինակները արդո համեմատություններ են՝ արտահայտված *պես, նման, չափ* կապերի ու նրանց խնդիրների միջոցով:

Ամլիացնենք, որ համեմատության դեպքում կարող է նշվել նաև համեմատվող առարկաների, կրնոյթների տարբերությունը: Պարոնյանի ստեղծագործություններում հանդիպում ենք այնպիսի համեմատությունների, որոնց մեջ համեմատվող առարկան իր հատկանիշներով առավել կամ պակաս է ներկայացվում համեմատույալից: Տարբերությունը արտահայտվում է հետտառակական նախադասություններով:

Այսպիսի նախադասություններում համեմատույալը դրվում է բացառական հսկովով, իսկ հատկանիշից (ածականից) առաջ գործածվում են *ավելի* կամ *նվազ* բառերը, որոնք ցույց են տալիս համեմատության աստիճանը: Հնդինակը ազգային ժողովի անդամ, կեղծ սահանանաղորդական Ստեփան Փափագյանի ձևանալությունը, պաշտոնի չարաշահումները ծաղրել է հետևյալ համեմատությամբ. «Կինեմալի մը քոնն *ավելի կարմիր սառնանաղորդական* և ժողովրդյան իրավունքներուն տնեղն մը *ավելի ջերմ* պաշտպան ըլլալով՝ նախապես հասկնալ ուզեց, թե մի գուցե իր աշխարհ գալն վնաս է ազային շահերուն» (2, 117): «Եթե խոսքերը տկար գտնվին» կը դիմեր ձեռննրուն, որ խոսքերն *ավելի գորավոր* էին, ձեռնեղովը կը գաղներ աջենը դրված գրաւերունին և կը կոտրեր գայն» (2, 122): Այս համեմատությամբ քննադատում է Ստեփան Փափագյանի գործի ու խոսքի հակառակությունը, ծաղրում նրա մեծամտությունն ու պառտախոսությունը, ժողովրդականություն վայելելու համար գործադրած բոլոր ջանքերը, սնամեջ նկոյթներն ու ճաշերը: Լլամ՝ Մ.Փափագյանի համբավը համեմատելով փորի հետ, ցույց է տալիս նրա սնապարծությունն ու ոչնչությունը, արքաւզով ժխտում նրա գործունեությունը. «Փորը *ոչ նվազ մեծ* է արն համբաւին, գոր կը փայլն իբրեւ գործող մարդ» (2, 126):

Հ.Պարոնյանի կրգիծանքի հատկանիշներից է այն հնարը, որ նա, սպանի ծաղրով խորագանելով բացասական կերպարներին, ընթերցողի հակադրութն ու մեղացում է նրանց արտաքինի,

գործողությունների ծիծաղելի նկարագրությամբ: Վարպետ երգիծաբանի այդ հնարը դրսևորված է վեր-
բերված օրինակներից վերջին երկուսով:

Այս բնույթի համեմատություններում հաճախ երկրորդական նախադասությունը միանում
գլխավորին *քան* կամ *քան թե* շաղկապներով, իսկ ստորոգյալը գլխավոր նախադասության ստորոգյալի
հետ լինելով նույնը հաճախ գեղջվում է: Դեղինակը «Ազգային ջոջերում» Համբարձում Իփեքճյանի
նվիրված դիմանկարում մերկացնում է մի շարք դպրոցների կրթական ու դաստիարակչական
մակարդակը, նրանց անմխիթար ու վատբարագույն վիճակը. «...դպրոցին շենքն *ավելի* ախոռի ձևով
շինված է,¹ *քան թե* դաստիարակության շենքի մը ձևով» (2, 199): Այս ձևով կազմված
համեմատությունները իմաստային մուրբ տարբերություններ են հանդես բերում, որը արտահայտվում
հատկանիշի աստիճանը ընդգծելու եւ միաժամանակ հեղինակի ծաղրական վրաբերմունքը
սաստկացնելու մեջ:

Հակոբ Պարոնյանի ստեղծած համեմատությունները աչքի են ընկնում իրենց կառուցվածքային
բազմազանությամբ: Նրա լեզվում հանդիպում ենք նաեւ ստորադասական կապակցության ձեւով
քերականորեն դրսևորված, ընդարձակ պատկերների ձեւով արտահայտված ծավալում
համեմատությունների: Առարկայի կամ երեւույթի հատկանիշներն ավելի խորը եւ լրիվ բացահայտելու
համար գործածում է այդպիսի համեմատություններ:

Նշենք, որ հեղինակի գործածած ծավալուն համեմատություններում համեմատվող առարկան
երեւույթը նկարագրվում են ընդարձակորեն, մանրամասնորեն: Սրանց հիմքում ընկած է առաջին
հայացքից ընդհանրություն չունեցող առարկաների եւ երեւույթների ոչ սովորական համադրում, որն
հնարավորություն է տալիս հասնելու կոմիզմի: Ծավալուն համեմատություններն ունեն հետևյալ
քերականական կառուցվածքը. դրանք բարդ ստորադասական նախադասություններ են, երկրորդական
նախադասությունների կապը գլխավորի հետ իրացվում է մի շարք քերականական միջոցներով. միանում
են գլխավորին *ասես*, *կարծես*, *կարծես թե* շաղկապական բառերով, *ինչպես*, *ինչպիսի*, *ինչքան*, *որքան*,
որչափ հարաբերական բառերով: Գլխավոր նախադասության մեջ կարող են ունենալ
համապատասխանաբար *այնպես*, *այնպիսի*, *այնքան*, *այնչափ* հարաբերյալները:

«Պտույտ մը Պլուտ թաղերու մեջ» երկում հետևյալ համեմատությամբ քննադատում է Ազգային ժողովը
նրանում տիրող մթնոլորտը, խառնակությունը. «Ահա վիճաբանելու, հայիոյելու եւ իրարու գլուխ
պատռելու հարմարություն ունեցող թաղ մը, որու մեջ մարդս եթե վայրկյան մը մնա՝ ինքզինքն Ազգային
երեսփոխանական ժողով մեջ *կը կարծես* եւ դուրս ելնելու ճար մը կը մտածե» (2, 154):

Պարոնյանը մեղմ հուժկորով է պատկերել թատերագետ, դերասան Հակոբ Վարդույան
դիմանկարը: Նրա մասին գրել է. «Մորն արգանդեն դերասանական ամանկ ձեւով մը դուրս նետվեցավ, որ
կարծես քուլիսեն տեսարան կուգար» (2, 253):

Ազգային ջոջ Հովհաննես Տերոյենցը հետադիմական հայացքների տեր էր: Նա պայքարում էր առաջավոր
հոսանքների դեմ՝ իր խմբագրած «Երեւակ» հանդեսում տպագրելով բազմաթիվ սին հոդվածներ ու
ամսարժեք աշխատություններ: Պարոնյանը ծաղրում է այս ջոջի գործունեությունը. «Զայն *այնչափ* բարձր
էր, *որչափ* յուր ոճը, *այնչափ* անուշ, *որչափ* յուր հոգվածները եւ *այնչափ* բարակ, *որչափ* «Երեւակին»
թուղթը» (2, 42): Սարգիս Պեյ Պալյանի դիմանկարում խարազանում է փառասեր եւ ունայնամիտ
պաշտոնյաներին: Նրանց ատելությունը, արհամարհական վերաբերմունքը աշխատավոր ժողովրդի
նկատմամբ Հ. Պարոնյանը ցույց է տվել հետևյալ տողերով. «Ասոնց համար ամենեն սովորական բան մ.
արհեստավորի մը հետ *այնպես* վարվել, *ինչպես* կը վարվի կռամն երկաթի հետ, դաստիարակի մը հետ
խոսիլն ավանակի մը վրա հեծնելով Երուսաղեմ մտնել է իրենց հետ» (2, 233): Այս համեմատությունները
շնորհիվ համեմատելին հավասարվում է համեմատյալին, ստորացվում, իջեցվում նրա չափ եւ ստանալ
բացասական բնութագրություն: Անսպասելի եզրերի զուգադրումով՝ համեմատությունը դառնում է ուժեղ

ա տպավորիչ:

3. Պարոնյանի ստեղծած բազմաճյուղ համեմատությունները ունեն ծաղրական, տոգորական բնույթ: Այդ համեմատություններում առարկան, երեւոյթը տվյալ պահի ու համագամանքների պահանջով նմանեցվում, հավասարեցվում է մյուս առարկային, երեւոյթին: Հենց նման համեմատությունները կարող են լինել ծիծաղաշարժ, նպատակասլաց: Ազգային ջոջերի գործունեությունը ավելի որոշակի ու ցայտուն պատկերելու համար՝ հեղինակը դիմել է այդպիսի համեմատությունների: Մուսուցի Յամբարծում էփեքճյանի տգիտությունն ու խավարանքությունը ցայտուն է դառնում հետեւյալ համեմատության միջոցով. «Իփեքճյան էֆենտին մանկավարժության մեջ գերմանական դպրությունն կը պորե *այնպես՝ ինչպես* կը սիրեն ես սիսեռով միսը եւ կը սիրես դուն ծեթով լուբիան» (2, 204): Հակոբ Պարոնյանը խարազանում է ազգային ջոջ Անտոն Հասունյանի ազգադավ գործունեությունը, որն ռենեյալով հռոմի Պապի աջակցությունը՝ թշնամանք էր սերմանում հայերի մեջ. «Յուր անունը անմահացնելու համար կը փափաքեր հռովմեական հայերուն բարություն ընել, *այնպես* վարվելով անոնց հետ, *ինչպես* կը վարվի կոշկակար մը իր աշակերտին հետ» (2, 109): Սրանք անդրադարձ համեմատություններ են, որտեղ համեմատության երկու անդամներն էլ փոխադարձաբար բնութագրվում են:

Ինչպես վերելում նշեցինք, համեմատություններ կազմելու գործառնությամբ հանդես են գալիս կապեր, վերաբերականներ, դերանուններ: Բացի այդ, համեմատություններ են կազմվում որոշ բայերի միջոցով: Համեմատությունը արտահայտվում է այնպիսի բայերի միջոցով, որոնց բառական իմաստի մեջ սա համեմատության իմաստ: Բայական իմաստի շնորհիվ տվյալ համեմատությունը ծեռք է բերում գործընթացի իմաստ՝ ի տարբերություն կապերով արտահայտված համեմատության, որոնք գործընթաց չեն արտահայտում, այլ ցույց են տալիս համեմատության կայուն վիճակ: Բերենք օրինակներ. «Վաքքին այս ընթացքը *կը հիշեցունեն* մեզ չփացած տղաները, որոնք խնդրո մը մեջ երբ չկարենան իրենց մեկ ընկերին հաղթել՝ կ,սկսին լալ ու վարժապետին վազել» (4, 361): Այս համեմատությամբ «խտրտունի» մեջ քննադատում է թուրքական «Վաքք» թերթը՝ նրանում տպագրվող հակասական հաղորդումների համար: «Ատամնաբույժն արեւեյան» կատակերգության կերպարներից է երիտասարդ Մարգարը, որը հանդես է գալիս այնպիսի մերկացումներով, որից իմանում ենք Պարոնյանի ժխտական, բացասական վերաբերմունքը ազգային սահմանադրության նկատմամբ. «Սահմանադրությունը ծուլ մարդու *կը նմանի*, որ եթե ծեռքեն չընես, չը քալեր...» (1, 121):

Երգիծաբանի տաղանդը փայլում է հատկապես անձի դեմքի արտահայտության նկարագրությունների մեջ: Պատկերել դեմքի արտահայտությունը նշանակում է՝ թափանցել անհատի հոգու խորքը, տեսնել ներաշխարհը պարզ ու հստակ: Սա երելուն է հատկապես «Ազգային ջոջերուն» դիմանկարների քանդակման ժամանակ, որտեղ հեղինակը տալիս է յուրաքանչյուր ջոջին հատկանշական բնութագրություն: Այդպիսի համեմատությունների նպատակը անհատի էության բացահայտումն է: Բերենք օրինակներ ազգային ջոջերի դիմանկարներից, որոնցում երելուն է հեղինակի վերաբերմունքը տվյալ անձի նկատմամբ:

3. Պարոնյանը հումորով է պատկերում Սիմոն Ֆելեկյան բանաստեղծի դիմանկարը: Գմահատելով նրան՝ միաժամանակ գտնում է, որ նա պատկերի մեջ դեռ չի հասել ձեւի ու բովանդակության ներդաշնակության: Հեզնում է նրա անճարակությունը գրական աշխարհում. «Ֆելեկյան էֆենտին դեմքը այն մարդուն դեմքին *նմանություն կը բերե*, որ կամուրջին վրա կեցած՝ քովիներուն կը հարցունե թե կամուրջը ո՞ւրկից կ,երթցի» (2, 267):

Պարոնյանական այս համեմատությունները ինքնատիպ են, տրվում են ընդարձակ պատկերների ձեւով: Ինքնին հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ դիմանկարները սովորաբար վերջացնում է դեմքի արտահայտության նկարագրությամբ:

Պետք է նկատի ունենանք, որ Պարոնյանի ստեղծած համեմատությունները չեն սահմանափակվում վերը նշված կադապրներով եւ ունենում են դրսեւորման բազմազան ձեւեր: Մի շարք ծավալուն համեմատություններուն երկրորդական նախադասությամբ նկարագրվում է գլխավոր նախադասության մեջ *նման, այն ձեւով* բառերի հետ գործածակած լրացուն բառի ցույց տված առարկայի հատկանիշը: Այսպես. Գ.Պարոնյանը ծաղրել է ազգային ջոջ Նար-Պեյի փառասիրությունը՝ երեւակայությամբ ստեղծված «արքայական երազը» այն մասին, որ ինքը «Լուսինյան թագավորական շառավղից է սերված», որը «քանի մը տարիներ Նար-Պեյով շատանալէ վերջը ուզեց, որ Լուսինյան ալ հորջորջվի, *նման այն ավազակին*, որ ուրիշի մը գույքը հափշտակելէն ետքը կը փափաքի անոր հայրերն ալ կողոպտելու» (2, 14-15): Երգիծաբանը հեզմանքով ու ծաղրով մերկացնում է խմբագիր Կարապետ Ս.Ռթուճյանի ինքնահավանությունը, ամբարտապանությունը. «1831-ին ուսում եւ գիտության առնելու համար Պալատու վարժարանը մտավ *այն ձեւով*, որով կը մտնէ այսօր մրգավաճառներու խանութը խմոր առնելու համար» (2, 52):

Նշենք նաեւ, որ մի շարք համեմատություններ կազմվում են *իբրեւ, իբր թե*, ինչպես նաեւ համեմատությունը որոշակի դարձնող այլ կարգի բառերով: «Ազգային ջոջերուն» Տիգրան Յուսուֆյան երեսփոխանի սնամեջ ճառերը, դատարկաբանությունները Գ. Պարոնյանը ծաղրում է այսպես. «Թեպետեւ շատերը կը հարգեն Յուսուֆյան էֆենտիին ատենախոսություններն *իբրեւ...* քրտնեցուցիչ դեղ» (2, 25): «Ատամնաբույժն արևելյան» կատակերգության մեջ Երանյակը իր սիրած էակին բնութագրում է այսպիսի համեմատությամբ. «Երբ քաղցրաբույր շուրթերեղ սկսի փչել անուշ բուրուճն, կը ծավալի շուրջանակի. *իբր թե* անուշահոտ յուղի սրվակի բերանը բացվեր» (1, 203): Այս համեմատությամբ հեղինակը ցույց է տալիս կերպարի լեզվամտածողությունը, մակարդակը: Համեմատության հետ զուգակցված է յուրատիպ փոխաբերություն: Հեղինակը ծաղրում է ազգային ջոջ, ազգային երեսփոխան, բանաստեղծ Խորեն Գալֆայանի ճառերի սնամեջությունը. «Յուր ճառերն *նույն* ազդեցությունը կ. ղնեին երեսփոխաններու վրա, *ինչ* ազդեցություն որ կ. ղնեն Հատընտիր քաղվածք դպրոցական աշակերտներու վրա» (2, 16):

Վերը քննարկեցիք համեմատությունները կառուցվածքային առումով, այժմ անդրադառնանք նրանց բովանդակային կողմին: Գ. Պարոնյանի լեզվում կան այնպիսի համեմատություններ, որտեղ ամեն համեմատվում է անձի հետ: Սրանք սուբյեկտիվ համեմատություններ են, որտեղ երեւում է հեղինակի դրական կամ բացասական վերաբերմունքը տվյալ դեմքի նկատմամբ:

Երգիծաբանը քննադատել է հայ լիբերալների հասարակական գործունեությունը, որոնք ցանկանում էին «փոխել» հայ իրականությունը: Նրանցից մեկը՝ Ռուսինյանը, սովորելով Փարիզում, վերադառնում է հայրենիք եւ ձեռնարկում նոր ռեֆորմներ՝ առանց հաշվի առնելու հայ իրականության տնտեսական պայմանները. «Եվ նահապետը գրիչը ձեռքէ չէր ձգեր. կը նմաներ այն դերձակին, որ փոխանակ կերպասը մարմնույն համեմատ ձեւելու, մարդը իր շինած զգեստին հարմարեցնելու կաշխատի եւ անոր ձեռքերն ու ոտքերը կը կտրտն մկրատով (2, 273): Ազգային ժողովի երեսփոխան Ստեփան Ասլանյանը ծառայություններ է մատուցել թուրքական կառավարությանը եւ քիչ բան է արել իր ժողովրդի համար: Երգիծաբանը մերկացնում է նրա անսկզբունքայնությունը, շահամոլությունն ու մորթապաշտությունը. «Երբեմն ալ ատենապետությունը վարեց այն *նավապետին պես*, որ նավուն մրրիկի բռնված ժամանակը թթյակը կը քաշվի եւ հրաժարական կը գրե նավուն տերերուն» (2, 38):

Այս օրինակներում գլխավոր նախադասության բովանդակությունը բացահայտվում, պարզ է դառնում համեմատելով այնպիսի գործողության, երեւոյթի հետ, որը պատկերված է երկրորդական նախադասության մեջ՝ մի դեպքում՝ նմանության հիման վրա, մյուս դեպքում՝ արդեն թվացյալ, կարծեցյալ նմանության ու համապատասխանության հիման վրա: Այս համեմատությունները կառուցված են ոչ այնքան համեմատվող երեւոյթների միջեւ եղած արտաքին նմանությունների, որքան

հեղինակային վերաբերմունքի տեսակետից նրանց միջև եղած հնարավոր նմանությունների վրա: Պրանք անմիջապես գտնելով դարձնում են կարծես տեսանելի ու շոշափելի:

Մի շարք համեմատություններ կառուցվում են ոչ թե արտաքին, այլ ներքին հատկանիշների նմանության հիման վրա: Համեմատվող երեւոյթների նկատմամբ հեղինակի մոտեցման միջոցով կապ է ստեղծվում նրանց միջև: Որեւէ կերպարի եւոյթունը ավելի պատկերավոր դարձնելու համար այն համեմատում է կենդանու հետ: Հ.Պարոնյանը մտահոգված էր հայ գրականության վիճակով: Իր արհամարհական վերաբերմունքն էր արտահայտում ժամանակի գրական քաղաքականների նկատմամբ: Ազգային ջոջ հաջատուր Միսաքյանի ճոռն ու վերամբարձ ոճը, գրչի անշնորհքությունը ցույց տալու համար՝ այն համեմատում է սագի փետուրի հետ. «Սյապես, Միսաքյան գրական ասպարեզին վրա հարստահարիչ քյուրտի մը պես ուրիշներու ստացվածքն հափշտակելով, *իբրեւ մի սագ* պուտի փետուրներով զարդարվելն վերջը, ճեմարանի աշակերտներուն դաս տալու տեղ սկսավ ապտակ տալ» (2, 130-131): Այս համեմատությունը զուգորդված է հակադրության հետ (դաս տալու տեղ ապտակ տալ), որով ամբողջացնում է բացասական հերոսի կերպարը:

Հ.Պարոնյանը բացասական կերպարներին ծաղրելիս՝ համեմատում է ինքնին հակակրանք ու զգվանք առաջացնող կենդանիների հետ: Նկատենք, որ հեղինակը կենդանիներին բնորոշ հատկությունների անվանումները գործածում է մարդկանց նկատմամբ մեծ մասամբ արհամարհական վերաբերմունք արտահայտելու համար:

Սուրբ Աստվածածնա թաղամասի բնակիչների վախկոտությունն ու անողնաշարությունը ծաղրում է այսպես. «Աստուծո մոտ եւ սատանայե հեռի են եւ այնչափ երկյուղած են, որ եթե սուրբ եղիա անդիի թաղին մեջ երկաթյա տախտակն քիչ մը ուժով շարժե՛ անենքն ծակծակ կը փախչին *մուկի պես*» (3, 227):

Մի շարք համեմատություններում անձը համեմատվում է իրերի, երեւոյթների հետ եւ ընդհակառակը: Հ.Պարոնյանը ծաղրելով ժամանակի ընտանիքի վարքն ու բարքը՝ խարազանում է փողի, շափի վրա հիմնված ամուսնությունը. «...Ամուսնության մը մեջ միմիայն մետաղ կա՝ երկին պարզապես համք բանեցնելու՝ համար կառնե այդ կին, իբրեւ գետին մը. կը փորե գետինը, մինչեւ, որ համքն սպառի. սպառեցավ համքը, կը թողու գետինը» (1, 430):

Հեղինակը ծաղրել է գրողների մանվածապատ, խրթին լեզուն. «Ես ալ օր մը փորձեցի լեզուս պննել, բայց վերջն հուսահատեցա, տեսնելով տգեղ կին մը՝ զոր զարդերն ավելի տգեղուցած էին» (4, 480): Մեծ երգիծաբանը ոչ միայն լեզվի հարստությունն ու ճոխությունը վարպետությամբ օգտագործում է՝ ծաղրելու համար բացասական կերպարներին, անբարո բարքերը, այլև հաճախ երգիծանքի առարկա է դարձնում բացասական կերպարի և նույնիսկ որոշ գրողների ոճը, վերջինիս անհարկի պննանքը, մանվածապատությունը:

Հեղինակը «Պտույտ մը Պոլտ թաղերու մեջ» երկում ծաղրել է գյուղի բնակիչների անտարբերությունը. «Գյուղիս կլիման չեզոք է. ոչ բարիք կը գործե եւ ոչ չարիք, բնակիչներին ալ իրենց կլիմային պես են» (3, 110): «Ատամնաբույժն արեւելյան» կատակերգության մեջ Թափառնիկոսը (ի դեմս իր կնոջ ու աղջկա) կանանց մասին արտահայտվում է այսպես. «Դուք կանայքդ նոր լաթերը անուսիններեդ ավելի կը սիրեք, եւ անոնց քսակը կը պարպեք...» (1, 126): Այս համեմատությամբ խարազանում է ժամանակաշրջանի կնոջ քաղցենիությունը, նյութապաշտությունն ու ցուցանդությունները: Հեղինակը հաճախ համեմատում է անձի հատկանիշը իրի, առարկայի հատկանիշի՝ հետ: «Պտույտի» մեջ Թոր Քաբուկի բնակիչների գինեմոլությունը խարազանում է այսպես. «Այնքան օդի եւ գինի խմեցին, որ չկոցան քալել եւ *տակառի պես* գլտորվելով չկոցան իրենց տունները մտնել» (3, 165): Սերկացնում է ազգային ջոջ, փաստաբան Տիգրան Յուսուֆյանի հասարակական արատավոր վարքագիծը, նրա շահամոլությունն ու պաշտոնամոլությունը. «Ո՛չ անցյալ եւ ոչ այս դարուս մեջ չկա

ընկերություն մը, որուն կամ ատենապետն կամ անոնք չըլլա, եւ ինչպէս որ վարդն առանց փուշի չըլլար, ընկերությունն ալ առանց Յուսուֆյանի չկրնար չըլլալ...» (2, 24):

Հաճախ կերպարներին բնութագրում է՝ համեմատելով նրանց երկնային մարմինների, թանկագին քարերի հետ: «Ատամնաբույժն արեւելյան» կատակերգության մեջ Երանյակը, հափշտակված Լեւոնի գեղեցկությամբ, նրան համեմատում է լուսնի հետ. «...Անդին լուսնո պէս երիտասարդ մը հափշտակեր է իմ սերս» (1, 127): «Պաղտասար աղբար»-ում փաստաբան Կիպարը իր սիրեկանին բնութագրում է հետեւյալ համեմատությամբ. «...բարձր դասու ընկերության մեջ գոհարի պէս փայլելու կոչված էիր...» (1, 302):

Անձը համեմատելով մի դեպքում որեւէ անձի, կենդանու, մյուս դեպքում՝ առարկայի, երեւոյթի հետ, ավելի շոշափելի ու տեսանելի է դարձնում նրան, նրա գործունեությունը:

Վերը քննարկվեց համեմատության այնպիսի դրսեւորումներ, որոնցում անձը համեմատվում է անձի հետ, կենդանին անձի հետ, անձի հատկանիշը առարկայի, իրի հատկանիշի հետ: Բացի նշված համեմատություններից Պարոնյանի մոտ հաճախակի ենք հանդիպում այլ կարգի համեմատությունների: Անդրադառնանք դրանց.

Հ.Պարոնյանը ստեղծել է այնպիսի համեմատություններ, որտեղ իրար հետ համեմատվում են իրեր, երեւոյթներ, գործողություններ, վիճակներ: Այսպես՝

1. Իրը համեմատում է իրի հետ (թանձրացական գոյականը թանձրացականի հետ):

Ազգային ջոջ Ստեփան Ապանյանի արտաքինը նկարագրում է այսպես. «*Վարդի պէս* կարծիր այտեր եւ *ածուխի պէս* սեւ հոնքեր ու մազեր ունի» (2, 39):

2. Իրը, առարկան համեմատում է երեւոյթի հետ եւ ընդհակառակը (թանձրացական գոյականը վերացական գոյականի հետ):

Հեղինակը ծաղրում է հասարակական գործիչ Քրիստոստուր Ղազարոսյանի մտքի սահմանափակությունը, սմանեջությունը. «Մորուքը մտքին պէս կարճ է» (2, 177):

Պարոնյանը մի շարք ջոջերի փոփոխամտությունը, անողնաշարությունը ծաղրում է այսպես. «...*կարծիք ըսվածը լաթի պէս է*, մեկը շատ լաթ ունենալու է, որ շաբաթն անգամ մը կարենա փոխել» (2, 55):

3. Երեւոյթը համեմատում է երեւոյթի հետ (վերացական կամ թանձրացական գոյականը վերացականի հետ):

Պերասանուհի Երանուհի Գարագաշյանի դիմանկարը գրել է մեղմ հումորով՝ բարձր գնահատելով նրա բեմական արվեստը. «Այս վերջերս տեսնվեցավ, որ երաժշտության մասին ալ հարմարություն ունի, *ծայրը բնավորության պէս* մեղմ է, եւ ունի այլ ելեւէջներն, որ երգիչի մը պէտք են» (2, 270):

Երգիծաբանը մերկացնում է Նար-Պեյի անսկզբունքայնությունը, ըստ հարմարության կարծիքները փոխելը: Հեղինակը թվարկում է նրա բոլոր մականունները եւ հետեւյալ համեմատությամբ ծաղրում նրան. «Հարկ կը համարինք իոս հիշել, թե խորեն եպիսկոպոս յուր կարծիքներուն հետ ալ այնպէս կը վարվի, ինչպէս յուր մականուններուն հետ, միայն սա տարբերությամբ, որ կարծիքներն ինն օրը անգամ մը կը փոխե, մինչդեռ մականունները ինը տարին անգամ մը» (2, 15):

4. Գործողությունը համեմատում է գործողության հետ.

Հ.Պարոնյանը մերկացրել է Հակոբ Վարդուկյանի թատերական գործունեությունը. այս գործիչ խաղացանկերը լցված էին օտար, թարգմանական թատերախաղերով, որոնք չէին թափանցում ազգային թվառությունների լուծյան մեջ. «Խուճը կազմելուն պէս թարգմանիչներ բռնեց եւ օտար խաղերով սկսավ ազգին գեղծումներն հարվածել, ճիշտ այն մարդուն պէս, որ ապտակն օտարին գլխուն իջեցնելով՝ տղան ծեծած ըլլալ կը կարծե» (2, 254):

Սարգիս Պեյ Պալյանի դիմանկարում մերկացնում է փառասեր, քուս «Ազգայիների»

ությունը, շողքորթությունը, քծնանքը պաշտոնյաների առաջ. «խմբագրի մը բարեւ տալն աւարտականն տալու չափ արժեք ունի իրենց ցովը» (2, 233):

5.4իմակը համեմատվում է վիճակի հետ.

Տրված համեմատությամբ ծաղրել է Քրիստոսոստուր Ղազարոսյանի պաշտոնամոլությունը, առաքիլությունը. «...առանց պաշտոնի ապրիլն անհնար է, ինչպես որ ծուկին առանց ջուրի» (2, 305):

Նկատենք, որ անձերի, երեւոյթների, նրանց որոշակի հատկանիշների նմանության հիմքով ածած համեմատությունները զգալի տեղ են գրավում Գ.Պարոնյանի ստեղծագործություններում:

Համեմատությունները ոչ միայն բազմազան են իրենց դոսևորումներով, այլև կարող են զուգորդվել «մական» այլ միջոցներով՝ ոճավորման առավել բարդ խնդիրներ լուծելու համար: Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում հաճախակի են հանդիպում այնպիսի համեմատությունների, որոնք կազմվում են չափազանցության հետ զուգորդվածով: «Մեծապատիվ մուրացկաններ» երկում Մանուկ աղայի կնոջ լեզվի նկարագրությամբ արտահայտել է իր ծաղրը այն գրողների նկատմամբ, ովքեր անտաղանդ են, մի տղ զրելու համար՝ հազար անգամ սրբագրում են այն: Այսպես. «Բեռնակիրների դուռը զանգեւում պես ջաղը բացվեցավ եւ ներկայացավ իրենց թուխ եւ երկար դեմքով կին մը, որուն դեմքին վրա ժամանակն այնքան գծեր գծած էր զայն սրբագրելու համար, որքան որ կը գծէ Մասիսի խմբագիրն յուր չորս տող մեկ նետագիրն վրա, որ կամ մեկուն վախճանիլը կիմացունէ եւ կամ ուրիշի մը կարգվիլը»: Ազգային ջոջերից Սիմոն Յազգճյանին ծաղրում է այսպես. «Քիչ մը կրակոտ է, այնպես որ քիթին ծակերն շունչ արտադրած ժամանակը կը կարծիք թէ Շիրքեթի խայրիէի շոգեմալերեն մեկուն ծխնելույզն է, որ կը ծխէ»:

Սի շարք ծավալուն համեմատություններ ստեղծված են հակադրության հիմքի վրա: Սիս թէ ինչպես է Պարոնյանը սպանիչ ծաղրի ենթարկում մեծ տերությունների դիվանագիտական խաղերը. «Ինչպես որ ես իմ բալթոս լայն կուզեմ. դուն քուկինդ նեղ կուզես, ուրիշ մը երկար կուզե, ուրիշ մը՝ կարճ, այնպես ալ կառավարությունը կուզեն, որ այս արեւելյան բալթոն լայն, նեղ, կարճ եւ միանգամայն երկար ըլլա»: Բավական հետաքրքրություն են ներկայացնում եւ ընկալվում են ներդաշնակորեն հետեւյալ համեմատությունները. «Գլուղիս հայ տուներուն թիվը որոշ չգտցվիր. վասնզի օրե օր ավելնալու վրա է, ինչպես նաեւ՝ ազգասերներու թիվն, որ վայրկյանն վայրկյան պակսելու վրա է» (3, 243): «Այս գործը ղովար է, խիստ ղովար է եւ վերջապես անչափ ղովար է, որչափ դյուրին է ֆրանսերենն արիեստական կամ գիտական հողված մը թարգմանելով հրատարակելն, ինչպես որ կ'ընէ Ծաղկաքաղն» (4, 387): Հեղինակը ստեղծել է այնպիսի պատկերներ, որոնք հիմնված են ժխտման վրա: Ժխտելով եզրերի ընդհանրությունը՝ հաստատում է հենց նրանց նմանությունը, նույնությունը: Այսպես. «Չվարկեցա այն խմբագիրներուն պես, որք օտարականին մը պոլիս գալն իմանալուն պես՝ վազելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար» (3, 14):

Հաճախ համեմատություններում, որպես համեմատյալ եզր վերցվում են պատմական ու դիցաբանական երեւույթներ:

Գ.Պարոնյանը «Պոտյոյ մը Պոլտ թաղերու մեջ» ստեղծագործությունում մերկացրել է որոշ «ազգայինների» անհոգությունը, անտարբերությունը ժողովրդի ծակատագրի, դպրոցների կործանման ու դաստիարակչական մակարդակի նկատմամբ: Նրանց փոխադարձ անվստահությունը, խառնակությունները երգիծել է ամենախիստ կերպով: Սիս այդպիսի համեմատություններից մեկը. «Ինչքան որ աշտարակը շինողներն իրարու լեզու չհասկնալու համար չկրցին աշտարակին շինությունն ավարտել, այնպես ալ ասոնք դեռ չհաջողեցան իրենց վարժարանին շինությունն ավարտել» (3, 168):

Ազգային ջոջ Գրիգոր Իմֆինճյանի քարոզչական գործունեությունը ծաղրում է՝ համեմատելով Դիոգինեսի կարասին հետ. «Ժողովուրդն, որ շատ անգամ կը խաբվի, սիրեց այս ազգասեր քարոզիչն, որուն բերանը Դիոգինեսի կարասին բերանին պես երբեմն հարավային կողմը, երբեմն ալ հյուսիս կողմը կը դառնար» (2, 181):

3. Պարոնյանը դիմել է համեմատության մի այլ տեսակի՝ զուգահեռականությանը: 1 Սա ներկայումս համեմատություն է, որն ըմբռնվում է մտքերի զարգացման միջոցով: Սրանք կազմվում են առանց նախադասություններով:

Երգիծաբանը խարզաբանում է Դովհաննես Տերոյենցի հասարակական արատավոր վարքագիծը, որ Դովհաննես Տերոյենց «պատվելիին վարդապետություններն հետեւյալներն ըլլալուն են» «Ժամանակին հարմարիլը փոքր մարդերու գործ է, մեծ մարդն այն է, որ գիտն ժամանակն իր հարմարիցնել. վասնզի հագուստը պարտավոր է մարդուս հարմարիլ եւ ոչ թե մարդս հագուստին» (50):

«Շատ մը խնդիրներ կան, որ անասուններու մեջ լուծված են եւ մարդերու մեջ դեռ վիճաբանություն տակ են»:

Լեզվի խնդիրը, օրինակի համար:

2 պիտի քննենք, թե ոչխարը գրաբար՝ կը խոսի, թե աշխարհաբար, թե գավառաբարբառներ ունի թե ոչ, թե ոչխարի լեզուն հնդիկ-եվրոպական է թե ո՛չ, ասոնք քննելու բնավ պետք չունիմ. վասնզի Բաղիշի մեջ ծնած ոչխարին լեզուն շատ աղել կը հասկնա այն ոչխարի, որու հայրենիքն է Սպանիան: մինչդեռ մշեցիի մը հայերենը չհասկնար Պոլսո հայն, որու լեզուն չհասկնար վանեցի հայն, որու լեզուն չհասկնար եւ այլն եւ այլն» (4, 402):

Վերջին պարբերության միտքը որեւէ դեր չի խաղում, այլ զուգահեռաբար բերվելով առաջինի հետ հանդես է գալիս որպես համեմատություն:

Մեծ երգիծաբանը ունի այնպիսի համեմատություններ, որոնք այնքան դիպուկ բնորոշումներ են, որ գրեթե աֆորիզմի դեր են կատարում: Այսպես. «Առանց կովու ամուսնությունը անլի կերակուրի կը նմանցեն խոհարարները» (1, 79): «Ինչպես առանց գործքի հավատքը մեռյալ է» (4, 470): «Նախանձոտ կանանց հետ ապրիլը կատուններու հետ խաղալու պես է, պանիր տված ժամանակը կը ճանկռտեն» (1, 103):

Օժտված լինելով պատկերավոր մտածողությամբ՝ Դ. Պարոնյանը ստեղծել է խիզախ ու նպատակասլաց, ինքնատիպ երգիծական համեմատություններ:

Сравнение в творчестве А. Пароняна

Н. Г. Хачатрян

Резюме

В представленной статье обсуждаются сравнения, встречающиеся в языке А. Пароняна. Автор при помощи сравнений анализирует общественные, бытовые негативные явления времени. Сравнения анализируются в структурном и сюжетном (содержательном) спектре. Сравнения, созданные А. Пароняном, имеют разнообразные формы проявления. Обсуждаются простые сравнения, которые выражены посредством союзов и их дополнений, а также просторные сравнения, которые расположены в форме подчинительной связи. Далее рассматриваются новые употребления сравнений в смысловом аспекте.

Анализируются также проявления сравнений, где одушевленное сравнивается с одушевленным, животное с человеком, одушевленное с неодушевленным. А. Паронян создал и такие сравнения, где сравниваются вещи (предметы), явления, действия, состояния.

Nune Khachatryan

SUMMARY

In the given article the author discusses the similes which we can meet in the language of A. Paronian. A. Paronian stigmatizes negative social occurrences and conditions of life with the aid of similes. The author analyzes the similes in their structural and subject aspect. The similes, created by A. Paronian, have various forms. The simple similes, which are expressed by conjunctions, and wide similes, which are arranged in the form of subordinating connection are also discussed in the article. Then the author touches upon the new use of similes. He analyses such displays of similes where an animated object is compared with the other animated one, an animal is compared with a man and an animated object is compared with inanimate one. A. Paronian created similes in which he compares things, phenomena, actions and states.

In the works by A. Paronian we also meet the similes which are accompanied by other stylistic methods for the solution of difficult problems of stilization.

**ՀԱՅԿ ԽԱՀԱՏՐՅԱՆԻ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՂԹԸ»
ՊԱՏՄԱՎԵՊԻ ՈՇԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

Ը.Պ. ՍԱՂՅԱՆ

XX դարի հայ պատմավիպասանության ճշանավոր դեմքերից է Հ. Խաչատրյանը: «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավեպը, որը լույս է տեսել 1999թ., նրա կենդանության օրոք տպագրված վերջին երկն է:

Նկարագրելով 11-րդ դարում Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանը և թուրքական ու բյուզանդական ճնշումներից թուլացող Հայաստանը՝ հեղինակը երկի հիմքում դրել է Գրիգոր Մագիստրոսի կերպարը, որը քայլ առ քայլ բացահայտվում է իր իմաստասիրական որոնումների ու խորհրդածությունների ոլորտում: Ինչպես իր նախորդ պատմավեպերում, այստեղ էլ հեղինակը գործածել է պատմական ժամանակաշրջանը կերտող լեզվաոճական հարուստ համակարգ: Սրա մաս կազմող պատկերավորման միջոցներից փոխաբերությունների քննությանն է նվիրված սույն հոդվածը:

Փոխաբերությունը¹ առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա մի բառի կամ արտահայտության փոխարեն այլ բառի կամ արտահայտության գործածությունն է: Իբրև գեղարվեստական խոսքի անխուսափելի տարր՝ փոխաբերությունը նպաստում է ոճի հարստությանն ու արտահայտչականությանը: Հ. Խաչատրյանի ճշված երկը փոխաբերությունների, ինչպես նաև պատկերավորման այլ միջոցների առատ գործածությամբ աչքի չի ընկնում, սակայն եղած փաստերն էլ բավականին գունագեղ ու ինքնատիպ են: Քննարկենք դրանցից որոշները:

Ազոխ բառը գործածված է *ոչ հասուն* իմաստով. «Գագիկ արքան հաշիվ չէր տալիս իր ոչ մի սխալ քայլի համար: Նրա խելքը *ազոխ* էր» [3, 231]: *Խեղկատակություն* բառը գործածված է *անլուրջ արարք* իմաստով. «Դա պատմական ամոթալի *խեղկատակություն* էր: Հայազգի կայսրը իրեն չպատկանող հայկական հողերը խոստանում է նվիրել հայ իշխան Դավթին՝ հուսալով, որ բախտի անիվը մի տասնամյակի պտույտ էլ չկատարած, այդ

.....
1. Լեզվաբանության մեջ փոխաբերությունն ընդունվում է նաև լայն իմաստով, այդ դեպքում նրա տեսակներն են համարվում փոխաբերությունը, փոխանունությունը, համըմբոնումը, շրջասույթը և այլն (տե՛ս 1, 173, 2, 37): Թվագրված գրականությունը տե՛ս վերջում:

հողերը նորից կանգնեն Բյուզանդիային»[3,13]: Նշված փոխաբերությունը գործածելով հեղինակային խոսքում՝ Հ. Խաչատրյանն իր վերաբերմունքն է տալիս տվյալ պատմական իրադարձության հանդեպ՝ հեղինակային խոսքը դարձնելով անմիջական:

Կացնահարել բառը գործածված է *վճասել* իմաստով՝ միջնադարյան Հայաստանում մասնատված թագավորությունների վնասակար ազդեցությունը նշելու համար: Այս կառույցում միասնական պետությունը դիտարկվում է իբրև մեկ բուն ունեցող ծառ՝ ի դեմս Բագրատունիների, և այդ միասնականության դեմ տարվող ամեն մի պայքար դիտարկվում է իբրև կացնով այդ բունը վնասելու երևույթ. «Հաճախ փոքրերը հավակնել են մեծ արքաների թագերին, *կացնահարել* Բագրատունյաց տոհմածառի բունը» [3,43]:

Կտցահարել բառը գործածված է *ասպատակել, նվաճել* իմաստներով. «Լոռու թագավորիկը դա համարեց բարեպատեն առիթ և սկսեց *կտցահարել* Գազիկի թագավորության արևելյան եզրերը՝ Ուտիքի մի քանի ամրոցներ կցելով իր թագավորությանը»[3,43]: Նշված նախադասության մեջ նվաճելու երևույթը *կտցահարել* բառով ներկայացնելով՝ հեղինակն իր արհամարհական վերաբերմունքն է արտահայտում միասնական պետականության դեմ պայքարող Դավիթ Անհողիճի վերաբերյալ՝ նրան որակելով իբրև թռչուն, իսկ նրա իրականացրած ռազմական գործողությունները՝ իբրև թռչունի անգոր ու աննշան կտցահարում: Կառույցին արհամարհական երանգ է տալիս նաև *թագավորիկ* բառը, որը ևս ընդգծում է Դավիթ Անհողիճի տիրույթների փոքրությունը: Հ. Խաչատրյանը բացատրական բառարաններում առկա *թագավորիկ* (մասուր) բառի համար ստեղծել է իմաստային նորաբանություն², իսկ *արքայիկ* բառի համար՝ հոմանշային տարբերակ՝ տեքստին տալով լուրատիպ երանգ:

Հարբած բառը գործածված է *ոչ կանոնավոր, ոչ բնական* իմաստներով. «Քնքշակերտ շենքերի ճակատներն աչրող բազմաբոց լուսատուները Անիի գիշերները դարձրել են *հարբած* ցերեկներ»[3,32]:

Այստեղ հեղինակին հաջողվել է հազարավոր կանթեղների բեկբեկուն լույսերի առաջացրած խաղի տեսքը տեսանելի դարձնել՝ դրանք հարբած

2. Համեմատված է հետևյալ բառարանների հետ՝ ա)Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վնեստիկ, 1836-37թ.թ., 2հ., վերահրատ. 1979-81թ.թ., Երևանի պետ. համ-ի հրատ., բ)Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, վերահրատ., 4հ., Եր., 1971-80թ.թ., գ) Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 2հ., Եր., 1976թ., դ) Հայկական խՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, 4հ., Եր., 1969-81թ.թ., ե)Հ. Բաքսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տեքստիմաբանական բառարան, Եր., 1973թ.:

մարդու ոչ սահուն քայլքի հետ համեմատելով: Այստեղ նաև ընդգծվում է ասեն գիշեր հազարավոր կանթեղներով քաղաքը լուսավորելու ոչ բնական, վտանգավոր լինելը:

Շաղախվել բառը գործածված է *առաջանալ, սերվել* իմաստներով՝ պատկերավոր դարձնելով տարբեր ցեղախմբերից ու տներից տոհմերի կերտման նկարագրությունը. «Պահլավունիների տոհմը միայն հայկյաններից է *շաղախվել*» [3, 27]:

Քոթոթ բառը գործածելով *զգուշացնող երևույթ* իմաստով՝ հեղինակը հետաքրքիր թաքնված համեմատություն է կատարել, որտեղ աշխարհի վերջը՝ որպես հզոր ու վտանգավոր երևույթ, համեմատվում է արքի հետ, իսկ նրա նախանշանները՝ հաճախակի կրկնվող երկրաշարժերը, համեմատվում են քոթոթների հետ: Այս հետաքրքիր կառույցում մանուկյան հիմքը քոթոթների շարժում ու միշտ իրենց մորից առաջ ընկնելն է. «Հակառակի պես սկսեցին իրար հաջորդել աննշան երկրաշարժերը, որոնց համարեցին աշխարհակործան մեծ շարժի առջևից վազող *քոթոթներ*» [3, 6]:

Ինչպես երևում է վերը նշված օրինակներից, Հ. Խաչատրյանի գործածած փոխաբերություններում կան բառային և խորքային (հասկացվում են տվյալ իրադրության մեջ) տեսակները, որոնք ինքնատիպ կիրառությամբ հետաքրքիր են դարձնում պատմական ժամանակաշրջանի կերտումը:

Հ. Խաչատրյանի լեզվի ոճական առանձնահատկություններից է նաև մեկ կամ նրան հարակից մի քանի նախադասություններում երկու և ավելի փոխաբերությունների գործածությունը, որը ինչ-որ տեղ մոտենում է այլաբանությանը: Հետևյալ նախադասության մեջ *աղվես* և *փիղ* կենդանիների օրինակով ներկայացվում է ռուս- բյուզանդական կապը: 10-րդ դարում Ռուսաստանում քրիստոնեությունը տարածելիս բյուզանդական կայսրը նպատակ ուներ կրոնի հետ բյուզանդական մշակույթ և մտածելակերպ ներարկել ռուս մարդու մեջ: Սակայն տարածքով ու բնակչությամբ հզոր Ռուսաստանում նրա ծրագիրն անհաջողության է մատնվում. «Իրավ է՝ հավատացյալ ռուսների համար Կոստանդնուպոլիսը դարձավ սրբազան քաղաք: Բայց միայն այդքանը: Բյուզանդական *աղվեսը* չէր կարող ռուսական *փղի* քթից բռնել ու քարշ տալ իր հետևից» [3, 14]:

Հետևյալ օրինակում *դարպաս* բառը գործածվում է Գրիգոր Մագիստրոսի խոսքում՝ ավելի դիպուկ ներկայացնելու համար հայերի դերը Արևելքի հրոսակներից Բյուզանդիան պաշտպանելու համար. «-Կա՛յսրդ Մոնոմախոս, պատմությունը չի ների քեզ. վերացնելով հայոց թագավորությունը՝ դու գործում ես այնպիսի սխալ, ինչպիսին մինչև հիմա չի գործել ոչ մի խաչադրոշ տիրակալ: Հայոց աշխարհը առաջին և ամենահուսալի *դարպասն* է թուրքերի

ճանապարհը փակելու համար: Կրճակահան մի՛ արա այդ *դարպասը*, մի՛ հանիր այդ *դարպասի սողնակը* »[3,253]:

Նման օրինակների կիրառությունը հարստացնում է Հ. Խաչատրյանի երկերի լեզուն և դրանք արժեքավորում գալիք սերունդների համար:

ԹՎԱԳՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ.Առաքելյան,Ա.Խաչատրյան,Ս.Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, I հատոր,Երևան,1979թ.:
- 2.Օ. Բաբայան, Փոխարեությունը արդի հայերենում, Երևան, 1998թ.:
- 3.Հ. Խաչատրյան, Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը, Երևան,1999թ.:

НЕКОТОРЫЕ СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ИСТОРИЧЕСКОГО РОМАНА ГАЙКА ХАЧАТРИАНА „ПОСЛЕДНЕЕ ПИСЬМО ГРИГОРА МАГИСТРОСА,,

Շ.Ս. Տադյան

Резюме

В историческом романе Гайка Хачатряна „Последнее письмо Григора Магистроса,, метафоры использованы умеренно и выделяются выраженной выразительностью и своеобразием.

SOME STYLISTIC PECULIARITIES IN HAIK KHACHATRIAN'S HISTORIC NOVEL „GRIGOR MAGISTROS'S LAST LETTER,,

Sh. P. SAGIYAN

Summary

Metaphors in Haik Khachatrian's historic novel „Grigor Magistros's last letter” are used moderate and have a particular and characteristic expression.

Այո՛, պատերազմի փոշոտ ճամփաներով անցած երիտասարդը խորապես ցանկանում էր «Քլոմեյ» աշխարհը պատերազմի հիվանդությունից, և բժշկի սրտացավությամբ, որ ցանկանում է իր հիվանդին ժամ առաջ փրկել կործանումից, վերցրեց գրիչը և ստեղծագործեց: Ստեղծեց սիրո, երազանքների ու մարդկային մասին բանաստեղծություններ, որոնք ամփոփվեցին բանաստեղծական երեք ժողովածուներում «Երգեր», «Գետակ», «Կարոտի երգ» վերնագրերով:

Եշմարտության դեմ չնեղանչելու միտումով ասենք, որ չափածոն Մ. Սարգսյանի տարերքը չէր: «Կյանքը կրակի տակ» վեպը դարձավ ոչ միայն Մ. Սարգսյանի, այլև մեր գրականության նվաճումներից մեկը:

Նա, նորագույն շրջանի շատ գրողների նման, իր մկրտությունը ստացավ Զայրենական մեծ պատերազմում և պատահական չէ, որ նրա ստեղծագործական կյանքում պատերազմը շարունակվեց տասնամյակներ: Զայտնի գրող Սերգեյ Բարուզդինի պես նա էլ կարող է ասել. «Պատերազմը ինձ կենսագրություն տվեց, իսկ առանց կենսագրության իսկական գրող չի լինում»: Նախկին ԽՍՀՄ քաղաքացու հայրենասիրությունը, նրա հոգեկան ուժերի վերելքը, նրա մեջ ամրապլած վսեմ հատկությունների հայտնաբերումը, բնականաբար, դարձավ գրականության հիմնական բովանդակությունը:

Գրականության զարգացման բոլոր փուլերում, ժամրային առումով տիրական է վեպը, որը յուրովի կամուրջ է հին ու նոր ժամանակների միջև:

XX դարի անվանի վիպասաններից մեկը՝ Զ. Այթմատովը, գրել է. «Քանի գնում, ավելի ու ավելի ենք համոզվում, որ վեպը մնում է գեղարվեստական արձակի գլխավոր, առավել զարգացած ու հասուն ձևը, առաջատար ժանրը: Առայժմ գրողները դեռ չեն հայտնագործել վեպից ավելի նշանակալից որևէ այլ ձև: Ճիշտ է, փորձեր են արվում միախյուսելու դրաման, արձակն ու բանաստեղծությունը, բայց փորձերից այն կողմ դրանք չեն անցնում: Ընթերցողների բազմաթիվ սերունդների մեջ մշակված պահանջներին համապատասխանող կատարյալ ստեղծագործությունը կրկին ու կրկին մնում է վեպը»:

(Ս. Արզումանյան «Սովետահայ վեպը» հատոր 3)

Զարց է ծագում ինչու՞ վեպը: Քանի որ հասարակության ներքին շարժումը հետազոտելու և ժամանակակիցների հոգեբանությունը բացահայտելու, ժողովրդի կյանքի, նպատակների, նրան բնորոշ մտածողության ու լեզվի բազմակողմանի դրսևորման համար արձակն ընդհանրապես (վեպը մասնավորապես) ունի բացառիկ նշանակություն: Վեպը ծավալուն ստեղծագործություն է կյանքի այս կամ այն հատվածի մասին, որը հեղինակը գրում է՝ հենվելով իր կենսագրական տպավորությունների վրա:

Զայրենական մեծ պատերազմի տարիներին հայ գրողները և՛ հայրենիքում, և սփյուռքում գրչով ու արյունով մարտի ելան ֆաշիստական հորդանքների դեմ: Նրանցից շատերն ընկան պատերազմում, շատերն էլ վերադառնալով՝ լծվեցին խաղաղ աշխատանքի՝ շարունակելով իրենց ներդրումը հայրենական գրականության պատմության մեջ:

Զայրենիքի կանչով պատերազմի առաջին իսկ օրից Մ.Սարգսյանը հագավ ռաճակաճակ համազգեստ և մտավ պատերազմական առօրյա: Ամենիցաճակ շփումը ռազմաճակատին և շփումը բազմազգ հերոսների հետ, նրանց հոգեբանությունը մոտիկից ճանաչելը կենսական առատ մյուս եղան գրողի համար, որը կերտեց պատերազմական քննադատական իր հրաշալի ստեղծագործությունները:

Բոլոր մեջերսներն արված են Մ. Սարգսյանի « Ընթերցողներ » հատոր I գրքից:

և 1942–45 թվականներին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վարել հրածգային վաշտի հրամանատարի, գումարտակի հրամանատարի պաշտոնները, պարգևատրվել Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Գերադասական շարժումը անընդհատ պրոցես է՝ վերելքներով և վայրէջքներով, կանգառներով ու նահանջներով: Նա ուղեկցում է մարդկությանը՝ միաժամանակ տալով նրան իր լույսն ու ջերմությունը, դառնալով նրա իդեալների, տվայտանքների ու երազների մարմնացումը:

Պատերազմը մարդկության հիշողությունն է, մարդկային հասարակության կենսագրության մի զգալի մասը: Եվ, չնայած փակվել է այդ էջը, գրող արվեստագետն այդ հիշողությունն արթնացնում է յուրովի, դառնում իր հասարակության կենսագիրը, նրա այդ «փակված էջերի» վերծանողը:

Եհշտ է, Մ.Սարգսյանը իր ստեղծագործական ուղին սկսել է պոեզիայով, հետագայում՝ իրար են հաջորդել արձակ և չափածո գործերը: Բոլորովին չխուճացնելով չափածոյում նրա ծանրակշիռ ներդրումը, ընդգծենք, որ, այնուամենայնիվ, նրա տարերքը արձակն է: Այդ է խառնամուղ, որ նրա բեղուն գրիչը այսօր հայ ընթերցողի սեղանին է դրել բազմաթիվ գրքեր, որոնց մեջ իր ծանրակշիռ տեղն է զբաղեցնում փպագրությունը, որոնցով էլ նա գրավեց իր հաստատուն և ուրույն տեղը հայ արձակի պատմության մեջ:

Մ.Սարգսյանի արդյունավետ գրական գործունեությունը կապված է հետպատերազմյան էտապի հետ: Նրա «Կյանքը կրակի տակ», «Ճակատագրով դատապարտվածներ», «Բարև, բարի արև», «Խաղաղություն պատերազմից առաջ», «Զմակարդվող արյուն», «Քաջ նագար», «Գրիգոր Նարեկացի», «Խաչված քաղաքը», «Դարավերջի հայը» դարձան ընթերցողների սիրելի գրքերը, որոնց մեջ նրանք գտան իրենց բազում հարցերի պատասխանները:

«Կյանքը կրակի տակ» վեպը մեր արձակի նվաճումներից է, ռազմի սոսկալի ճամփաներով անցած, դաժան պատերազմի ահարկու դեմքը տեսած զինվորների ապրումների, հույզերի ու սիրո անկեղծ պատում՝ օրագրի ձևով:

Կյանքի սերն է Մ.Սարգսյանի «Կյանքը կրակի տակ» վեպի առանցքը: Սերը հայրենիքի, մարդու ու բարու նկատմամբ: Այդ սերը նրան դրդեց անհուճկոքն ատել թշնամուն, ատել պատերազմի սև դեմքն ու ավելի ջերմ գնահատել մարդուն և պաշտպանել ի վերուստ նրան տրված սիրելու, արարելու, ապրելու իրավունքը:

«Մ. Սարգսյանը իր սրտառույն ու ցասումով լի խոսքն ուղղում է զայրացուցիչ անարդարությունների, մարդկային արժանապատվության, ստորացման դեմ ու իր երկը հնչեցնում, որպես հիմն՝ հայրենասեր ու անդուլ ժողովրդի, հայրենիքի հասցեին», - այսպես է արտահայտվել վեպի մասին Սևակ Արզումանյանը:

Օրվա իրադարձությունների նկարագրությունը իր՝ ականատեսի լեզվով գեղեցիկ ձև է և հուսալի մեցուկ հեղինակի համար՝ բնականորեն գործողությունների ընթացքը առաջ տանելու համար:

1964 թ. Սոֆիայում լույս ընծայվող «Երևան» թերթում (6 մարտի) Թորոս Թորանյանը իրավացիորեն նկատել է. «Շատ է գրված Հայրենական մեծ պատերազմի մասին: Ու տակալվին շատ ալ պիտի գրվի այդ հերոսական օրերու մասին, երբ Սովետական ժողովուրդները ճակատի վրա ու թիկունքի մեջ իրենց գերմարդկային ճիգերը լարելով՝ ճակատեցան ամենակատարելագործված զենքերով զինված ֆաշիզմի դեմ ու հաղթեցին... Սեր սերունդին ավագ պարտականություն է Մ.Սարգսյանին հետ սպանել պատերազմը»:

Իսկ Համո Սահյանը Մ.Սարգսյանի արձակ գործերի անդրանիկ ժողովածուի մասին գրել է. «Նրանք՝ այդ արվեստագետները, առանց որևէ կամայականության, մաքրագործելով իրենց մարտնչի և հոգու կենսագրությունը, թողնելով միայն անհրաժեշտն ու անխուսափելին, դարձնում են գիրք, որն ապրում է ուրույն մի կյանքով և միաժամանակ դառնում է հեղինակի երկրորդ կյանքը»: («Գրական թերթ» 2. IV. 1964)

Օրագրային ձևը խոստովանության պատումային ձև է, իսկ «Կյանքը կրակի տակ» խորագիրը վեպի էությունը ստույգ արտահայտող դարձվածք է: Այդ օրագիրը կռվող

զինվորի հոգու և սրտի պատմությունն է, վտանգված երիտասարդ կյանքերի պատմությունը, որոնք գտնվում էին պատերազմի բոցեղեն կրակների տակ: Ահա վեպի պարզություններից մեկը, որի մեջ ասես ամբողջ պատերազմն է խտացված:

- Իմ սերունդի ուղին դաժան, բայց հերոսական եղավ: Իմ սերնդակիցները այս հայրերն են: Սակայն ավելի շուտ պատմություն են նրանք՝ եղբայրական գերեզմաններ աղբյուր հուշարձաններ, ետմահու՝ հերոսներ, ետմահու լեհինյան մրցանակի լաուրեատներ, ետմահու արդարացված «մեղավորներ» և վերջապես յուրաքանչյուր տան մեջ մեծացրած և սրբացրած լուսանկարներ, քան հայրեր: (էջ 161 – 162)

«Կյանքը կրակի տակ» վեպը իր քնարական շնչով և ռեալիստական բնույթով դրվատանքի արժանացավ անվանի գրականագետների և գրողների կողմից: Վեպի մասին հիմնական գնահատականներ տվեցին անվանի գրողներ և գրականագետներ Դանիա Սահյանը, Ս. Սարիսյանը, Ս. Արզումանյանը, Վ. Ամանյանը, Մկ. Արմենը, Ա. Եղիազարյանը Դր. Թամրազյանը, Սերո Խանգադյանը: Կիմ Աղաբեկյանը գրել է. «Կռվող զինվորի օրագիրը տոսկ հուշերը փրկելու նպատակ չի հետապնդում: Մ. Սարգսյանը երկյուղածությամբ կատարում է գրող – քաղաքացու պարտականությունը, ընկերների հիշատակի առջև ունեցած իր պարտքը: Պարտքի այդ զգացումը գրողի ներաշխարհում խլրտացող ասելիքն է՝ շաղախված սպիներով պատած վերքերի ու կորուստների մշտատև ցավին» («Գարուն», N 2, 1980 թ.)

«Կյանքը կրակի տակ» վեպը բարձրարժեք է ամենից առաջ նրանով, որ հերոսների հոգեբանությունը կերտված է բնական, հավաստի շտրիխներով, որն ավելի գրավիչ ու կենսահաստատ է դարձնում երկը:

Ահա մեկիկ-մեկիկ բացում ենք զինվորի օրագրի էջերը, որոնք խուճացած են ու հին, գուցե պակաս էջեր էլ կան այնտեղ, սակայն, ինչպես խոստովանում է հեղինակը՝ «ինձ համար խոսում և կենդանի է կինոժապավենի պես, որի վրա ես տեսնում եմ իմ ընկերներ-րին և ինձ՝ առանց գրիմի, առանց ավելորդ պայմանականության»:

Նորագույն շրջանի հայ վեպի խոշոր գիտակ, ակադեմիկոս Ս. Արզումանյանը նշում է. «Այս մեթոդով է նա կերտում իր հերոսներին, որոնց կարճատև կյանքից օրագրի փոշեպատ ու տեղ-տեղ արյունոտ տողերի արանքում մնացած դրվագները շատ բան են մրմնջում, շատ բան են հուշում»: (Սովետահայ վեպը, հատոր III, էջ 123)

Կարողում ես գիրքը և թվում է, թե սովորական, զինվորական առօրյա է, արտասովոր ոչինչ չկա, սակայն հենց այդ սովորականի մեջ է գրողը հայտնաբերում գեղեցիկն ու հերոսականը, քնարականն ու լուսավորը: Սարգսյանի հերոսները այն երիտասարդներն են, որոնց հետ նա գնացել է ռազմական ուսումնարան, ապա՝ ուղարկվել առաջավոր գիծ: Անտարակույս, պատերազմն ամենամանր իրադրությունն է, մարդուն, ընկերոջը, բարեկամին ճանաչելու ամենամեծ փորձարանը, որից ոչ բոլորն են պատվով դուրս գալիս: Դոստ է մշտահողով ժամանակը, անցնում են տարիները, սպիանում են վերքերը, բայց հաճախ է պատահում, որ ցավում են այդ սպիացած վերքերը: Մ. Սարգսյանը տեղ-ծեց պատերազմին մասնակցած ու իր սիրամեծով անմահացած սերնդի ասքը, այն սերունդի, որի համար հայրենիքը սկսվում է մանկության օրորոցից, հայրենի տնից ու եզերքից ու ձգվում է մինչև Կանչալասկա ու Միջին Ասիա, Կալինինգրադ ու Դրին...

Ահա 18-ամյա պատանիները ճանապարհում են Մամգլիխ՝ ռազմական ուսումնարան: Բոլորն էլ սիրահարված, բոլորն էլ տոգորված լուսե երազանքներով: Մնում է միայն մեկը՝ պատմաբան Դայկը: Նա պիտանի չէր ռազմաճակատում ծառայելու համար, որով հետև փոքր ժամանակ ընկել էր ծառից, թևը կտրտել և դաստակը ծուռ է աճել: Նրան ոչ մեկը չի նախանձում (հասակն էր այդպիսին), տղայական ինքնագոհությամբ ճանապարհվում են, միայն Օմիկը կատակում է:

- Բախտավոր պատմաբան, բայց աղջիկների հետ սիրային պատմություններ չսարքես, բախտավոր ...

Այս կատակի մեջ ավելի շատ անբախտություն և խղճահարություն կար ...

Դեղինակի պատումը անկեղծ է, զգացմունքային, պատկերները շաղախված են բնաշխարհի գեղեցկություններով և տեղի հումորով: Դեռևս «անհոգ» տղաները սիրահարական նամակներ են գրում կամ «ընդդիմանում» բեղերը թրաշելուն:

Մեկը մյուսի հետևից «Ներկայանում» են հերոսները. Օտար Սատիաշվին, Սիփավոյ, Վահանը, Ֆյոդոր Վոլկովը, Գրիգայը, Աբրահամը, գումարտակի հրամանատար Սպլինկովը, Իվան Մեդվեդը ...

Եվ Մանգլիսում, և՛ ռազմաճակատում դասակը ինտերնացիոնալ է. հայը, ռուսը, լիտվացի միասին են գործում, վիրավորվում, մահանջում, հաղթում կամ ... սպանվում:

Մ.Սարգսյանի ոճը ունի մի առանձնահատկություն, մա հաճախ է դիմում հին ու նոր հուշերին և վարպետորեն դրանցից առանձնացնում էականն ու գլխավորը:

Վեպի կենտրոնական դեմքը հեղինակն է, որը ռազմական գործողությունների ակտիվ մասնակիցն է, ակամատեսը և, իհարկե, պատմողը: Ռազմական ուսումնարանի պատմիչների թեման աղջիկներն են: Ինքը՝ գրողը, պատմում է իր «սերերի» մասին, տղայական հանփշտակվածությունը նրան թեքում է մեկ դեպի Նազիկը, մեկ՝ Սոֆիկը, մեկ՝ Նոնոն կամ Լիլիթը... Պատանու անհաստատ համակարգն ու հույզերը տարակուսանք են առաջացնում հենց իր մեջ. «Համա՛ թե սիրահար եմ... Վախենում եմ իմ թուլությունից, չափեմից առաջ ոչ թե Նազիկին, այլ իմ երազներին դավաճանելուց, որոնք մինչև այսօր, մինչև Նոնոն մաքուր, խնամքով կրել եմ հոգուս մեջ: Գեղեցկությամբ սպառազեն ուսում եկել, խառնվել է Նազիկին և քիչ է մնում դուրս մղի նրան իր օրինական տեղից: Ի՞նչ խոսքով՝ կորցրել եմ գլուխս: Նազիկի փոխարեն գտել Նոնոյի չաչերը...»: (էջ 174)

Պարզ է, որ երիտասարդ տղան հույզերի հորձանուսում չի իմանում հավատարիմ մնա՝ իր առաջին սիրուն, թե՛ Նոնոյի շփոթեցնող հայացքի գերին դառնա: Մինչև ռազմաճակատ մեկնելը ուսումնարանի սաները արդեն զգում են, որ պատերազմը չարիք է: Ահա կոմիսարին հարց է տալիս Ֆ.Վոլկովը, անհանգստացած է, տալից այլևս նամակ չի ստանում, քանի որ իր ծննդավայրը՝ Կալաչը, վերցրել են գերմանացիները: Գրիգայը՝ նրա մտերիմ ընկերը, վկայում է, որ գիշերները չի քնում, երբեմնի կենսախիճը և ուրախ Վոլկովը նույնիսկ հեկեկում է. «Այնտեղ թշնամու ձեռքին են նրա ամբողջ ընտանիքը՝ մայր, բույր, հարսնացու, այնտեղ՝ ֆաշիստական սվաստիկայի տակ կառվում է նրա հայրենի տունը, մանկությունն ու պատանեկությունը»: (էջ 177):

Վոլկովին չկարողացան համոզել, որ լավ կլինի ռազմաճակատ մեկնի սպայական ուսուցիչներով, մա փախավ, բռնվեց. «Վոլկովին դատեցին. զինվորական տրիբունալը նրան դատապարտել էր ութ տարվա ազատազրկման, սակայն Վոլկովը պետք է մեղքը կանխել՝ կռվելով տուգանային գումարտակի կազմում: Դատապարտյալը տրիբունալին շնորհակալություն էր հայտնիք և գոհ հեռացել դահլիճից»: (էջ 179)

Վոլկովը մեկն է այն բազմաթիվ զինվորներից, որոնք ռազմի դաշտ են նետվել եռակի վրեժով ու ատելությամբ՝ ազատագրելու իրենց գերված հողը, ընտանիքը:

Պատերազմի մասին գրելով՝ հեղինակը ժխտում է պատերազմը: Սա ոչ թե վեպ է գրվի ու պատերազմի մասին, այլ խաղաղության ու բարության կոչ է, մարդկայինի և ասպրելու իրավունքի աներկբա մի հայտարարություն՝ թաթախված քնարական, պայծառ վեպությամբ:

Ռազմաճակատի գիծը դեռ հեռու է, սակայն պատերազմի աղետներն իրենց զգացնել են տալիս՝ հանկարծամահ է եղել զորացրված մի վրացի զինվոր:

Հեղինակն արդեն ունի իր կարծիքը պատերազմի մասին. «Պատերազմն ավերում է մարդկանց, որբացնում ընտանիքներ, երեխաներ, մայրեր, նրա ահռելի ուրվականը չղջում է ամենուր»: (էջ 182)

Կատակներով, անհոգ պատմություններով, սերերով լի պատանեկությունը տեղի է տալիս. երիտասարդ սպաները հրաժեշտ են տալիս Մանգլիսին բնավ չմտածելով մահվան մասին. «Տառիկս միշտ ասում էր. «Ջահելությունը քահլան ձի է: Դար ու փոս չի հարցնում, թռչում է ...»: Զգում են նրա խոսքերի ճշմարտությունը: Գնում ենք ռազմաճակատ, սակայն տասնուութ-տասինինը տարեկան նորընծա սպաները երազում են ապագայի, կյանքի, սիրո մասին, բայց մահվան մասին՝ երբեք »: (էջ 187)

Գնում են երիտասարդները ռազմաճակատ: Գնում են բյուրավոր իրենց հասակակիցներին հետ, իսկ առջևում մահն ու հերոսությունը խառնված են իրար: Ռ՝վ կենդանի կմնա, ռ՝վ կսպանվի: Ոչ ոք չգիտի: Ավելի ճիշտ՝ ռ՝վ չգիտի սպանվի: Դա էլ չգիտեն: Պատերազմ է, ռ՝վ գիտե՛ ինչ է սպանվում իրեն: Իսկ օրագրում Սիբայել-հեղինակը անկեղ-

ծությամբ գրի է առնում... «Դուր չի գալիս զոհվել բառը: Ինչու՞ զոհվել, երբ աշխարհն այնքան լավ է, երբ կան Նազիկն ու Նոնոն, երբ ես ջախել եմ. «կանաչ-կարմիր», ինչպես ասում էր տատս: «Կլեզվեմ մահի դեմ, թշնամու դեմ, չէ՞ որ ես զինված եմ ոչ միայն զենքով, այլև սիրով, կյանքով, երազներով, « կանաչ-կարմիրով »... Կմեռնեմ, բայց չեմ զոհվի ...»: (էջ 188)

Հմտորեն է նկարագրված ռազմաճակատը: Նրա անհանգիստ, տաք շնչառությունը զգացվում է. ճակատ մեկնող շարասյուներ, տանկեր, ֆուրգոններ, վիրավոր մարտիկներ, գերիների խմբեր:

«Ռազմաճակատը մոտ է: Նրա ագահ երախը կլանում է շարասյուն շարասյան հետևից և աղաղվ, ծանելով դուրս է մղում երկաթե կտրտանք, սպանված և ջախջախված մարդիկ և ամենից շատ սպանված երազանքներ ...

Ռազմաճակատը՝ մի հրեշային մատաղաց ...» (էջ 189)

Զինվորներն ու սպաները շարժվում են դեպի առաջավոր գիծ: Արկերի շառալ, զնդացիրների և ավտոմատների արճեն տեղատարափ, ականների պայթյուն: Երիտասարդ հերոսը տեսնում է ամենագարիուրելին տեսնում է, թե ինչպես են սպանում մարդուն: Իսկ երբ կարճ ժամանակով լուռ են հրամաններն ու զնդացիրները, տղաներն աղմկում են, ծիծաղում, կատակում.

«Սեր, ծիծաղ և դիակներ...

Կյանք ու մահ խառնվել են իրար»... (էջ 194)

103. Տես՝ Ա. Ա. Акопян, стр. 129.

104. Տես՝ Հյն. քեն Պետրոսյան, էջ 55:

105. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 64:

խրաքանչյուր աշխարհի գրով»¹⁰⁶։

Գիրք թղթացում տեղակայված այս պարբերությունը և հետևապես «խրաքանչյուր աշխարհի գրով» խոսքերը պարզ և անվիճելի կներգով ապացուցում են, որ Բաբկն կաթողիկոսի Ա թղթի հետ միասին Դվինի 506թ. ժողովի մասնակից վրաց և աղվանից եպիսկոպոսներն առանձին-առանձին «Հաւատոյ նամակ» են տվել՝ իրենց ստորագրություններով վավերացրած¹⁰⁷։

Եվ՝ այսպես, և 506թ. և 554թ. Դվինում գումարված եկեղեցական ժողովները «ամրագրեցին Հայոց դավանանքային ինքնորոշումը և ազգային միաբանությունը նոր պայմաններում»¹⁰⁸։

Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունից երևում է, որ հիշյալ, նաև հետագա ժամանակներում ծագած կրոնական զանազան բնույթի խնդիրները նրբոր չներգործեցին ու չկարողացան խաթարել Հայոց եկեղեցու հիմնական դիրքն ու հաստատուն կերպարը, թեկուզ և երկրի քաղաքական մասնատվածության պայմաններում

Ակնհայտ է, որ Հայոց արևելից կողմերի, այսինքն՝ Արցախ և Ուտիք հայաշխարհների, ինչպես նաև բուն Աղվանքում քրիստոնեական քարոզչության շնորհիվ առաջացած հոգևոր առաջնորդությունը, ինքնատիւնը և կազմում էր Հայոց եկեղեցու մաս, իսկ հոգևոր առաջնորդարանը ի սկզբանե գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի Ամարաս բնակավայրում։ Հոգևոր այս առաջնորդության մեջ ընդգրկված էին նաև բուն Աղվանքի քրիստոնյա ցեղերը։ Եվ՝ առաջնորդությունը ի սկզբանե հենց անվանվել է նաև Աղվանից վերը հիշատակված պատճառով, ինչն էլ տարակարծիքների, այդ թվում սխալ տեսակետների տեղիք է տվել։ Ասվածը համոզիչ ներկայացնելու համար մատնանշենք այն հանգամանքը, որ Հայոց արևելից կողմերի առաջին նախկուգոս Ս.Գրիգորիսը պատմական աղբյուրներում հայտնի է «Աղվանից եպիսկոպոս» հիշատակությամբ։ Փ. Բուզանդը հետևյալ կերպ է ներկայացնում Ս.Գրիգորիսի մասունքների հուղարկավորությունը . «սարկավագները Գրիգորիսի մարմինը ... բերին ի գավառն իւրեանց ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն, որ անուանեալ կոչի Ամարագ։ Եւ եղին զնա աս եկեղեցւան, զոր շինեալ էր առաջոյն Մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծին աշխարհին Հայաստան երկրին»¹⁰⁹։ Հարկ է

106. «Գիրք թղթաց», էջ 51։

107. Տե՛ս՝ Ե.Գ. Տեր-Մինայան, նշվ. աշխ., էջ 43։

108. Է.Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Եր., 2000թ. էջ 4։

109. Հովհ. Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Եր., 1996, էջ 46։

նկատել, որ պատմիչը ի նկատի է առել Հայոց Ազգաճարը, որովհետև անգամ հատուկ շեշտել է «ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց», որ նշանակում է Հայոց սահմանի մեջ գտնվող Ազգանից կողմը: Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս պատմիչը նույն փաստը հետևյալ կերպ է ներկայացրել. «և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա ի գեղոյն Ամարաս, որ ՚ի Փոքր Սինիս»¹¹⁰: Հասկանալի է, որ Փոքր Սյունիք անվան տակ կաթողիկոս պատմիչը ի նկատի ունի Արցախ աշխարհը: Իսկ Մատթեոս Ուռեայեցին, անդրադառնալով հիշատակված Հայոց Ազգանքին, այն, ինչպես արդեն նշել ենք, անվանել է «Աղվանք կամ խորին աշխարհ Հայոց»¹¹¹:

Սյունիքի պատմության շարաւարդ Մտեփանոս Օրբելյանը, նկարագրելով մոնղոլների տիրապետության մշայլ ժամանակները, գրի է առել նաև Ս.Գրիգորիսի անվան հետ կապված հետևյալը. «Տարայիճի որդի Ջալալին մի քանի մոնղոլ մարդկանցով նա ուղարկեց Ամարաս, որը հին ժամանակներից Աղվանքի կաթողիկոսական մեծ աթոռն էր եղել և իր մոտ բերել տվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդի Վարդանի որդու՝ Սուրբ Գրիգորիսի գավազանը: Բանի որ Գրիգորիսի գերեզմանն այնտեղ էր գտնվում, ուստի և գաղվազանն էլ պահպնում էր նույն եկեղեցում: Գավազանի հետ տարան նաև լստվածաիրաշ սրանչլի խաչը՝ երեսուրկվեց թանկագին քարերով, և հին ժամանակներից այնտեղ էր... Այս ձևով Աղվանից աշխարհը զրկվեց թանկագին ու աստվածային այդ գանձերից»¹¹²:

Միքայել Չամչյանը, նկարագրելով Ս.Գրիգորիսի առաքելությունը, գրել է. «Մոյն այս սբ Վրթանէս ձեռնադրեալ գերեց որպի իւր գԳրիգորիս՝ արխեպիսկոպոս՝ առաքեաց յաղուանս հայոց. որ և նաեւատակեցաւ անդ, ի նոցանէ: Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութի կաթողիկոսութե աղուանից»¹¹³:

Անշուշտ, պատմիչը ևս վկայակոչում է հիշյալ տեղանկերը, նշելով, որ Ս.Վրթանէսը իր «երեց» որդուն ձեռնադրում է «Հայոց Աղվանքի» (ընդգ.-Մ.Ը..) եպիսկոպոս, որով և հետագայում սկիզբ է դրվում Հայոց Աղվանից կաթողիկոսություն: Հետևաբար, առկա աղբյուրների վկայակոչմամբ կարելի է փստաւաբար ասել, որ Աղվանից կաթողիկոսությունը հիմնադրվել է որպես Հայոց եկեղեցու բաղկացուցիչ մաս: Այն իր ծագմամբ, էությանբ ու գոյությամբ մշտապես հայ լուսավորչական թնմ է եղել: Ինչ

110. Մատթեոս Ուռեայեցի, Ժամանակագրություն, Եր., 1973, էջ 2:

111. Փ.Լուսաւանդ, Հայոց Պատմություն, Եր., 1987, էջ 27:

112. Մո.Օրբելյան, էջ 368:

113. Միք.Չամչյան, Խրախճան Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 84:

վերաբերում է բուն Աղվանքի աղվանական գեղերին, ապա «... աղվանները քրիստոնեության մուտքից հետո, և ապա հետգեհտե ընկել են հայերի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ու մշակութային ազդեցության տակ: Ի վերջո աղվանների ճնշող մասը էթնիկապես համաձուլվել է հայերի հետ: Այդ բանում կարևոր դեր է կատարել Աղվանական եկեղեցին..., որը Հայկական եկեղեցու արքեպիսկոպոսությանն էր մեկն էր, որի պետը նախկինի պես շարունակում էր կրել Աղվանից կաթողիկոսության տիտղոսը, այնպես, ինչպես Հայկական եկեղեցու կազմում Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսները»¹¹⁴:

Աղվանից կաթողիկոսության հիմնադրումը թվադրված էր նաև ժամանակի քաղաքական պայմաններով: Քաղաքական մեկուսացման մեջ հայտնված Հայոց արևելից նահանգների հոգևոր առաջնորդարանների վիճակը ավելի էր ծանրացել թեկուզ միայն այն պատճառով, որ գրկված լինելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ամենօրյա հսկողությունից, նրանք ենթակա էին տարատեսակ վտանգների: Եթե անտեսենք անգամ նրա գոյությանը սպառնացող վտանգը տիբեթացիների կողմից, ապա պետք է հաշվի նստենք այն իրողության հետ, որ Բաղկեղոնի ժողովի հեղինակներն ու կողմնակիցները ջանք ու եռանդ չէին խնայում այդ ժողովի նորմերը չընդունած եկեղեցիները իրենց ենթակայության տակ դնելու, հետևաբար նաև նրանց ինքնուրույն գոյատևմանը վերջ տալու նպատակին հասնելու ուղղությամբ: Փաստորեն դավաճանքային այդ շեղումները ի էին հայոց հոգևոր ու քաղաքական ուժերը ջլատելու վտանգով:

Այսպիսով, Հայոց արևելից կողմերի, ինչպես նաև անդրկուրյան թեմերը, մերժելով քաղկեդոնականությունը, այդ ուղղությամբ առավել վստահաբար գործելու կարևորագույն նրաշիջը տեսնում էին հիշյալ թեմերը մեկ նվիրագրությունում միավորելու մեջ: Այդ րալին էր մղում նաև 6-րդ դարում ստեղծված քաղաքական աննպաստ իրավիճակը: Բնականաբար երկրի քաղաքական իրավիճակի փոփոխության հետ փոփոխվում էր նաև եկեղեցին՝ հարմարվելով նոր պայմաններին ու գործելով տվյալ շրջանի ոգուն ու պահանջներին համապատասխան:

Վաչագան Բարեպաշտի մահից հետո հաճախակի Լին դարձել հյուսիսից խազարների արշավանքները, որանք տվերում էին բնակավայրերը, այրում եկեղեցիները,

114. Մ. Ս. Անադյան, Հայկական Մատենադարան, հ. Ա, էջ 614:

մատենագրական երկերն ու ավետարանները: «Ազա յերկրորդ ամին խստովու՝ արքայից արքայի, յորժամ զսկիզբն հայ թուականին նդին, ի սոյն ամի փոխեցին զաթառ հայրապետութեանն Աղուանից ի Չորայ քաղաքն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Զրիստոսի: Եւ նստուցին հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծիւրանց, որ կալեալ զաթառն ամս իՌ, սրբական վարուր կեցեալ փոխադրի յանմահ կեանսն»¹¹⁵:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունները վկայում են, որ սկզբում Ամարասը, այնուհետև Պարտավը հանդիսացել են Հայոց եկեղեցու Արևելյան թեմի նախկնդոսական կենտրոնը: Եվ 6-րդ դարի սկզբին խազարական արշավանքների վտանգից դրդված, նախկնդոսական աթոռ ժամանակավորապես Պարտավից տեղափոխվել էր Չող:

Հիշյալ հիմնախնդրի վերաբերյալ ճշգրիտ աղբյուրների բացակայության պատճառով ուսումնասիրողները ստիպված էին պարզապես ենթադրություններ կատարելու մասնավորապես Մ.Կաղանկատվացու հաղորդած որոշ տեղեկությունների շուրջը և որի հետևանքով ավելի խճճված տեսք է ընդունել այն: Հիմնախնդրի գիտականորեն ճշգրիտ ու համոզիչ մեկնաբանություն է տվել Ալ.Հակոբյանը. «Նախկնդոսական աթոռ Պարտավ է տեղափոխվել հենց Չող-դերբենցից, որտեղ 428 թվականից ի վեր գտնվում էր Աղվանքի մարզպանի նստավայրը... ամենայն հավանականությամբ հենց այդ հանգամանքն էլ բացահայտում է Աղվանից մարզպանության հոգևոր առաջնորդարանի տեղադրությունը»¹¹⁶: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հեղինակը 428 թվականին է վերագրում Աղվանից մարզպանության կազմավորումը: Սակայն հիմնավորելով իր շարադրանքը, այգնուհետև Ալ.Հակոբյանը նշում է, որ մինչև 462 թվականը գոյություն է ունեցել Աղվանից թագավորությունը կապաղանկ կենտրոնով, որտեղ գտնվում էր նաև Աղվանից հոգևոր առաջնորդը՝ Աղվանից նախկնդոսը: Այստեղից էլ եզրակացնելով, նա նշում է, որ «462 թվականից հետո

Աղվանքի հոգևոր առաջնորդարանը տեղափոխվում է մարզպանության մայրաքաղաքը՝ Չող-դերբենդ»¹¹⁷: Անա դրանից հետո էլ, ըստ նրա, սկզբնաղբյուրները Աղվանից հոգևոր առաջնորդին հիշատակում են արքեպիսկոպոս ձևով:

Ալ.Հակոբյանի հիշյալ տեսակետը հիմնավոր ու համոզիչ է, քանի որ ակնհայտ է, որ

115. Մ.Կաղանկատվացի, էջ 119:

116. Ա.Акопян, стр. 133.

117. Ա.Акопян, стр. 134.

հոգևոր առաջնորդարանը հիմնականում տնդականվել է աշխարհիկ իշխանության անմիջական հովանու ներքո: Եվ տվյալ պարագայում նորաստեղծ մարզպետության կենտրոն Չոբուս հոգևոր առաջնորդարանի հաստատումը չպետք է կասկած հարուցի:

Մեկայն տվյալ պարագայում կա քաղաքական մեկ այլ հանգամանք, որը թույլ է տալիս եզրակացնելու, որ հիշյալ իրադարձություններից քիչ հետո, այսինքն՝ 5-րդ դարի վերջին վաչագան Բարեպաշտի կողմից հիմնած իշխանապետությունը, որ ընդգրկել է բացառապես Արցախ և Ուտիք նահանգները, նույնպես ունեցել է իր հոգևոր առաջնորդարանը՝ նախկնդոսության ձևով: Իշխանապետությանը ենթակա հոգևոր կենտրոնները միավորված էին այս պարագայում Պարտավի նախկնդոսի հովանու ներքո: Վաչագան Բարեպաշտի թագավորության շրջանում Հայոց արևելից կողմերի եկեղեցին գտնվում էր Հայոց եկեղեցու անմիջական ենթակայության տակ:

Այ.Հակոբյանը նշում է, որ «Աղվանից պատմությունը» ոչինչ չգիտե Աղվանից եկեղեցու կազմադրական շրջանի մասին¹¹⁸: Անշուշտ դա ունի իր հիմնավորումը: Աղվանից եկեղեցու հենց կազմադրական շրջանում Հայոց արևելից եկեղեցին նրանից առանձին էր գործում: Հիշյալի ապացույց է Աղվնի ժողովը և նրա մասնակիցների անունները, որոնց շարքում հիշատակված չեն Չոզից ժամանած պատվիրակների անուններ:

Այ.Հակոբյանը իրավացիորեն նշել է՝ նաև, որ «Աղվանից պատմությունը» և նրա «աղվանական» սկզբնաղբյուրները արտացոլում են աջակողմյան Աղվանքի Արցախ և Ուտիք հայաշխարհներում հիմնավորված նյութերը, որը Աղվանից եկեղեցու իրավասության տակ 1, անցել 428-462թթ. Աղվանից մարզպետության կազմավորման և Չոբուս նրա հոգևոր կենտրոնի հաստատման ժամանակ¹¹⁹: Տեսակետը հիմնավորվում է Մ.Կաղանկատվացու հ2, գլ.Դ և հ.3, գլ.23-ում «Փոխումն հայրապետական աթոռիցն Աղուանից ի Չորայ և նստուցանել ի մեծ քաղաքին Պարտաւ...», որ տեղի է ունեցել 552թ.:

Անշուշտ, վաչագան Բարեպաշտի իշխանապետությունը և Աղվնի ժողովն ու նրա ընդունած «Մեծմանագրութիւն կանոնականը» չընդունելու դեպքում առաջադրված տեսակետը կդառնա տրամաբանական ու համոզիչ: Մեկայն հարկ է նկատել, որ Այ.Հակոբյանը ևս հավկած է այն մտքին, որ Մ.Կաղանկատվացին հիմնականում գրի է առել Հայոց արևելից կողմերի՝ այն է Արցախ և Ուտիք հայաշխարհների կրոնական ու

118. Տես՝ Նույն տեղում:

119. Ալ.Առաքյ, սր. 135

քաղաքական իրադարձությունները:

Հենվելով պատմական սկզբնաղբյուրների և նրանց շուրջը առկա պատմագիտական ուսումնասիրությունների վրա կարելի է եզրակացնել, որ 5-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբին, մասնավորապես Վաչագան Գ-ի իշխանազնություն շրջանում Հայոց արևելից կողմանց եկեղեցին՝ գտնվելով Առաջահիկ իշխանական տան հովանու ներքո, հաստատվել էր նաև Ամնայն Հայոց եկեղեցուն ննջակա իր հոգևոր առաջնորդարանը, որը թերևս կրկին քաղաքական պայմանների թվադրանքով առանձնացել էր բուն Աղվանքի հոգևոր առաջնորդարանից, քանի որ վերջինս գտնվում էր Աղվանից մարզպանի հովանու ներքո: Եվ Վաչագան Բարեպաշտի իշխանազնության անկումից հետո, երբ Հայոց արևելից կողմերը կրկին հայտնվեցին Աղվանից մարզպանության կազմի մեջ, բնականաբար, անհրաժեշտություն էր առաջացել եկեղեցական նրկու թնմերը, այն է բուն Աղվանից և Հայոց արևելից եպիսկոպոսական թեմերը միավորելու մեկ նվիրապետության մեջ:

Ուրեմն հետևությունը մեկն է. դավանանքային ու քաղաքական պայմանների դրամամբ 552 թ. Պարտավում վերահաստատվեց եպիսկոպոսական աթոռը, միավորելով Հայոց արևելից կողմանց ու բուն Աղվանքի մի շարք թեմեր և իրենով սկզբնավորեց Հայոց արևելից կողմանց, աղբյուրներում «Աղվանից» անվանված կաթողիկոսական աթոռը: Այդ է վկայում նաև նորաստեղծ նվիրազնության առաջին գահակալ Աբաս եպիսկոպոսի տիտղոսը՝ «Կաթողիկոս Աղուանից, Լինաց և Չոդայ»¹²⁰: Նշված տիտղոսը բնականաբար իրենով նշանավորում է հիշյալ թեմերի միավորումը մեկ նվիրապետության մեջ: Պարտավում հաստատված նորահաստատ նվիրազնության պաշտոնական լեզուն դարձան հայերենը¹²¹: Չնայած դրան, բուն Աղվանքում որոշակի գործածություն ուներ նաև աղվաներենը: Սակայն քանի որ այն ընդունելի ու հասկանալի էր միայն բուն Աղվանքում, հետագա զարգացում չունեցավ և բնականաբար դադարեց իր գոյությունը: «Այսպիսով, VI դարի երկրորդ կեսին Աղվանից եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական բնակչություն ունեցող ծախափնյա լայնարձակ տաքածքներ...»¹²²:

Նորահաստատ կաթողիկոսական աթոռը շուրջ 44 տարի գլխավորեց Տեր-Աբաս արքեպիսկոպոսը (552-596թթ), որը և հանդիսացավ «Աղվանքի պատմության»

120. Բ.Ուրաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 110:

121. Տնւ. Ալ.Առօթ, ժր. 138.

122. Տնւ. Ալ.Առօթ, ժր. 139-140.

կաթողիկոսաշարի առաջին ներկայացուցիչը: VI-VIII դդ. Աղվանից կոչված հայ կաթողիկոսությունը, որը Աղվեհի ժողովի սահմանած կանոնների կիրառմամբ աստիճանաբար ամրապնդում էր իր տնտեսական ու իրավական դիրքերը, ընդլայնում իր հոգևոր ու քաղաքական գործունեությունը և գնալով առավել մեծ դեր էր կատարում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի հոգևոր-լուսավորչական, ինչպես նաև քաղաքական կյանքում: «Արցախեան մէն մի գավառ ունեցած է իւր սեպեակն վանքը եւ իւր առանձին գաւառակալ առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը, օրինակ՝ Դիզակ գաւառն՝ իբրեւ նախկուպոսարան, նախ ունեցած է Դիզափայտի վանքը, ապա՝ Կաւաք, ապա Գտիչ եւ յետոյ՝ Սպիտակ-Լաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հերիերի տաճարը եւ Երեմն՝ Քոչիզի շինությունը. Լաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-իրանաց վանքը եւ Մայրաքաղաք, Ընստակ գաւառն՝ Դատի վանքը, Ջրաբերդն՝ Ջրվշտի կամ Եղիշ-առաքելայի վանքը, Մեծ Կողմանք կամ Կիրստանն՝ նախ՝ Հոռեկայ, եւ ապա՝ Ամենափրկիչ վանքերը, Գարդմանն՝ նախ՝ Մզնաբերդ եւ յետոյ՝ Թարգմանչաց վանքերը, Փառխոսն՝ նախ՝ Փառխոսի, ապա՝ Խորանշատի եւ յետոյ՝ Չարեքայ վանքերը, Քուստի կամ Քաւս գաւառն՝ Շիմուրատայ եւ Վարազայ վանքերը եւ այլն, եւ այլն»¹²³:

Գիրք թղթոցում պահպանվել է Հովհաննես Բ. Գաբեղենացու «Թուղթ զոր Տէր Յովհաննէս հայոց կաթողիկոս և այլ նախկուպոսանք, առ Աղուանից նախկուպոսոսս արարին»¹²⁴ վերնագրով նամակը, որն ուղղված էր. «Աբասու Պարտուայ նախկուպոսի, Մովսէսի Բ ավաղատու նախկուպոսի, Գրիգորի Կապաղականու նախկուպոսի, Հռոմակայ Ամարասու նախկուպոսի, Տիմայթի Բաղասականու նախկուպոսի, Ամբակումայ Շաքից նախկուպոսի, Յոհանակայ Գարդմանաց նախկուպոսի, Ղևոնդի Մեծկուանց նախկուպոսի»: Նույն գրությունը պահպանվել է նաև Մ. Կաղանկատվացու աշխատության մեջ, սակայն պետք է նկատել, որ ներքորդ տարբերակում Աբասը հիշատակվում է ոչ լեռն որպես «նախկուպոս», այլև «կաթողիկոս»¹²⁵: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ Աղվանից եկեղեցին Հայոց կաթողիկոսության հարաբերությամբ ճանաչվում էր որպես նյութակա լեռն և ոչ առանձին կաթողիկոսություն: Ինչ վերաբերում է Մ. Կաղանկատվացու հիշատակությանը, ապա պետք է նշադրել, որ այն պարզապես

123. Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 155-156:

124. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81-84:

125. Մ. Կաղանկատվացի, էջ 126:

հետագայում մտցված փափոխություն է, քանի որ Աբասը տակավին չէր ձեռնադրվել Աղվանից կաթողիկոս: 7-րդ և հետագա դարերի հայկական պատմական աղբյուրները հաղորդում են, որ Աղվանից կաթողիկոսները իրենց ձեռնադրությունը սկսած Գրիգոր Լուսավորչից, ստանում էին Հայոց կաթողիկոսից:

Ս.Տ.Երեմյանը, հենվելով Հովհաննես Բ Գաբելյենացու կողմից հիշատակված անունների վրա, գտնում է, որ Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ ժամանակաշրջանում բաղկացած էր 8 եպիսկոպոսական թեմներից¹²⁶: Սակայն Բ.Ուլուբաբյանը վիճարկելով հիշյալ կարծիքը, իրավացիորեն նշել է, որ Հովհաննես Գաբելյենացին պարզապես չի հիշատակել Աղվանքի եպիսկոպոսական բոլոր թեմների առաջնորդների անունները: Առաջադրված տեսակետը նա հիմնավորում է, մեջբերելով նույն ժամանակաշրջանին պատկանող այլ աղբյուրներում հիշատակված Սեծաբանից, Գուչա, Չոզի և այլ առաջնորդանիստ կենտրոսներ¹²⁷: Հովհաննես Գաբելյենացու հիշյալ նամակը պահպանվել է նաև «Գիրք թղթոցում»¹²⁸: Նշենք, որ նամակի հիմնական նպատակն էր՝ զգուշացնել Աղվանից աշխարհի եպիսկոպոսներին իրենց թեմերը թափանցած նեոտորականներին և քաղկեդոնականներին դիմագրավելու համար¹²⁹:

Կաթողիկոսության մեջ ընդգրկված հիշյալ եպիսկոպոսությունների միաբանությունը նշանակալից դեր խաղաց քաղկեդոնականության և տարատեսակ աղանդների դեմ տարվող պայքարում: Ինքը՝ Տեր-Աբասը, աղբյուրներում հիշվում է որպես այլադավանության դեմ աննկուն պայքարող հոգևոր առաջնորդ:

Այսպիսով, Աղվանից կաթողիկոսությունը հիմնադրվել է որպես Հայոց եկեղեցու բաղկացուցիչ մաս և հետագա իր գոյությամբ մշտապես հանդիսացել է Հայոց եկեղեցու ամենահզոր թեմներից մեկը:

126. С. Т. Еремян, *Экономический и социальный строй Албании III-VII веках*, „Очерки истории СССР III-IX веков“, Москва, 1958, стр.324.

127. Բ.Ուլուբաբյան, *Հայոց արևելից եկեղեցիները և մշակույթը*, էջ 117:

128. Տես՝ Եզն. քին.Պետրոսյան, *Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ*, Էջմիածին, 1984, ԺԱ-ԺԲ, էջ 80

129. Տես Նույն տեղում:

Резюме

Таким образом Албанское католичество было основано как отдельная ветвь в составе Армянской церкви и в своей последующей деятельности являлась одной из самых сильных и влиятельных ветвей Армянской церкви.

So Albanian church was founded as a consisted part of Armenian church and by its further activity always was one of the great and powerful part of Armenian church.

Ա. Ա. Հարությունյան

Հայ և օտար պատմագրությունը, անդրադառնալով Շուշի քաղաքի պատմական անցյալին, կարողացել է լուսաբանել ընդամենը երեք հարյուր տարվա առանձին դրվագները միայն: Այդ բացը լրացնել հնարավոր է միայն Շուշի քաղաքի շրջակա գերեզմանատների տապանաքարերի և 9-13-րդ դարերի խաչքարերի ուսումնասիրության միջոցով, որոնք պարունակում են արժեքավոր արձանագրություններ: Սակայն, ամենակործան ժամանակը կարող է փոշիացնել դրանք, ուստի՝ պետական մոտեցում է պահանջվում այդ պատմական հուշարձանների պահպանության և ուսումնասիրությունը գիտական մակարդակով և փայտակերպելու համար: Նկարագրելով ներքին հանգստարանի մի ուշագրավ տապանաքար, տողերիս հեղինակը փորձում է իր լուծման ներդրել այդ բնագավառում և հետաքրքրություն առաջացնել Շուշիում ծաղկում ապրած քանդակագործական արվեստի հանդեպ, որը մի շարք գլուխգործոցներ է տվել մարդկությանը:

Նշենք, որ գերեզմանաքարերի ուսումնասիրությունն առանց չափագրման ոչ ամբողջական է դարձնում հետազոտությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր հետազոտությունից հետո կարելի է եզրակացնել, որ Շուշիում գործել են քարագործ-վարպետների մի շարք դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ոճը:

Հետաքրքրական է նաև, որ մեր օրերի քանդակագործները խուսափում են որպես հումք օգտագործել Շուշիի քարը, ինչը վկայում է նախորդ դարերի քանդակագործական տեխնիկայի գաղտնիքների անվերադարձ կորստի մասին:

Կար ձգտում միատեսակ կամ միաչափ շիրմաքարեր կանգնեցնելու առումով, թեև որոշ մեծահարուստների առանձնացող հսկայածավալ գերեզմանաքարերի առկայությունը երբեմն խախտում է թվացյալ միատարրությունը: Իրականում շիրմաքարերն իրարից տարբերվում են խաչերի, պսակների, ծաղկազարդերի և քնարական բնույթի տարատեսակ պատկերներով ու արձանագրություններով:

Սխեմատիկ նկարներով պատկերված խնդրո առարկա շիրմաքարը, ի տարբերություն կողքին գտնվող Թառույանցների հսկայական երկու շիրմաքարերի, կարող էր այդպես էլ ուշադրություն չգրավել, եթե չլիներ նրա արձանագրությունները: Շիրմաքարի նրբատաշ խաչը դիտելիս, անցորդն ակամայից մայում է դեպի արևելք(ինչը վկայում է, որ չէր խախտվում հայկական թաղումների ավանդույթը՝ աճյունը հողի մեջ ամփոփելիս նրա դեմքը պետք է հառված լիներ դեպի արևելք): Խաչի երկու կողմը զարդարում է հետևյալ արձանագրությունը.

«Խաչ իս եղիցի Մեղապաւ էստ էր»:

Շրջանցելով մատղաշ ակացիաների փուտը, շիրմաքարի աջ երեսին ընթերցում ենք հետևյալը.

«Քաջամարտիկն Իսայ յաղթական փառօջ

Ձիմամն Շամիլ ի պարտութիւն մատնեաց

Եւ յետս դարձոյց զգերեալ զընտանիս

Ճաւաւաւոյզէ Օրբել-վրաց իշխանաց:

1854»:

Հետևի կողմից շրջանցելով շիրմաքարը, որտեղ ոչ մի գրություն չկա, ծախ երեսին ընթերցում ենք.

«Հանգիստ

Հայագիի քաջ զինվորական փոխգնտա-

պետ Իսայայ Յովհաննիսեան Ղրամեանց

ծնի 1821 ամի եւ վախճ. ի 1886 ամի ի 18 մարտի»:

Տապանաքարի տանիքը զարդարող խաչաձևված թրի և պատյանի քանդակի տակ ռուսերեն արձանագրությունն է.

СКОНЧАЛСЯ 18 $\frac{III}{18}$ 86

Պարզվում է, որ իման Շամիլին գերող շուշեցի զենքերալ Յովհաննես Լազարևից բացի, մուլեռանը լեռնականների դեմ կռվել է նաև նրա մի այլ հայրենակից՝ փոխզնգռայատ Եսայի Դրամյանցը(Գրամանը), որի կյանքի ու գործունեության վերաբերյալ առայժմ չի հաջողվել մեզ գտնել որևէ վավերագրի կամ պատմական աղբյուր։ Չի բացառվում, որ Շուշին ցարական Ռուսաստանի բանակին տված լինի այլ նշանակություն, բայց մեզանում թիչ հայտնի զորահրամանատարներ և զինավորակներ։ Սակայն հարթուն որոշակի պարզություն կարող է մտցնել ոչ միայն Շուշիի ներքին, այլև մյուս զերեգնախոնքների արծառագործությունների ուսումնասիրությունը։

НАДГРОБИЕ ПОДПОЛКОВНИКА

А. А. Арутюнян

(Резюме)




Автором показано, что против Имама Шамиля в рядах царской армии воевал не только Иван Лазарьев, но и другой уроженец города Шуши - подполковник Исаи Иванович Грамов. Он, как свидетельствует надгробная надпись на его могиле, разбил Шамиля и освободил из плена семью грузинского князя Орбеля Чавчавадзе.

THE LIEUTENANT-COLONEL GRAVESTONE

A. A. Haroutunian

(Summary)

The author proves that in the tsar army fighting against Imam Shamil there served not only Ivan Lazarev but also another native of Shushi town lieutenant-colonel Isaiah Ivanovich Gramoff. He as it is evident from the inscription on his gravestone routed Shamil and rescued from captivity the family of Georgian Prince Orbel Chavchavadze.



Մակերևույթի գաուսյան կորության կախվածությունը

նրա գեոդեզիկ գծերից

Գ. Ա. Նալբանդյան

Նախ տանք նախնական հասկացություններ , որոնք անհրաժեշտ են

հետագայում:

Ինչպես հայտնի է, մակերևույթի վրա կորագծային կորոդինատների u , v , II քառակուսային ձևերի գործակիցների համար տրվում է այլ նշանակումներ, որոնք նպատակահարմար են հետագա դատողությունների համար ([1])
Այդ նշանակումները հարմար է ցույց տալ աղյուսակային ձևով , այսինքն՝

U	V	E	F	F	G	L	M	M	N	$\vec{r}_u$	$\vec{r}_v$	$\vec{r}_{uu}$	$\vec{r}_{uv}$	$\vec{r}_{vu}$	$\vec{r}_{vv}$
U^1	U^2	g_{11}	g_{12}	g_{21}	g_{22}	b_{11}	b_{12}	b_{21}	b_{22}	$\vec{r}_1$	$\vec{r}_2$	$\vec{r}_{11}$	$\vec{r}_{12}$	$\vec{r}_{21}$	$\vec{r}_{22}$

Նախ գրենք I և II քառակուսային ձևերը նոր նշանակություններով

$$ds^2 = Edu^2 + 2Fdu dv + Gdv^2 = g_{11}(du^1)^2 + 2g_{12}du^1 du^2 + g_{22}(du^2)^2 = \sum_{\alpha=1}^2 \sum_{\beta=1}^2 g_{\alpha\beta} du^\alpha du^\beta$$

$$(-d\vec{r}d\vec{m}) = Ldu^2 + 2Mdu dv + Ndv^2 = b_{11}(du^1)^2 + 2b_{12}du^1 du^2 + b_{22}(du^2)^2 = \sum_{\alpha=1}^2 \sum_{\beta=1}^2 b_{\alpha\beta} du^\alpha du^\beta$$

Հետագա դատողությունների համար պայմանավորվենք, որ եթե միևնույն տառային նշանը գրված է մեկ վերևի և մեկ ներքևի մասում , ապա Σ – նշանը բաց է թողնվում, բայց հասկացվում է գումար, այսինքն՝

$$ds^2 = g_{\alpha\beta} du^\alpha du^\beta \quad (1)$$

$$(-d\vec{r}d\vec{m}) = b_{\alpha\beta} du^\alpha du^\beta \quad (2)$$

$$\text{որտեղ } g_{\alpha\beta} = g_{\beta\alpha} \text{ և } b_{\alpha\beta} = b_{\beta\alpha} \quad (\alpha, \beta = 1, 2)$$

Այժմ $\vec{r}_{\alpha\beta}$ վեկտորներ ($\alpha, \beta = 1, 2$) վերլուծենք ըստ $\vec{r}_1, \vec{r}_2$ և մակրոսյթի նորմալ

միավոր $\vec{m}$ վեկտորների միջոցով, այսինքն ([1], [2])

$$\vec{r}_{\alpha\beta} = G_{\alpha\beta} \vec{r}_1 + G_{\alpha\beta}^2 \vec{r}_2 + d_{\alpha\beta} \vec{m} \quad (3)$$

որտեղ $G_{\alpha\beta}^{\kappa} = G^{\kappa}_{\alpha\beta}$ ($\alpha, \beta, \kappa = 1, 2$)

Դժվար չէ նկատել, որ եթե սկալյար ձևով բազմապատկենք $\vec{m}$ վեկտորով և հաշվի առնելով, որ $(\vec{m} \vec{r}_1) = 0$ և $(\vec{m} \vec{r}_2) = 0$ ապա $(\vec{r}_{\alpha\beta} \vec{m}) = d_{\alpha\beta}$ հետևաբար

$d_{\alpha\beta} = b_{\alpha\beta}$ ուրեմն, կատացվի

$$\vec{r}_{\alpha\beta} = G_{\alpha\beta}^1 \vec{r}_1 + G_{\alpha\beta}^2 \vec{r}_2 + b_{\alpha\beta} \vec{m} \quad (\alpha, \beta = 1, 2)$$

Այս բանաձևերը կոչվում են I-խմբի դերիվացիոն բանաձևեր, կամ I-խմբի Գաուսի

դերիվացիոն բանաձևեր: Այս բանաձևերում $G_{\alpha\beta}^{\kappa}$ գործակիցները կոչվում են

կապակցության կամ խրիստոֆելի գործակիցներ, որոնք հաշվում են հետևյալ կերպ ([1])

$$G_{\alpha\beta}^{\kappa} = \frac{1}{2} g^{\kappa\sigma} \left(\frac{\partial g_{\alpha\sigma}}{\partial u^{\beta}} + \frac{\partial g_{\beta\sigma}}{\partial u^{\alpha}} - \frac{\partial g_{\alpha\beta}}{\partial u^{\sigma}} \right) \quad (4)$$

Ինչպես գիտենք, եթե A-մատրիցան ունի հետևյալ տեսքը

$$A = \begin{pmatrix} g_{11} & g_{12} \\ g_{21} & g_{22} \end{pmatrix} \quad \text{ապա նրա հակադարձ մատրիցան կլինի՝}$$

$$A^{-1} = \begin{pmatrix} g^{11} & g^{12} \\ g^{21} & g^{22} \end{pmatrix} \quad \text{տեսքի, որտեղ } g^{\kappa\sigma} = (-1)^{\kappa+\sigma} \frac{g_{\sigma\delta}}{\det A} \quad (5)$$

$$\text{իսկ } \det A = g_{11} g_{22} - g_{12}^2 \quad ([3])$$

Ինչպես հայտնի է, գեոդեզիկ կորություն է կոչվում կորության վեկտորի պրոյեկցիան շոշափող հարթության վրա: Իսկ S մակրոսյթի գեոդեզիկ գիծ է կոչվում այն կորը, որի յուրաքանչյուր կետում գեոդեզիկ կորությունը հավասար է զրոյի: Նշենք գեոդեզիկ գծերի մի քանի կարևոր հատկություններ

1. Որպիսզի L կորը մակերևույթի վրա լինի գեոդեզիկ, անհրաժեշտ և բավարար է, որ այդ L կորի յուրաքանչյուր կետում, որտեղ $K \neq 0$ գլխավոր նորմալը լինի կոլինյար մակերևույթի նորմալին:

2. Ռեգուլյար մակերևույթի յուրաքանչյուր կետով և ցանկացած ուղղությամբ կարելի է տեսնել միայն մեկ գեոդեզիկ գիծ ([2]):

Ինչպես հայտնի է ; գեոդեզիկ գծերի դիֆֆերենցիալ հավասարումներն են
 ([1])

$$\left\{ \begin{array}{l} \frac{d^2 U^1}{d\sigma^2} + G_{\alpha\beta}^1 \frac{dU^\alpha}{d\sigma} \frac{dU^\beta}{d\sigma} = 0, \quad (\alpha) \\ \frac{d^2 U^2}{d\sigma^2} + G_{\alpha\beta}^2 \frac{dU^\alpha}{d\sigma} \frac{dU^\beta}{d\sigma} = 0, \quad (\beta) \end{array} \right. \quad (6)$$

որտեղ $|\sigma| = S$ և $\alpha, \beta = 1, 2$

Ինչպես հայտնի է , մակերևույթ , որն հանդիսանում է ուղիղ գծերի երկրաչափական տեղ, կոչվում է գծավոր մակերևույթ ծնիչ գծերով:

Եթե գծավոր մակերևույթի միևնույն ծնիչ գծի բոլոր կետերում մակերևույթի շոշափող հարթությունները համընկնում են , ապա մակերևույթը անվանվում է փոփող մակերևույթ :

Այժմ կարող ենք ձևակերպել մեր թեորեմը և ապացուցել այն

Թեորեմ: Եթե մակերևույթի վրա գոյություն ունի գեոդեզիկ օրթոգոնալ ցանց, ապա այդ մակերևույթի գաուսյան կորությունը հավասար է զրոյի

ապացույց : Ենթադրենք, որ $r = r(U^1; U^2)$ մակերևույթի վրա գոյություն

ունի գեոդեզիկ —օրթոգոնալ ցանց, այսինքն ցանցի երկու գծերն էլ գեոդեզիկ են և իրար օրթոգոնալ: Նպատակահարմարության համար այդ ցանցը ընդունենք որպես կոորդինատային ցանց: Քանի որ այդ դեպքում կոորդինատային ցանցի U^1 գծերը գեոդեզիկ են, հետևաբար պետք է բավարարեն (6) դիֆֆերենցիալ հավասարումներին: Ինչպես գիտենք ցանցի U^1 - հավասարումն է

$$\left\{ \begin{array}{l} U^1 = t \\ U^2 = U^{02} = const \end{array} \right.$$

(7)-ից $U^2 = const$ արժեքը տեղադրենք 6 (բ)-ի մեջ կստանանք

$$\frac{d^2 U^2}{d\sigma^2} + G_{11}^2 \frac{dU^1}{d\sigma} \frac{dU^1}{d\sigma} + 2G_{12}^2 \frac{dU^1}{d\sigma} \frac{dU^2}{d\sigma} + G_{22}^2 \frac{dU^2}{d\sigma} \frac{dU^2}{d\sigma} = 0$$

բայց անհայտ է, որ $\frac{d^2 U^2}{d\sigma^2} = \frac{dU^2}{d\sigma} = 0$, ուրեմն կլինի $G_{11}^2 \left(\frac{dU^1}{d\sigma} \right) = 0$ հետևաբար հաշվի

առնելով, որ $\frac{dU^1}{d\sigma} \neq 0$, ապա կստանանք՝

$$G_{11}^2 = 0 \quad (8)$$

(8)-ը տեղադրենք (4)-ի մեջ կստանանք, որ

$$G_{11}^2 = \frac{1}{2} g^{2s} \left(\frac{\partial g_{1s}}{\partial u^1} + \frac{\partial g_{2s}}{\partial u^1} - \frac{\partial g_{11}}{\partial u^2} \right) = 0 \quad \text{կամ, որ գրենք բացված տեսքով, կլինի}$$

$$\frac{1}{2} g^{21} \left(\frac{\partial g_{11}}{\partial u^1} + \frac{\partial g_{11}}{\partial u^1} - \frac{\partial g_{11}}{\partial u^2} \right) + \frac{1}{2} g^{22} \left(\frac{\partial g_{12}}{\partial u^1} + \frac{\partial g_{12}}{\partial u^1} - \frac{\partial g_{11}}{\partial u^2} \right) = 0, \quad (9)$$

հաշվի առնելով որ ցանցը օրթուգոնալ է, այսինքն

$$g_{12} = 0 \quad (10)$$

Մյուս կողմից, ի նկատի առնելով (5) բանաձևը, կստանանք

$$g^{21} = (-1)^{2+1} \frac{g_{12}}{\det A} = -\frac{0}{\det A} = 0 \quad \text{այսինքն} \quad g^{21} = 0 \quad (11)$$

(10) և (11) արժեքները տեղադրենք (9)-ի մեջ, կստանանք

$$\frac{1}{2} g^{22} \left(-\frac{\partial g_{11}}{\partial u^2} \right) = 0 \quad \text{բայց } g^{22} \neq 0 \quad \text{հետևաբար} \quad \frac{\partial g_{11}}{\partial u^2} = 0 \quad (12)$$

Այժմ կատարելով ճիշտ նույն դատողությունները U^2 -գծի նկատմամբ, կստանանք

$$G_{22}^1 = 0 \quad (13)$$

$$\frac{\partial g_{22}}{\partial u^1} = 0 \quad (14)$$

Այժմ գրենք մակերևույթի գաուսյան կորության բանաձևը:

Գաուսյան կորության բանաձևն է՝ ([1])

$$-K = \frac{b_{11}b_{22} - b_{12}^2}{g_{11}g_{22} - g_{12}^2} \quad (15)$$

Այժմ օգտվենք գաուսի պայմանից ([1])

$$b_{11}b_{22} - b_{12}^2 = \frac{\partial^2 g_{12}}{\partial u^1 \partial u^2} - \frac{1}{2} \frac{\partial^2 g_{11}}{\partial u^2 \partial u^2} - \frac{1}{2} \frac{\partial^2 g_{22}}{\partial u^1 \partial u^1} + G_{12}^* G_{12}^* g_{\kappa\delta} - G_{11}^* G_{22}^* g_{\alpha\beta} \quad (16)$$

Այս բանաձևը գրելով բացված տեսքով և հաշվի առնելով (8), (10), (11), (12), (13) և (14) արտահայտությունները կստանանք՝

$$\begin{aligned} b_{11}b_{22} - b_{12}^2 &= \frac{\partial^2 g_{12}}{\partial u^1 \partial u^2} - \frac{1}{2} \frac{\partial^2 g_{11}}{\partial u^2 \partial u^2} - \frac{1}{2} \frac{\partial^2 g_{22}}{\partial u^1 \partial u^1} + G_{12}^1 G_{12}^1 g_{11} + 2G_{12}^1 G_{12}^2 g_{12} + G_{12}^2 G_{12}^2 g_{22} - \\ &- G_{11}^1 G_{22}^1 g_{11} - G_{11}^2 G_{22}^1 g_{21} - G_{11}^1 G_{22}^2 g_{12} - G_{11}^2 G_{22}^2 g_{22} \end{aligned}$$

այսինքն՝

$$b_{11}b_{22} - b_{12}^2 = G_{12}^1 G_{12}^1 g_{11} + G_{12}^2 G_{12}^2 g_{22}$$

Այժմ օգտվենք (4) բանաձևից, կստանանք

$$G_{12}^1 = \frac{1}{2} g^{1\delta} \left(\frac{\partial g_{1\delta}}{\partial u^2} + \frac{\partial g_{2\delta}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) = \frac{1}{2} g^{11} \left(\frac{\partial g_{11}}{\partial u^2} + \frac{\partial g_{21}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) + \frac{1}{2} g^{12} \left(\frac{\partial g_{12}}{\partial u^2} + \frac{\partial g_{22}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) \quad (18)$$

$$G_{12}^2 = \frac{1}{2} g^{2\delta} \left(\frac{\partial g_{1\delta}}{\partial u^2} + \frac{\partial g_{2\delta}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) = \frac{1}{2} g^{21} \left(\frac{\partial g_{11}}{\partial u^2} + \frac{\partial g_{21}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) + \frac{1}{2} g^{22} \left(\frac{\partial g_{12}}{\partial u^2} + \frac{\partial g_{22}}{\partial u^1} - \frac{\partial g_{12}}{\partial u^1} \right) \quad (19)$$

Հաշվի առնելով (10), (11), (12), և (14) արտահայտությունները (18) և (19)

արտահայտությունները վերջնականապես կգառնա հետևյալ տեսքի

$$G_{12}^1 = 0 \quad (20)$$

$$G_{12}^2 = 0 \quad (21)$$

(20) և (21) արտահայտությունների արժեքները տեղադրելով (17)-ի մեջ կստանանք՝


$$b_{11}b_{22} - b_{12}^2 = 0 \quad (22)$$

(22)-ը տեղադրելով (15)-ի մեջ կստանանք

Թեորեման ապացուցված է լրիվությամբ:

Դիտարկենք օրինակ.

Վերցնենք փռվող $X^2 + Y^2 = R^2$ գլանային մակերևույթի վրա պտուտակային գծերը, որոնք իրարից տարբերվում են միայն պտտման ուղղությամբ: Ինչպես հայտնի է, դրանց պարամետրական հավասարումներն են



$$\vec{r}_1(t) = (R \cos \omega t) \vec{i} + (R \sin \omega t) \vec{j} + (at) \vec{k}$$

$$\vec{r}_2(t) = (-R \cos(-\omega t)) \vec{i} + (R \sin(-\omega t)) \vec{j} + (at) \vec{k}$$

Գծագրից պարզ երևում է, որ գլխավոր նորմալը $\vec{n}$ կոլինյար է մակերևույթի նորմալին $\vec{m}$, բայց համաձայն էջ 3-ում (1) հատկության այդ գծերը կլինեն գեոդեզիկ գծեր: Ինչպես գիտենք մակերևույթի վրա եթե կորը տրված է վեկտորական հավասարումով, ապա նրա շոշափող ուղղի ուղղորդ վեկտորը կլինի՝ նրա ածանցյալը ըստ t պարամետրի, այսինքն՝

$$\vec{r}'_1(t) = (-\omega R \sin \omega t) \vec{i} + (R \omega \cos \omega t) \vec{j} + a \vec{k}$$

$$\vec{r}'_2(t) = (R \omega \sin \omega t) \vec{i} + (-R \omega \cos \omega t) \vec{j} + a \vec{k}$$

Կազմենք դրանց սկալյար արտադրյալը և պահանջել որ հավասարվի զրոյի, այսինքն՝

$$(\vec{r}'_1(t) \vec{r}'_2(t)) = -R^2 \omega^2 \sin^2 \omega t - R^2 \omega^2 \cos^2 \omega t + a^2 = 0$$

$$-R^2 \omega^2 (\sin^2 \omega t + \cos^2 \omega t) + a^2 = 0$$

$$\text{կամ } \omega^2 = \frac{a^2}{R^2} \quad \text{կամ } \omega = \pm \frac{a}{R}$$

Ուրեմն բավական է վերցնել $\omega_1 = \frac{a}{R}$ և $\omega_2 = -\frac{a}{R}$ այդ դեպքում համաձայն

ապացուցված թեորեմի կլինի $\nabla K = 0$:

- [1] П. К. Рошевский
[2] И. Я. Бакельман
[3] Д. В. Беклемишев

Курс дифференциальной геометрии
Высшая геометрия
Курс аналитической геометрии и
линейной алгебры

«Մակերևույթի գաուսյան կորության կախվածությունը նրա գեոդեզիկ գծերից»

Գ. Ա. Նալբանդյան

Ամփոփագիր

Աշխատանքում ուսումնասիրվում է մակերևույթի գաուսյան կորության և նրա վրա օրթոգոնալ-գեոդեզիկ ցանցի գոյության կապը: Ցույց է տրված, որ եթե մակերևույթը թույլ է տալիս գեոդեզիկ-օրթոգոնալ ցանց, այսինքն՝ մակերևույթի վրա գոյություն ունեն իրար օրթոգոնալ գեոդեզիկ գծերի երկու ընտանիք, ապա այդ մակերևույթի գաուսյան կորությունը հավասար է զրոյի:

"Зависимость поверхности кривизны Гаусса от ее геодезических линий"

Г. А. Налбандян

Резюме

В работе исследуется поверхность кривизны Гаусса и связь между нею и ортогонально – геодезической сетью. Показано, что если поверхность позволяет ортогонально-геодезическую сеть, то есть на поверхности сосуществуют две семьи взаимно- ортогонально геодезических линий, то на поверхности кривизна Гаусса равно нулю.

"Dependence of the Gauss Curve surface on its geodesy lines"

G. A. Nalbandian

Conclusion

The work studies the Gausse Curve surface and its correlation with ortogonal geodesy net. We have proved that if a surface allows for orthogonal geodesy net, i. e. there are two families of reciprocally ortogonal geodesy lines on it, then the Gauss Curve of the surface is equal to zero.

2002 թ. 1/5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2002 թ. 1/5

ՏՆՍԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Շ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ – ԼՂՀ հարկային քաղաքականությունը ներդրումային միջավայրում	1	+
Կ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ – 1992-2001 թթ. ԼՂՀ-ում իրականացված հարկային ռազմավարության մասին	8	+
Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԼՂՀ բյուջետային համակարգի ծնավորումը և զարգացումը շուկայական տնտեսության պայմաններում	18	-
Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Ներդրումների կառուցվածքը, տեմպը և արդյունավետությունը ԼՂՀ-ում	30	+
Ս. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ – ԼՂՀ-ում հարկային բարենպաստ պայմանների ստեղծումը	36	+
Փիլիսոփայություն և իրավունք		
Ք. Շ. АРУСТАМЯН - Разработка, принятие Конституции России 1993 года и ее содержание	49	+
Շ. Շ. КАРАПЕТЯН – К вопросу о религиозной окраске карабахского конфликта	62	-
Հայոց լեզու և գրականություն		
Հ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ – Նորաբանություններն արցախյան պոեզիայում	66	+
Ա. Կ. ՂՈՒՆՅԱՆ – Պերճ Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպը	69	+
Կ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ – Լեզվական ինքնատիպություն գեղեցիկ ձևի մեջ	74	-
Ն. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ – Համեմատությունը Հ. Պարոնյանի ստեղծագործություններում	80	+
Շ. Պ. ՍԱԴՅԱՆ – Հայկ խաչատրյանի «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավեպի ոճական առանձնահատկություններից	90	+
Ս. Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ – Մ. Սարգսյանի «Կյանքը կրակի տակ» վեպը	94	+
Ռուսաց լեզու և գրականություն		
Կ. Շ. ХАНЯН – Саят-Нова и русские поэты (к 280-летию со дня рождения)	108	-

Մ. Ս. АРУСТАМЯН – Сатирическое изображение врагов армянского народа в романе Ф. Верфеля “Сорок дней Муса-дага”.....	113	+
Р. Н. СААКЯН – Работа над конструкциями на практических занятиях со студентами - нефилологами	123	+
И. Г. АМБАРЦУМЯН – Развитие культуры чтения как одна из основных задач в процессе обучения русскому языку студентов неязыковых групп.....	128	-

Մանկավարժություն և մեթոդիկա

Վ. Ս. ՋԱԲԱՐՅԱՆ – Կապակցված խոսքի ուսուցումը տարրական դասարաններում.....	133	+
---	-----	---

Օտար լեզու

Ա. Յ. АЙРАПЕТАН - Некоторые общие черты словообразования в английском и немецком языках.....	137	+
--	-----	---

Բժշկագիտություն

Լ. Է. АТАЯН – Некоторые генетические особенности периодической болезни у уроженцев Нагорного Карабаха.....	140	+
--	-----	---

Կենսաբանություն

Ս. Ս. ԱՂԱՍՅԱՆ, Ա. Բ. ԱՂԱՍՅԱՆ, Գ. Ռ. ՋԱԲԱՐՅԱՆ – Կրծքով կերակրման և վաղ մանկության շրջանի երեխաների ֆիզիկական աճը և զարգացումը մինչ արցախյան պատերազմը և ներկա ժամանակաշրջանում.....	144	+
--	-----	---

Վ. Տ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Ազդիսի քարանձավի ֆաունան.....	150	+
---	-----	---

Վ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ – ԼՂՀ նախալեռնային և բարձր լեռնային տեղանքում կենդանիների տարածված հեմիինթուլները և նրանց շրջապտույտի ուղիները.....	154	+
--	-----	---

Պատմություն

Բ. Գ. ԲԱԼԱՅԱՆ - Աղվանից կաթողիկոսության ստեղծման նախադրյալները.....	156	+
---	-----	---

Բ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Փոխգնդապետի շիրմաքարը.....	166	+
--	-----	---

Մաթեմատիկա

Գ. Ա. ՆԱԼԲԱՆՂՅԱՆ – Մակերևույթի գաուսյան կորության նախամոնոտոնոր նրա գեոդեզիկ գծերից.....	169	+
--	-----	---

Արցախի պետական լուստարակչություն
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ., N 5

Издательство Арцахского госуниверситета
Степанакерт, ул. М. Гоша N 5

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «ԱրԴՀ գիտական տեղեկագիր» տարբերակնում հրատարակվում են Արցախի լեռնային համալսարանում կատարված օրիգինալ հոդվածներ, հաղորդումներ ու նամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներին:

2. Ընդունվում են նաև ԱրԴՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դոկտոցների նյութեր:

3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված, երկու ինտերվալը մեկ, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով: ՄԶԿ-ից (վերևի ձախ անկյունում), հոդվածի վերնագրով և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտագիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չդնելի է գերազանցի 10 էջ, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:

4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության բաղվածքը այն ամբողջից, որտեղ կատարվել և ըննարկվել է աշխատանքը:

5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (իստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սոփիստակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների տեղերը:

6. Միեւնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, բառակուսի փակագծերում [1,2-5] ըստ հանդիպման հերթականությամբ: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չափերտների, թվականը՝ հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքի դեղքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի ատենախոսությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ՝ օրիգինալով:

8. Հոդվածի տեքստի վերջում ձախ կողմում նշվում է այն ամբողջը կամ լաթորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:

9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале "Ученые записки" АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиофизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.

2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.

3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.

4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.

5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертёжи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.

6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.

7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках ([1,2-5]). В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе-на оригинале.

8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.

9. Статья подписывается всеми авторами.